281.6
Կ

ՍԻՐՄԳԻՐՈՒԹԻՒՆ

ՍԻԱԼՄԱՆՑ ՏԵՏՐԱԿԱՑՆ ԼՍԱՐԱՆԻ

ՀՆԱՐԵԼՈՑ

Ի ԳԱԲՐԻԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԷ

ԱՑՎԱԶԵԱՆ

Ա II 22753

ՏՊԱԳՐԵԱԼ

1865 ԱՄՍ — ՌՑԺԴ։

Ի Ս. ԷՋՄԻԱԾՆ։

ՀԱՅԿ ԻՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ ՑԱՌԱՅՍԿԻ
ՊԱՀԱՆՊԱՏՍԵՆՍԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Մի յայսմ՛հետէ իցեմք տղայք խռովեալք՝ և տատանեալք յամենայն հողմոց վարդապետութեան, խաբէութեամբ մարդկան. խորամանկութեամբ ի խաբէութիւն մոլորութեան։ Այլ ճշմարտեալք սիրով՝ աճեսցուք ի նա ամենայնիւ, որ է գլուխ Քրիստոս։ Եփես. դ. 14։

Գրադ. Ա

Ա.

ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

Որովհետև ըստ հոգևոր պաշտամունս պարտաւորութեան, անխուսափելի հարկ 'ի վերայ կայ՝ որչափ մերովսանն է՝ յուսացեալ յամենաբաւական շնորհս սուրբ Հոգւոյն Աստուծոյ, զգուշանալ անձամբ մերով, և զգուշացուցանել զբանաւոր հօտս Քրիստոսի՝ զմեծահաւատ և զբարեպաշտ ժողովուրդս ուղղափառ սուրբ Եկեղեցւոյն մեր 'ի սխալ վարդապետութենէ և բացադրութենէ ճշմարիտ և օգտիլ բացայայտ բանից սուրբ գրոց, ըստ այնմ՝ թէ՝ ,,Զգոյշ կացէք անձանց և ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչ՝ հովուել զժողովուրդ Ցեռան, զոր ապրեցոյց արեամբն իւրով. Գործ. Է. 28.

Ահա սոյն այս պարտաւորութիւն իմ՝ ստիպեաց զիս նուաստութիւն 'ի ձեռս բերել զլսարան անուն տետրակն՝ յօրինեալս 'ի Գաբրիէլ վարդապետէ այվազեան տպագրեալ 'ի Թէոդոսիայ 'ի Խալիպեան ուսումնարանի.

Այո՝ յայլողեցաւ ինձ 'ի ձեռս բերել զքանի ինչ տետրակս յամի 1861, զորս ուշի ուշով ընթերցեալ՝ գտի 'ի նոսա զիմաստս բանից վարդապետութեան, հակառակ սուրբ գրոց առանդութենց և Հարց սրբոց ողջամիտ և ուղղափառ վարդապետութենց, վասնորոյ առ 'ի զգուշացուցանել զնոյն ինքն՝ զվարդապետն Այվազեան, փութացայ ուղղակի գրել առ նա յորդորական բանս՝ զայս օրինակ.

,,Արժանապատիւ Գաբրիէլ վարդապետ սիրելի մեր, խորհրդաբար և ցաւօք սրտի փութացայ, գրել առ ձեզ, և յիշեցուցանել զբարոյական խրատ երջանիկ առաքելոյն Յակոբայ եթէ՝ ,,Որ ոք գիտիցէ զբարին, և ոչ առնիցէ, մեղք են նմա. Յակ. Դ. 17. Զճշմարիտ վարդապետութիւն 'ի

Պարգևէ շնորհալւոյ ՝ի վերայ սոյն հոգեբուղխ բանից կարէք ընթեռնուլ և ՝ի միտ առնուլ։ Զի՞ պիտոյ է զկարևորագոյնս հոգևորական պաշտօնի մերում զբարի բարի աստուածապարգև տաղանդս ծրարեալ թագուցանել։ և ձեռնամուխ լինել ՝ի մտացածին գործս, կամ՝ հնարել զնորաձայն բանս, սոյնպիսի է հնարեալն ՝ի ձէնջ այն լսաբան՝ յորում ազգարարութեամբ ՁԵՐ հրաւիրին ազգայինք մեր՝ արք և կանայք. սակայն գիտեմ՝ զի ընթերցեալէք զայն հեղինակութիւն գաղղիերէն՝ անուանեալ խարդաւանք Լուտերի Կալվինի և Զվինգլիանոսի թարգմանեալ Յանդրէաս վարժապետէ ՝ի Հայ բարբառ։ զոր ՝ի գրատան ազգային ուսումնարանին Զմիւռնոյ տեսեալ իսկ եմ (անդանօր) վկայէ այս հեղինակութիւնն թէ՝ Լուտեր հնարեաց լսաբան, յորում խոստանայր տալ զազատութիւն հին և նոր կտակարանաց։ բայց ունէր ներքին խարդախութիւն և չարութիւն մտաց։ որով որպէս զմիտս հրաւիրելոցն ՝ի վերա նորոգութիւն եկեղեցւոյն։ որ է բողոքականութիւն։

Սոյնպէս Կալվին և Զվինգլիանոս հնարեցին զխմբարան կամ՝ զժողովարան։ Արդ՝ սիրելի իմ։ սոքա ունէին հնարել և ուսուցանել զվերանորոգութիւն եկեղեցւոյն իւրեանց։ Ուստի զԱստուածաշունչ սուրբ գիրս հին և նոր կտակարանաց՝ ներքին խարդաւանաց իւրեանց դիմակ ունէին։ բայց մեք չեմք կարօտ լսարանի, խմբարանի կամ՝ ժողովարանի. վասն զի չունիմք գաղտնի խարդախական դիտաւորութիւն ինչ։ Ապա զի՞ է մեզ հնարել լսարան, և զհեղինակութիւն Լուտերի և հետևողաց նորին ՝ի վերայ մեր բերել, որովհետև ՁԵՐ Յիսուսի փրկչին մերոյ ունիմք յամենայն տեղիս զաստուածային սուրբ տաճարս. յորս խուռն բազմութեամբ դիմեն բարեպաշտ և ջերմեռանդ ժողովուրդք մեր, և անդանօր ՁԵՐ սուրբ Հոգւոյն Աստուծոյ կարօղ եմք՝ օրշափ մեր ուզեսցուն է. բացատրել զմիտս սուրբ գրոց խորհրդական և բարոյական ուղիղ վարդապետութեամբ, որպէս առնէր, և ուսուցանէր Ճշմարիտ վարդապետն մեր Յիսուս Քրիստոս ՝ի մէջ տաճարին և ՝ի մէջ բազմախուսմբ ժողովրդոց։ և ոչ ՝ի գաղտնի յատկացեալ տեղիս։ որպէս գրեն սրբազան աւետարանիչք. Մաթ. Իզ. 55։ Մարկ. ա. 21. ԺԲ. 35. Ղուկ. ԺԲ. 47. Լ. 37. 38։ Յովհ. է. 28. ը. 20։

Այնպէս և սրբազան առաքեալքն ըստ օրինակին երկնաւոր ճշմարիտ վարդապետին իւրեաց քարոզէին և ուսուցանէին զաւետարանական ճշմարիտ վարդապետութիւնն, ոչ յառաջին վայրի, այլ համարձակ ի տաճարին ի ժողովս հաւատացելոց ըստ քաղաքաց քաղաքաց ժողովրդոց։ Գործ։ Ե։ 21։ Իբ։ 42։ Ա։ Տիմ։ Դ։ 17։

Յաղագս այսորիկ սուրբ Յովհան ասկեբերան ի վեշտասաներորդ ճառի ի բնաբանի երկնիկ առաքելոյն Պօղոսի ,,Զի եթէ աւետարանեմ, ոչ ինչ են ինձ պարծանք, քանզի հարկ ի վերայ կայ. բայց վայ է ինձ, եթէ ոչ աւետարանեմ՝ ա։ Կորնթ։ Բ։ 16։ Գրէ դաքձուցեալ զբան իւր առ ժողովուրդն յասելն՝ Շնորհիւն սուրբ Հոգւոյն Աստուծոյ ոչ երբէք դանդաղեցայ և զլացայ քարոզել զբանն կենաց ա՛ւետարանին ճշմարտութեան ի սուրբ ժողովն Եկեղեցւոյն Քրիստոսի, որ է տեղի սրբութեան և տաճար Աստուծոյ։ Ա՛պա զի՞ պիտոյէ քեզ, և ուստի՞ տարեալ ես թողուլ զարահետ ճանապարհն, և զուղիղ պողոտայն ընթանալ յառաջարն, յընդդունայն վաստակ, և յոչինչ շահ ըստ հոգւոյ։ Ա՛յլ զի՞նչ հարկ ի վերայ մեր կայ, ըստ հոգևոր հովուական պաշտօնի մերում. բարւոք ընթանալ մինչև ըստ սրբազան առաքելոյն Պօղոսի համարձակեսցուք ասել՝ ,,Զբանն կենաց ունիլ յանձինս ի պարծանս ինձ յաւուրն Քրիստոսի, զի ոչ ընդունայն ինչ ընթացայ, և ոչ ընդունայն վաստակեցի։ Փիլիպ։ Բ։ 16։

Զայս ևս հարկ եղև ինձ ազդ առնել Ձեզ և զգուշացուցանել զՁեզ, զի մի գուցէ արատաւորեսցէ այսպիսի գրաւոր աշխատութիւն Ձեր զբարեհամբաւեալն Ձեր զանուն։ Մեք ուշի ուշով ընթերցեալ զառանձինն զառաջինն և զչորրորդ դասս լսարանի Ձերոյ (186)։ զերրորդ և զչորրորդ դասս (1861)։ զոմի ի նոսա բան ինչ հակառակ սուրբ գրոց աւանդութեան և վարդապետութեան սրբոց Հարց։ զորս կամեցայ բացադրել մի ըստ միոջէ, որպէս զի ի գալ ժամանել Ձեր առաջ յայտնել ձեզ զայնս ապացուցիչ, և եթէ կամք իցեն Ձեր՝ ընդ Ձեզ բերջիք զմնացեալ տետրակսն ի քննութիւն, որպէս զի զբարի բարին ժողովեալ ի մի, և զնոտանն ի բաց ընկեսցուք

Ընդ այժմ փոքր ի շատե գրեցաք առ Ձեզ, յուսամք՝ զի ողջամիտ կամք ընկալեալ զայս մեր գրութիւն զգուշասջիք ըստ ամենայնի, ողջ լիր աստուածահաճոյ կենդանութեամբ։ Յ3 Սեպ։ 1861 ամի ի սուրբ Էջմիածին։

Յետ այսր սիրալուսական գրութեան մեր՝ զի՞նչ առնել հարկ և արժան էր նմին, կարի զարմանալի իրք, երկիցս գրութեամբ խոստանայ գալ առ մեզ. և ոչ իսկ կատարել զայն փութայ, մանաւանդ զի ժպիրեցաւ առնել տպախաստ զնրատական բանիւքս մերովք վերստին համարձակեալ տպագրել զնոյն սնալ վարդապետութիւնս իւր՝ յինքնահնար լսարանին, պաշտելով զկամս իւր, և արհամարելով զկարևորն մեր խրատս։ Վասնորոյ ի տեսանելն մեր զնոյն տպագրեալն Լսարան՝ փութացայ սրբագրել առ ի զգուշութիւն մեծահաւատս և հոգեսէր աղգիս լրութեան, որոց վասն ամենեցուն պարտաւորեալ կամ և մնամ հանապազօր աղօթարար։

ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՓՆ ՀԱՅՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

Ի տեսար ա. երես 3. գրէ «Ամէն հին ազգերն ալ ունեցերեն իրանց համար մէկ մէկ սրբազան գիրքեր՝ իրենց հաւատքին բաներն ու վարքի կանոնները անոնց մէջ գրուած։ Այն գիրքերէն ոմանք բոլորովին կորուսուած են, ինչպէս հին Եգիպտացւոց և Հռովմայեցւոց գիրքերը, և ոմանք թէպէտ և մինչև ցայժմ կան՝ բայց խիստ շատ ապացուցներով (իսպաթներով) դիւրին է ցուցնելը, որ այն գիրքերը Աստուծոյ ըսուելու իրաւունք չունին, որպէս են ահա Հինաց, Հնդկաց, Պարսից և Մահմետականաց սուրբ գիրք ըսածները։ Միայն Հրէից և ամ քրիստոնէից ընդունած սուրբ գիրքն է՝ որ իրաւամբ Աստուծոյ կը ճանաչուի։

Պատաքէն զի՞նչ հարկ ի վերայ կայր ի բացադրութիւնս Աստուծոյ սուրբ գրոց հետևեցուցանել զհին մատեանս Եգիպտացւոց, Հռովմայեցւոց, Հինաց, Հնդկաց, Պարսից և Մահմետականաց, որ հեռի իսկ են յԱստուծոյ սուրբ գրոց հին և նոր կտակարանաց. քանզի զի՞նչ մանակցութիւն կարէ ունիլ կամ հաղորդակցութիւն ճառագայթարձակ լուսոյ արեգական ընդ գիշերային խաւարի, ըստ սրբազան առաքելոյն Պօղոսի «Զի՞նչ հաղորդու-

թիւն է արդարութեան ընդ անօրէնութեան. կամ զի՞նչ հաւասարութիւն է լուսոյ ընդ խաւարի, և կամ զի՞նչ միաբանութիւն է Քրիստի ընդ բեղիարայ. կամ զի՞նչ բաժին կայ հաւատացելոյն ընդ անհաւատին, կամ զի՞նչ նմանութիւն է Տաճարին Աստուծոյ մեհենաց,, . Բ Կորն. զ. 14 16։

Այս արդարև այն ամ գրեանք էին մեհենական և կամ դիւցազանական, որք չտային երբէք ծանօթութիւն զաստուածային ճշմարտութենէ, այլ զմիտս մարդկան համոզեալ 'ի ստութիւն և 'ի խաբէութիւն՝ օտարացուցանէին 'ի ճշմարիտ աստուածպաշտութենէ սրբարար և արդարացուցիչ կրօնից։ Այլ միշտ նկրտէին 'ի հետևութիւն ստապատիր մոլորութեց և մոլութեանց, իսկ Աստուածաշունչ սուրբ գիրք՝ հին և նոր կտակարանք, 'ի բաց տարեալ մերժէն իսպառ զմոլորեցուցիչ ուսմունս հեթանոսական մատենից, և զառասպելական ուսմունս սնոտիապատուաստ դիցապաշտից, և առաջնորդեն 'ի լուսաշաւիղ ճանապարհս Աստուածպաշտութեան և յուղղութիւն առաքինական վարուց. ուստի սրբազան առաքեալն Պօղոս գրէ առ Տիմոթէոս աշակերտն իւր «Աստենայն գիրք Աստուածաշունչք և օգտակարք 'ի վարդապետութիւն են և յանդիմանութիւն, և յուղղութիւն և 'ի խրատ արդարութեան, զի կատարեալ լցէ մարդն Աստուծոյ յամենայն գործս բարութեան հաստատեալ,,. Բ Տիմ. Գ. 16. 17։

Որոնեն սխալիմք, սրբազան անուանել զհեթանոսական մոլորեցուցիչ անսուրբ գրեանս, վասն զի

սրբազան բառս ունի զայսպիսի նշանակութիւնս. ՇԾային սրբութեանցն հաղորդեալ և կամ նուիրեալ Աստուծոյ. և կամ Շծարեալ. ուստի գրէ սրբազան առաքեալն Պետրոս «Այլ նախ՝ այսմ գիտակ լինիջիք, զի Շամ մարգարէութիւն իւրոց գրոց լուծումն ոչ ունի։ Քանզի ոչ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ մարգարէութիւն երբեք, այլ Ի Հոգւոյն սրբոյ կրեալք խօսեցան մարդիկք յԱստուծոյ» Բ Պետր. Շ. 20. 21։

Լուսաբերն Գրիգոր Լուսաւորչացի հրեշտակակրօն սուրբ վարդապետն մեր զսրբազան բառս սուրբ գրոց հին և նոր կտակարանաց Ի Հոգւոյն սրբոյ հնչեցեալ խոստովանի գրելով այսպէս «Զ Նորհեա՛ և ինձ մեղաւորիս խօսիլ համարձակութեամբ զկենդանարար խորհուրդ աւետեաց աւետարանիդ, հետևիլ արագաթռիչ ընթացիւք մտաց ընդ անհուն ասպարէզ քոյինաշունչ կտակարանաց»։ Լաբեկ. Լ։ Լուսաբերն Երանելի Ամբրոսեանցի երանաշնորհ վարդապետն մեր սրբազնագիրք անուանէ զՇաշունչ սուրբ գիրս հին և նոր կտակարանաց Ի մեկնութեան Սաղմոսի։

Ապա ուրեմն չէր արժան Հեղինակին Սարանի ասելը թէ։

«Ամէն հին ազգերը աղունեցերեն իրանց համար մէկ մէկ սրբազան գրքեր իրենց հաւատքին բաներն ու վարքի կանոնները անոնց մէջ գրուած»։

Ուրդ յառաջին տետրակին յերես 4. գրէ։

«Իսկ նոր կտակարանին մէջ գրուածէ Քրիստոսի Ցեառն մերոյ մարդելութեան և երկրաւոր կենացը պատմութիւնը»։

Այսպէս՝ զնոսա ի Քրիստոս կեանք երկրաւոր, որով տայ շնորհութիւն մտաց ճանաչել ի մի անձնաւորութիւն Յսի Քրիստի՝ կրկնակի կամաց ներգործութիւնս, որով լինի բաժանել զաճութիւնն ի մարդկութենէն, որպէս բարբանջէր մարդադաւանն Եւտոր՝ ուրանալով զՅսի Քրիստի փրկչին մերոյ զանձնաւորական միաւորութիւն Աստուծեան ընդ մարդկութենն. և ոչ ժանտն Լուտիքէս և Պսղոնարն, որք յանդգնեցան շնորհել և այլայլել զմարդեղութիւն բանին Աստուծոյ, Լուսոյ սուրբն Եղերիս շնորհալի Հայրապետն մեր գրէ զայս ուղղափառ խոստովանութիւն սուրբ Լուսաւորչին մերոյ «Ոչ ըստ Եւտորի ի յերկուս բնութիւնս և ի յերկուս դէմս բաժանեմք զմի Քրիստոս. և ոչ ըստ Լուտիքեայ և համախոյից նորին ի մի բնութիւն ժողովեմք շնորհմամբ և այլայլութեամբ, այլ ունիմք ասել զերկու բնութիւն ըստ մեծի Գրիգորի աստուածաբանին յառ Նազիանզեայ թղթին գրեալ ընդդէմ ապողինարի և որոց ընդ նմա». Թէ բնութիւնք երկու, յաւելու ասել և զպատճառն. քանզի Աստուծ և մարդ միայն. և այս յիրաւի, զի թէ Աստուծ և կամ մարդ միայն ի դէպ էր ասել մի բնութիւն ունիլ, կամ Աստուծ կամ մարդոյ. իսկ յորժամ Աստուծ է և մարդ միացեալ անձառելի խառնմամբ և յանեղապէս, յայտ է թէ՝ աստուծային ունէր բնութիւն և մարդկային, այլ միաւորեալ և անբաժանելի ըստ հոգւոյ և մարմնոյ յեղանակի». Լնդհանր՝ որպէս մարդեղութիւն բանին Աստուծոյ անբաժանելի է յաստուծային

անձնաւորութենէն անշփոթ միաւորութեամբ. ապա անբաժանելի է ամենակալ կենաց նորին յայտնութիւն, որ է երկնային 'ի վերուստ անտի յայտնեալ աշխարհի։ Ուրեմն ոչ միայն սխալիմք յասելն։ «Քրիստոսի չեռան մերոյ մարդեղութեան և երկրաւոր կենացը պատմութիւնը»։

Այլ և հակառակ՝ եթէ գրոց վարդապետել ժպրհիմք։ Լուր սրբազան աւետարանչին Յովհաննու «Որ էն 'ի սկզբանէ՝ զորմէ լուաքն, որում ականատեսք իսկ եղաք, ընդ որ հայեցաքն, և ձեռք մեր շօշափեցին 'ի վերայ բանին կենաց։ Լուս կեանքն յայտնեցան, և տեսաք և վկայեմք, և պատմեմք ձեզ զյաւիտենական կենացն՝ որ էր առ Հօր և երևեցաւ մեզ»։ ՝՝ Յով. ՝՝ 1·2։

Ուշադիր լինցուք և ողջամիտ խորհրդածութեան շնորհալի սուրբ վարդապետին մերոյ Պարգի 'ի վերայար բանի ՝՝ Աւետարանչիս «Այսու բանիւքս ըմբերանէ զդաստ հերձուածողացն՝ որ երկու որդիս ասեն 'ի Քրիստոսի՝ 'ի Հօրէ բնութիւն՝ և զմիւսն 'ի Մարիամայ շնորհաւք՝ այլև այլ բնութիւն։ Լուս ոչ կամեցան իմաստութիւն նայիլ 'ի սքանչելի ՝՝ ծածանութիւն Աւետարանչիս, որ կարգաւորապէս իբրև զմիոյ դիմաց բնութեան առնէ զբանն ասելով «Զձեռք մեր շօշափեցին 'ի վերայ բանին կենաց»։ Որ սքանչելեացս, ոչ 'ի վերայ մարմնոյ բանին, որ շօշափելին էր, այլ 'ի վերայ բանին կենաց, որ անշօշափելին է։ Որ հայհոյիչ, ուր Քրիստոս լեզուն. որ զանձաւ տնօրէնութեան պատմութեան

պատառէ և զմի Քանն յերկուս բաժանէ. «Ձեռք մեր (ասէ) շօշափեցին 'ի վերայ բանին կենաց»։ Այսն զի բանն է մերս, բան է և հրեշտակաց, բայց ոչ այնպիսի բան իբրև զնա, զի նա միայն է կենաց բան, որ Աստուծոյ բան է։ Քանզի մերս բան 'ի շրթանց բղխէ և յօդդ լուծանելի և կորնչի, զնոյն կարծեմ և զհրեշտակացն, զի արարածական բնութիւնք են և նոքա։ Իսկ արարիչ բանն 'ի Հօր շրթանց բղխեալ և 'ի նմին կացեալ մնացեալ և 'ի նմանէ ոչ բաժանեալ։ Այսն զի առ Հօր գոլով խօսեցաւ ընդ մեզ պատգամս գալուն առ մեզ և 'ի Հօրէ ոչ անջատեցաւ։ Աստուծոյ զտիրապէս կեանքն բանին և զանձառ միաւորութիւնն ընդ մարմնոյն 'ի կենաց հացէն եթէ կամիմք՝ ուսանիմք, զոր և ինքնին Տէր մեր խոստովանաբար ասաց «Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր, և ես կեղանի եմ վասն Հօր. և որ ուտէն զիս. և նա կեցցէ վասն իմ»։ Պարզ ընտրեմ. Յով. ձառ ա։

Այսպա կեանքն Քրիստի ոչ էր երկրաւոր, այլ երկնաւոր ճշմարիտ և անեղծական, ամենակալ և ամենաբարի. իսկ մարդկայինս կեանք երկրաւոր և մահացու. ըստ Դրիգորի աստուածաբանի։ յաւուրս։

Յաղագս այսր երկնաւոր ճշմարիտ և անեղծական կենաց Յսի փրկչին մերոյ. գրէ սրբազան առաքեալն Պօղոս. «Յամենայն ժամ զմահն Յսի 'ի մարմինս մեր կրեսցուք, զի և կեանքն Յսի 'ի մարմինս մեր յայտնեսցին։ Քանզի միշտ մեք՝ որ կենդանիքս եմք, 'ի մահ մատնիմք վասն Յսի, զի և

կեանքն Յոի յայտնի լեցին 'ի մահկանացու մարմինս մեր։։ Բ Կորն. Դ. 10. 11։ 'Ի բնաբանի աստ տուրբն Յովհան ոսկեբերան զայս ածային կեանքն Յոի անուանէ անմահ, երջանիկ և երկնային։ Լուր սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն ։։Ոչ 'ի համբաւելն զքեզ կորուսեալ և իբր զերկրաւոր մարմին գողացեալ, համայնաջինջ և ամենասպառ զսերմն բանին կրճատեցեր։ Լար. ԼԶ։ Վակայն տարակուսիմք, եթէ այս ամ առաքելական և հոգեշունչ բանից արդեօք չէ տեղեակ հեղինակն ըսարանին, մի՛ գուցէ ան-հմուտ գրաշարին լցեն յանցանք, որ փոխանակ (ն) տառին լցէ եղեալ զտառն (ր)։ զերկնաւորն առ-ներով զերկրաւոր 'ի վնաս անուան Հեղինակին։ Բանզի յաղագս փրկարար և մարմնառիկ տնօրէ-նութեան Յոի Աստի փրկչին մերոյ աւետարանել կենայն բնաւ երբէք ոչ ասի և ոչ քարոզի երկ-րաւոր, այլ ողջամիտ վարդապետութիւն է խոս-տովանիլ և քարոզել զփրկագործ կեանքն Յոի իսկապէս երկնաւոր և ոչ երկրաւոր, որով տնօ-րինեաց զփրկութիւն ազգի մարդկան, իսկ յորժամ ասեմք երկրաւոր՝ լինիմք հետևող հերետիկոսացն Լուսիքեայ և Լեսսորի և ոչ Աստուածաբանական ճշմարտութեան և Հայրապետական ուղղափառ վարդապետութեանց, որ միշտ աւետարանեալ և փրկագործ կեանքն Յոի՝ երկնաւոր քարոզի։ Լուր վկայութեանցս։ ։։Բանն մարմին եղև և բնակեց 'ի մեզ, և տեսակ զփառս նորա՝ զփառս իբրև զմիածնի առ 'ի Հօրէ, լի շնորհօք և ճշմարտութեամբ։։.

Յովհ. ա. 14։ «Որպէս հողեղէնն նոյնպէս և հողեղէնքս, և որպէս երկնաւորն՝ նոյնպէս և երկրաւորքս։ Այլ որպէս զգեցաք զպատկեր հողեղէնին, զգեցցուք և զպատկեր երկնաւորին». ա Կորն. ԺԵ. 48. 49։ Այս բան սրբազան առաքեալն ինքնին բացադրէ գրելով առ փիլիպպեցիս այսպէս «Այլ մեր առաքինութիւն յերկինս է. ուստի և փրկչին ակնունիմք Տէն Յի Քի։ Որ նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ կերպարանակից լինել մարմնոյ փառաց իւրոց». Փիլիպ. գ. 20. 21։ Ուստի գրէ երանելի սուրբ Հայրապետն մեր Ներսէս Լայեցի.

«Անն անմարմին՝ ըստ էութեան,
եղև մարմին՝ ՀՀմարտութեան.
Օ՛իւրն պահեալ՝ անեղապէս,
և զիմն առեալ՝ ստուգապէս։
Այր այս խառնումն՝ սքանչելի,
Ա՛ծ ընդ մարդ՝ բնութիւն խառնի.
Ոչ էութիւնն՝ փոփոխի,
և ոչ ձևով՝ կերպարանի։
Որպէս ասաց՝ Ժանան Աստուածէս,
թէ ոչ մարմին՝ առ իսկապէս.
Այլ առ աչօք՝ անց ընդ կուսին,
խողովակին՝ նմանապէս։
Կամ կաղապար՝ հրահալելեաց,
որ զբնութիւն՝ ոչ տայ ինքեանց.
Այլ զձևս՝ քանդակեալ,
և զքանակս՝ ենթակայեալ։

Լու ոչ երկուցրն՝ միութիւն,
բաժանելով յերկու բնութիւն.
Լու կամ յերկուս՝ որդիս զմին,
ըստ նեստորի՝ չարաբաստին ։
Լու ոչ մարմին՝ անմտաբար,
որպէս ասաց՝ Ապողինար.
Լիէ անհոգի՝ իւր 'ի բագին,
բնակեաց Աստ՝ բանն 'ի մարմին ։
Արդ՝ յայսպիսեաց՝ փախչիմք 'ի բաց,
իբր 'ի քարբից՝ Լիւնաւորաց.
Հետևելով՝ լուսոյ շաղուաց,
ըստ ուղղափառ՝ վարդապետաց ։
Լու զաւանեմք՝ միութիւն,
ոչ այլայլեալ՝ այնու բնութիւն.
Այլ նոյն որդին՝ որ 'ի Հօրէ,
եղև որդի՝ առ 'ի մօրէ ։
Լու մի ասեմք՝ բնութիւնն այսու,
ըստ խառնման՝ անհաւասարոյ։։ 'ի Յ՚ որ՚՚. երես 201։
Այսպէս սուրբն Գրիգոր նարեկացի հրեշտակակրօն
վարդապետն մեր՝ զ Յ՚ Ս՚ փրկիչն մեր փառաբանէ երկնաւոր գառն, որ վասն փրկութեան մեր
պատարագեցաւ յաճընկալ սուրբ խաչին, և միշտ
պատարագի 'ի սուրբ սեղանս յեկեղեցիս ուղղափառ քրիստոնէից. ։։'ի սխրալի և յանբաւելի արքն
վտակի գառնդ երկնաւորի։։. 'Լար. խը։
։։Բանզի և 'ի դէմս Հոգւոյն սրբոյ՝ այս են աղաչանք, նախընծայ սկզբան զատարագին՝ յորում
գառնդ երկնաւոր զենանի։։. անո. ։գ։ ։։Լու արդ

զի՝նչ քեզ աղերս հաճոյական ՝ի յայսմ և ՝ի սոյն, և ծուխ անուշից ընդունելի խնկոց մատուցից, գո՝ վեալ թագաւոր երկնաւոր Քրիստոս։։ անդ. ծէ։ «Պատցուած նախանձու նորոյս Աստամայ երկնայ՝ նոյ։։ անդ. հա։ Աստ միշտ ՝ի սուրբ գրոց ու՝ սանիմք զի կեանք մեր մարդկային է երկրաւոր, որ՝ պէս գրէ սուրբ Հայրն մեր Գրիգոր լուսաւորիչ Հառ ժբ ՝ի յաճախապատ։։ Օ՛ի երբեւ երկրաւոր կեանքս ՝ի ձեռն մահուան ՝ի գլուխս ելանեն հո՝ գիքն յաղարկին առ ՝ուծ, որ ետ զնա, և մարմին դառնայ ՝ի հող. յորմէ ստեղծաւ Աստուծոյ։։ ժող. ժբ. ղ։

Պատիցուք ապաքէն նկատել զերկրորդ փալանան «Իսկ նոր կտակարանին մէջ գրուածէ Քրիստոսի Ջեռան մերոյ մարդեղութեան և երկրաւոր կենացը պատմութիւնը։։

Այ՛ ապաքէն մարդեղութիւնն Յի՝ փրկչին մերոյ, ՝ուծային խորհրդոցն տեսութիւն և փրկագործ շնորհացն տնօրէնութիւն աւետարան քարոզի և ոչ պատմութիւն, լուր վկայութեանցս։ «Այս քարոզեցցի աւետարանս արքայութեան ընդ ամենայն տիեզերս ՝ի վկայութիւն ամենայն հեթանոսաց, և ապա եկեսցէ կատարած։։ Պատ. իզ. 14։ «Սկիզբն աւետարանիս Յի՝սուսի որդւոյ Աստուծոյ։։ Մարկ. ա. 1։ «Յուցանեմ ձեզ եղբարք զաւետարանն՝ որ աւետարանեցաւ ինէն, զի ոչ ըստ մարդոյ, քանզի և ոչ ես ՝ի մարդոյ առի՝ և ոչ ուսայ յումեքէ, այլ ՝ի յայտնութենէ Յի՝սուսի։։ Գաղատ. 11.12։ «Այս եթէ ընդէր աւետարան կոչեցաւ սա. ըստ

գործոյն նմանագոյն էառ զանուանն, քանզի տայ ա-
ւետիս աշխարհի, եթէ ՝ի յերկրի և մարդիկ յեր-
կինս։ Հրեշտակք բնակակիցք մարդկան, և մար-
դիկք հաղորդ հրեշտակաց զերկայն պատերազմն
քակեալ, զթշնամին ամաչեցուցեալ ՝ճշմարտութիւնն
եկեալ հաստատ,,։ ՝Կեր։ շնորհ։ յառաջ։ ՝ի Մեկն։
Նատ։ Օ սորին ընդարձակն կարէք տեսանել ՝ի
գրաւոր աշխատութեան մեր մակագրեալ Դ։իտո-
ղութիւն ՝ճշմարտութեան ՝սբ Աւետարանին Յի-
սուսի Քրիստոսի։

՝Ի 5 և ՝ի 6։ երես այսր տետրակի գրէ։

,,Մեկ խօսքով, մարդս ալ իրան համար փոքրիկ արարիչն է՝
որ ՝ի ջեղած բաները կդոյացնէ։ ։ ։ ըսել է թէ մարդուս միտքն
ալ արարչական ոյժն՝ զօրութիւնն ունի, և իրաւունք պատկեր
Աստուծոյ։

Զի անհեթեթ նմանութեանս, զիարդ կարիցեն
մարդիկք զամենակարող և զարարչական անուանն
Աշ ստանալ յանձինս իւրեանց։ Օ այսպիսի ան-
համեմատ և անընդունակ գրութիւնս բանից ըստ
ամենայնի մերժէ ՝ճշազգեցիկ բանն՝ երջանիկ մար-
գարէին Եսայեայ ,,Ես եմ Նոյն, որ մխիթարեցի
զքեզ, Ո՞անիր զինչ զք էիր, և երկեար ՝ի մահ-
կանացու մարդոյ և յորդւոյ մարդոյ որ իբրև զխոտ
ցամաքեցաւ։ Եւ մոռացար զՏ՝ զարարիչ քոյ, որ
արար զերկինս և հաստատեաց զերկիր,,։ Եսայ։
ԺՁ։ 12։ 13։ Արիւն դիր և բանիցս մարգարէին Դաւ-
թի, ըստ այնմ ,,Աշ մեծէ։ և Ցէր թագաւոր մեծ
՝ի վերայ ամենայն երկրի։ ՝Ի ձեռս նորա են ՝ամ

տիեզերք երկրի։ բարձրութիւնք լերանց նորա են։ Այրա է ծով և նա արար զնա։ և զցամաք ձեռք նորա ստեղծին։ Եկայք երկիր պագցուք նմա։ անկցուք և լացցուք առաջի Տեառն արարչին մերոյ»։ Սաղ։ ՂԵ։ 3—6։

Եւ ՝ի սոյն միտս համարձակ քարոզեաց Աթենացւոց երանելի առաքեալն Պօղոս «Աստ որ արար զաշխարհս և զամ։ որ ՝ի նմա, նա երկնից և երկրի է Տէր»։ Գործ։ ԺԷ։ 24։ Տեսանելով զաստապարգև հնարագիտութիւն մարդկային մտաց, որ արտադրէ զանազան զարմանալի արհեստակերտուածս, չէ արժան իսկ զարարչագործութեան անուն ասծային տալ նոցա, վասն զի արարիչ անուանն սեպհական է ամենակարողութեան Աստ։ ուշի ուշով ընթերցցուք զՀոգեշունչ բանս ողջամիտ վարդապետութեան սրբազան Հարց մերոց։ նախ՝ առաքելապատիւ նախահայրապետն մեր սուրբն Գրիգոր լուսաւորիչ գրէ «Եւ այսպէս յօրինեալ Աստարչին զնախաստեղծութիւն յարարածս իւր՝ որ երևին և որ ոչն երևին։ Եւ այսր ասի Տէր և իշխան և ժառանգորդ արար զմարդն, և արհեստաւոր երևելեացս մտօք։ Զի յոչնչէ արար զամենայն և թագաւոր կացոյց զմարդն և մեծարեաց։ զի նովածանիցի արարողն և փառաւորեսցի միշտ, և մարդն ծանիցէ զիւր պատիւն յարարչէն, որ յանպատուութենէ ՝ի պատիւ վերաբերեաց զմարդն յամ արարածոց։ Որ արուեստաւոր խելամտութեն՝ որ յարարչէն, կարասցէ ՝ի գործ արկանել զշնչաւորս և

զանձնչաւորս, զի երևեսցի գործ իմաստութեան նո-
ցա ըստ ամի։ Որք 'ի հնազանդութեան են հնազան-
դեալք 'ի Յեառնէ 'ի գործ պիտոյից, և կամ առ
շինութիւն և 'ի զարդ. կամ առ այն ինչ փարթա-
մութիւն։ Յայսոսիկ վայելելով իշխանական ճոխու-
թեամբ փառաւորեսցէ միշտ զբարեգործն։ Զի
այսքան պատիւ տուաւ մարմնաւորացս որպէս հո-
գեղինացն և անմահից անմարմնոց։ Լաւ արար ընտ-
բողս արարչութեան, որ միշտ օրհնեսցեն զնա 'ի
ձեռն եղելոց օրինացն զիրաւանց իշխանականաւքն
հաստատեսցին 'ի հաւատս ճշմարտութեան և ընտ-
րեսցեն զարարիչն և զարարածս 'ի միմեանց, զգալ-
մանիչսն և զգալմանաւորն, զկեցուցիչն ամ կենդա-
նեաց. որովք ընդ զպէտս պիտոյիցն ամենայն արա-
րածոց։ 'ի յաճախ. ճառ. Դ։ Լաւ գրէ «Զի մարդս
հնարագէտ է 'ի խնամակալութէ արարչին 'ի պէտս
իրաց փրկութէ վայելելոյ 'ի բարութիւնն անձնիշ-
խան կամքն». 'ի Յաճախ. ճառ Է։ Լաւ սուրբն
Գրիգոր Նարեկացի հրեշտակրօն վարդապետն
մեր գրէ «Տէր իմ Տէր, տուիչ պարգևաց ինքնա-
բուն բարի, ամենից տիրող հաւասարապէս. միայն
արարիչ զբնաւս յոչէից». Լար. Ը։ Լաւ երանա-
շնորհ սուրբ վարդապետն Լիփրեմ գրէ 'ի մեկնու-
թեան արարածոց «Զի այն՝ որ գիտէ դպրութիւն
ճանաչէ զի՞նչ գրեալէ 'ի մէջ նորա, սոյնպէս նա
է արարիչ միայն, նա ինքնին գիտէ զինչ թաղեալ
կայ յաշխարհի». գլ. ա։ Հերքէ ըստ ամենայնի
զայս նորահնար վարդապետութիւն հանգանակն

հաւատոյ Ներկիոյ սուրբ ժողովոյն «Հաւատամք ՝ի մի Ա՛ծ յարարիչն երկնի և երկրի երևելեաց և ա՛նտեսանելեաց։» Պատգէն կարի անտեղի են յառաջ՝ բերեալ ստորասութիւնքն հեղինակին նա իսկ և մոռացածինք, զի երևիլ տայ ինքեան յայսպիսի յայլ ամենայն գրուածս իբր արարիչ գրելոց իւրոց, մինչ յառաջքան զինքն յօդաւորեալ այնոքիկ բանքն յամանց օտարածին յորդւոց Ներկեղեցւոյ՝ եղծեալք են հարազատ և անտուտ Հնմարտութ՝ սբ և Ա՛ծաբան վարդապետաց. քանզի Ա՛մ արուեստք, գիտութիւնք, ուսմունք, վարժուիք, հրահանգք, ձեռակերտք և պէսպէս յօրինուածք շահավաստակեալքն ՝ի մարդկանէ կարգեալք են առ այն՝ զի զառարկայ ինն ՝ի սկզբնական տպաւորութենէ իւրեանց ածցեն յայլ ինն տարաղ և յեղանակ. վասն շահելոյ նոցա զապրուստ անձնիւր վիճակի, և բարգաւաճ առնելոյ զԱ՛ծատուր շնորհս պարգևեցելոյ մարդկային մտաւորականն կարողութ՝ շնորհեցելոյ նոցին յԱ՛ծ իբր արարչական և նախախնամական մարդասիրութիւն. այլ ոչ թէ մարդիկք կարող են յանձնէ ոչ ստեղծեալ և արարեալ իրս ՝ի նորոգ գոյութիւն ածել, և համարել զինքեանս արարիչ փոքր կամ մեծ ըստ ասելոյ իւրում թէ «Մարդս ալ իրեն համար փոքրիկ արարիչն է, որ չեղած բաները կգոյացնէ»։

Ուրեմն արարչական անունն և պատիւ մնացեալ Ա՛ծ միայն ամենակարողն, ըստ բանի մարգարէին «Օ՛ի նա ասաց և եղեն, հրամայեաց, և հաստատեաց

ցան»։ Պաղ։ Ճխր։ 5։ Իսկ հեղինակն դարձցի ա-
նուանել զանձն իւր փոքր արարիչ ամ գրելոց իւ-
րոց և տրամախոհութեանց։

ԳԼՈՒԽ Բ։

Ընթերցեալ մեր ևս զայս երկրորդ տետրակն
լատրանին երես 18։ գտաք անդանօր զայս սխալանս
«Բայց կամեցաւ ասէ, որ առաջ ինքը մարդն ալ հասկանայ ի-
րեն դերազանցութիւնը, ճանչնոյ իրեն աստուածանման բնու-
թեանը յարդը (խելքիմը) ուրիշ արարածներուն նայելով»։

Սակայն արժան է հարցանել հեղինակին, եթէ
յո՞ր բանից՞ սբ գրոց և յաստուածաբանութեանց Հարց
սրբոց ուսեալ համարձակեցաւ զեղական և զմահ-
կանացու բնութիւնն համեմատ քարոզել անեղա-
կան և անմահ աստուածային բնութեանն, լուիցուք Աստ-
ուծոյ գրոց բանից «Աստպէս ասէ Աստուած թագաւոր
իսրայէլի։ որ փրկեաց զնա Աստուած զօրութեանց։ ես
առաջին՝ և ես առ յետոյ։ բաց յինէն այլ ոչ գոյ
Աստուած։ Որ է իբրև զիս։ յառաջ կացցէ, ձայն տացէ,
պատմեսցէ և պատրաստեսցի ինձ, յորմէ հետէ արա-
րի զմարդն յաւիտեն, և որ ինչ գալոցն իցէ, մին-
չև եկեալ իցէ, պատմեսցեն ձեզ»։ Եսայ։ խդ։ 6։ 7։

Ի սոյն միտս գրէ սրբազան առաքեալն Պօղոս
«Եւ դու տէր՝ ի սկզբանէ զերկիր հաստատեցեր՝
և գործք ձեռաց քոց երկինք են, նոքա կորնչին՝ և
դու կաս և մնաս, ամենեքեան իբրև զձորձս մաշեց-
ցին, և իբրև զվերարկուս՝ գալարեսցես զնոսա իբրև

զհանդերձս. և գալարեսցին. բայց դու նոյն ես, և ամք քո ոչ պակասին,, . Եբր. ա. 10—12։

Եւ առաքելապատիւ լուսաւորիչն մեր սուրբ Գրիգոր ի մարգարէական և յառաքելական գրոց առեալ քարոզեաց մեզ. Հայտնի է իմաստնոց սեց, որք ունին զգիտութիւն գրոց սրբոց մարգարէից և առաքելոց և վարդապետաց, եթէ՝ մի է բնութիւն ամենասուրբ Երրորդութեան, զօրութեամբ և փառօք և մշտնջենաւորութեամբ։ Անփոփոխ ճշմարտութիւն, կեանք և կեցուցիչ մարդկան և ամենայն կենդանեաց,, . ի յաճախ. ճառ Ե։ Ասա այսմ ճշմարտութեան ճշային անսահման բնութիւնն է անսկիզբն և անվախճան։ Իսկ զնմանդ կարասցուք զեղական և զմահկանացու բնութիւնս մեր անուանել ճշանման բնութիւն, սոսկալի սխալանք. Հաւատամք զի Աստային բնութիւնն է անփոփոխ իսկութիւն, իսկ մարդկային բնութիւնն միշտ է փոփոխական. տես զայսոսիկ վկայութիւս. ,,Ի սկզբանէ տեր զհիմունս երկրի հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են, նոքա անցանեն և դու կաս և մնաս յաւիտեան. Ամենեքեան որպէս զհագուս մաշեսցին, որպէս զվերարկուս փոխեսցես զնոսա, և փոխեսցին, բայց դու նոյն իսկ ես, և ամք քո ոչ անցանեն,, Սաղ. ճ ա. 26։ ,,Այս եմ տեր ճշ ձեր՝ և ոչ խոսիմ,, . Սաղ. ՁԳ. 6։ ,,Մի՛ խաբիք եղբարք իմ սիրելիք. զի ամ տուրք բարիք և ամ պարգևք կատարելք ի վերուստ են իջեալք առ ի հօրէն լուսոյ. յորում չիք փոփոխումն և կամ

շրջելոյ ստուերս։» Յակ. ա. 16. 17։ «Որբև ասաց զանձառ և զանհաս պարգևացն՝ զոր պարգևեաց իւրոց արարածոց, և եթէ յոր վայր բարձրուէ տարեալ կացոյց զմեզ, սկսանի այնուհետև զանհետասքնելի բնութիւնն այ նկարագրել՝ և ուսուցանէ անփոփոխ գոլ զնա և անայլայլելի. յորում չիք ասէ փոփոխումն։ Այսինքն յիւրում էութեան բնութեան և բարձրութեան, յորում էր և է, մշտնջենաւոր ի նմին կայ և մնայ անփոփոխելի. որ յառաջագոյն նուաստ գոլով և յերկարութենէ ժամանակացն աճեցեալ յիշխանութեանն յապաղանօք եկն ի լրումն։ Այս ոչ դարձեալ յերկարագեալ յայսոսիկ փոփոխի խնարհի ի նուաստութիւն։ Որպէս մերս բնութիւն յար ի շարժման կայ և ի փոփոխման։ Ի մանկութենէ ի ծերութիւն. ի տկարութենէ ի զօրութիւն։ Այս դարձեալ փոփոխմամբ յառաջինն դառնայ. վասն զի՝ այս կիրք հոսանուտ և եղական բնութեամբ վայելէ, և ոչ անեղ և մշտնջենաւոր բնութեանն։» Արգ. շնորհ. Յակ. ճառ ը։ «Ի՞նչ է բնութիւն և գոյութիւն ամենասուրբ Երրորդութեան, և իւր է ինքնութիւն և յիւրմէ գոյութենէ։ Օ՛ի՛ սկզբանց ունի ըզպատճառն գոլ Հայր զորդւոյ և զսուրբ Հոգւոյ։ Իսկութիւն անծին և էութիւն անսկիզբն և մշտնջենաւորութիւն անսահման և ճշմարտութիւն անփոփոխ։» Ի Յաճախ. ճառ ա։ Արդեօք ուստի՞ եղև Հեղինակին սխալել ընդ այս և ասել վասն աստուածային բնութեան՝ ծածանման բնութիւն։ Մի

ՀԱՅԿ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ԳՈՒՆԴ ՍԵՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆԻ
ԱԿԱԴԵՄԻԱ

գոնցէ առանց ուշադրութեան նկատեալ իցէ զբանն Յիսուսի գրքոյն. թէ՝ «Լուս ասաց ՅԾ արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան». Ծն. Ա. 26։

Սակայն այսու բանիս ըստ սրբոյ Հարց պարտիմք ճանաչել եթէ ազամային մեր բնութիւն ոչ զԾածանման բնութիւնս ստացաւ, այլ զհոգևոր շնչոյն էօրութիւն և զշնորհս բանականութեան, և զազատ կամս իշխանութեան, զչարն 'ի բարոյն ընտրել և իշխել 'ի վերայ ամենայն կենդանեաց։ Որպէս վկայեն սուրբ Հաբակ. լուր սրբոյ հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչի. «Խակ արդ ոչ ստեղծականի զինքն օրինակ դնիցէ և զկաւն դրոշեալ ՅՍ պատկերաւն ձևիցէ, զոր և ասեն իսկ, թէ՝ ըստ պատկերի ՅՍ արար զնոսա։ Լսա՝ ասաց բանս, յառաջացոյց պատմութիւն հանդերձելոցն, ապա անց յառաջակայն և 'ի լինելոյն նշմարեցուցանէ, և էր որ անդէն. իսկ մօտալուտ առաջոյ 'ի նոյն 'ի նմին ժամանակի դէմ յանդիման ցուցանէ, զի տեր 'ի պատկեր ՅՍ արար զնա, մի վասն իմաստութեան բանաւորութեան հոգևոր շնչոյն, զոր շնորհեաց առաւելութիւն։ Գիտել, ճանաչել, իմանալ, և 'ի միտ առնուլ զամենայն շնորհաց զԾածակիր զԾածատուր իմաստութիւնն և իշխել 'ի վերայ ամենայն երկրաբուղխ երկրածին ստեղծուածոցն, և զդիտութիւն յառաջ գիտութեան, և կացոյց զնա տեր ՅՍ. . . . Լուս մի վասն այսորիկ ասէ նմա, վասն զի իշխանական կամացն իշխանութեան

զի յայ յամենագործութիւն և յայ յամենակարողութիւն երկու արարածք պատուական և արգոյք եղեալ հաստատեցան 'ի բարերարէն. մարդիկ և հրեշտակք. արդ զմարդիկ թողեալ 'ի կամս անձնիշխան կամաց, վասն զի իւրով կամաւք անձին իշխանութիւն գիտացեալ ընդ բարեացն գործոց ընորհս 'ի բարերար տեառնէն և յարարչէն, և եղեալ առաջի նորա զգիտութիւն պատուիրանաց հաճոյից աստուծոյ, զի գիտասցէ խոյս տալ 'ի չարէն, և զբարին ընտրեալ իւրոց կամացն լաւութիւ, իբրև յինքեան քաջութենէ, որով անձնիշխան կամաւք յարարչէ անտի զիւրոյ վաստակոց առեալ ըստ փոխարէնս պատուեսցէ,, . Յ Գլուխ : Լ սուրբ Գրիգոր Նարեկացի գրէ. ,,Որ արարեր 'ի քո պատկեր պանծալի 'ի ձեռն վեհիդ տպաւորութեան, զտկարս օժանդակելով : Զարդարեցեր բանիւ, փայլեցուցեր փչմամբ, մտօք ճոխացուցեր, խմաստիւք աճեցուցեր, հանճարով հաստատեցեր, 'ի ընչականացն որոշեցեր, հոգւով իմանալեաւ խառնեցեր, իշխանականին գոյիւ պճնեցեր,,. Գլ. Ե, ,,Լ զի ստեղծուած ձեռաց կոչեցաւ վասն պատուի փառաց մարդոյն ասաց, թէպէտ և 'ի պատմել գրոցն, ասաց թէ ա՛ռ հող և ստեղծզնա : Զ'ի սովորութիւն է գրոց զկատարեալ այ, գործ ասել, որպէս այն զի ասէ ,,Արդ պատկեր այ է, ոչ զբնութեան ասէ, այլ զիշխանութիւն աղաստութեան նորա ասաց կերպարան,,. Եւ Լ փրեմ. 'ի մեկն արարածոց. Գլ. ա : ,,Զամ ինչ տեսանէ

և լսէ ՅԾ և զննէ. եւ և զմարդոյս զգայարանս, ո-
րովք նմանի ՅՍ, այլև զի իշխան և թագաւոր կա-
ցոյց զսա իւրում թագաւորութեան պատկեր, այլ
ըստ իշխանութեան պարտ է իմանալ։։ Ալարդ.
պատմ. Ի մեկն. արարածոց։ Ապաքէն ասասանօր
ունի իրաւունս Հեղինակն ըստ բանին տեսարակացն
տեսլոյ եթէ չունին մարդիկ զՅԾային նմանութիս
ստանալ. և կերպարանակիցք արարչին հանդիսա-
նալ և անզուգական փառօք փառաւորիլ Ի հոգի։
Որում պատասխանեմ սուրբ գրոցն վկայութեամբ,
այո՛, նախ՝ բարոյականապէս ունին ՅԾանմանութիս
սեպհականել յանձինս իւրեանց՝ առաքինացեալ
ըստ կամաց աստուծոյ. երկրորդ երանական կե-
նաց հաղորդին ՅԾային անՀառելի փառացն, զառա-
ջինն հաստատեմք հետևեալ վկայութեամբքս.
«Ապրդ եղերուք դուք կատարեալք որպէս և հայրն
ձեր երկնաւոր կատարեալ է։։ Մատ. Ե. 48։
«Նմանողք եղերուք Յայ իբրև որդիք սիրելիք, և
գնացէք սիրով. որպէս և Քրիստոս սիրեաց զմեզ և
մատնեաց զանձն իւր վասն մեր պատարագ և զե-
նումն Յ Ի հոտ անուշութեան։։ Եփես. Ե. 1. 2։
«Ես եմ տէր Աստուած ձեր, և սրբեսջիք և սուրբք
լինիջիք, զի սուրբ եմ ես տէր աստուած ձեր, և
մի՛ պղծիցէք զանձինս ձեր։։ Ղևտ. ԺԱ. 44։
«Ըստ սրբոյն՝ որ կոչեաց զձեզ, և դուք սուրբք
յամենայն գնացս ձեր լինիջիք։։ Ա Պետ. Ա. 15։
«Ոչ յիշեմ ասէ ամենևին զառաջին անսրբութիւն,
չաղարտեմ զանմաքրութիւնն, չեպերեմ զյանդգ-

նութիւնն չարեացն, չածեմ զմնաս զհեղգութի՛ բարիս։ Այսմ հետէ յորմէ ծանուցայ ձեզ և կո-չեցի. սուրբ և մաքուր լերուք յառաջին աղտե-ղութեանց։ Ի՛ բաց ընկեցէք զպոռնկութիւնն. ի՛ բաց ընկեցէք զագահութիւն, զերկրորդ կռապաշտու-թիւնն, մերկացարո՛ւք զորովայնագիտութիւն, զար-բեցութիւն, զյափշտակութիւն, զատելութիւն, զոխակալութիւն, զնախանձ, և զայլ ամենայն զա-նազանութիւն ախտից նորին՝ միանգամ այսոցիկ մասին են։ Ոչ ասն այսպիսի ախտք երբէք յիս ո՛չ կրին, այլ սոցին հակառակն, սրբութիւն և հե-զութիւն. քաղցրութիւն և խոնարհութիւն, մար-դասէրութիւն և ողորմութիւն, որովք այսոքիւք և դձեզ կամիմք տպանալ։ Ա՛ռ զիմն ի՛ ձեզ նկա-բագրել կերպարան. իմն գոլով դուք պատկեր, ո՛չ կամիմք զօտարին ի՛ ձեզ կրել կերպարան, ո-րով խանգարի պատկերն և ոգեղանայ գեղեցկութի՛ և ժանտանայ սրբութիւն։ Ա՛ռորին ուղղաւ զիմն առաջի դնեմ ձեզ կերպարանս, զի յիս նայելով, զնման օրինակն յանձինս ձեր գրեսջիք։ Ա՛յս է ա-սելն «Ա՛ղերուք սուրբք, զի ես սուրբ եմ»։ Պարգ. ընորհ. ա՛ Պետ. Ճառ. գ։ Ա՛ռկրորդն և-ս հաստատի հետևեալ վկայութեամբս. «Ա՛ր կոչեաց զմեզ յիւր փառն և վայելչութիւն։ Որովք մե-ծամեծքն և պատուականք աւետիք պարգևեալ են մեզ, զի նովքիմբ ա՛ծեղէն բնութեանն լինիցիմք հաղորդակից.ք, փախուցեալք ի՛ ցանկութեց աշխար-հի և յապականութեանց»։ Բ՛ Պետ. ա՛. 3. 4։

«Մի՛ երկիւղ այժմ որդիք ՝ի ելք, և չէ ևս է յայտ, եթէ զինչ լինելոց եմք, գիտեմք զի յորժամ նա յայտնեսցի, նման նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա՝ որպէս և էն։ Եւ ամենայն որ ունի զայս յոյս յանձին, սրբէ զանձն իւր, որպէս և նայն սուրբ է»։ Յով. Ա.Թ. Գ. 2. 3։ «Ունիք ինչ բարձրագոյն փառք և մեծագոյն երանութիւն կամի ուսանիք, քան զնա իւրական փառաւքն լի բովանդակ տեսանել, քանզի այն է արքայութիւնն, այն է վերին քաղաքին և առագաստին հանգիստն, այն իսկ է անճառ բարիքն և անպատում երանութիւնն։ Ընդարձ բիւրապատիկ երանութեան և անեզրական խնդութեան արժանաւորք են, որք աչալրջութեամբ զտեսիլն զայն տեսանեն, և առանց ամօթոյ և պատկառանաց հային յերանելի յերեսն Աստուծոյ։ Եւ բիւրապատիկ ողջոյ տրոտաստաց արժանաւորք են այնոքիկ՝ որք յայնմ տեսլենէ զրկին. քանզի՝ այն է ահագին և անտանելի տանջանք քան զտանջանսն գեհենին, և քան զայլ ամ դառնագոյն տեսակս տանջանաց յերանելի տեսութենէ Աստի զրկիլ և յերեսացն աստուծոյ անկանիլ»։ Արգ. Շնորհ. Յով. Ճառ Ը։ Պապքէն եթէ ոք կամեսցի՝ թէ զինչ է ՃՃանմանութիւնն՝ ընթերցցի Ընդանմանութիւն անուանեալ զմատեանն, յորինեալ ՝ի բազմարդիւն Պետրոս ՃՃաբան Եպիսկ Նախիջևանեցւոյ տպեալ ՝ի Կալկաթայ։

ԳԼՈՒԽ Գ.

Մեք ստանօր փութացուք զերրորդ տետրակին սկսալմունսն ուղղել, որ ըստ ՅՄի հակառակին սուրբ գրոց. գլխ յերես 29։

«Ադամ դրախտին դուրս ելելէն ետքը երկու որդի ունեցաւ, Մկրտն անունը կայնն դրաւ, Մկալինը Ապել, կայնն անունը ստացուածք, այսինքն ունեցած բան կնշանակէ. Ադամ այս անունը դնելով իր առջենէն զաւակին, իրեն ուրախութիւնը յայտնեց, նախ՝ անոր համար որ ազգական մը ունեցաւ իրեն, երկրորդ՝ որ կայենի ծնանելովը հաստատեցաւ իր յոյսը, թէ ուրեմն՝ եթէ ո՛չ այն զաւակը՝ նորա սերունդէն մէկը փրկիչ պիտի լինի ազգի մարդկան, և ստանայէն իր խաբուելու վրէժը պիտի առնու։

Օրինչ հարկ հեղինակիս՝ ի բաց թողուլ զորհնեալ և զսուրբ սերունդն աբրահամու և դաւթի՝ և մեծարել զանիծեալ և զչար սերունդն եղբայրասպան կայենի, ըստ այնմ. «Վասն արդ անիծեալ լիջիր դու ի վերայ երկրի. որ եբաց զբերան իւր ընդունել զարիւն եղբօր քոյ ի ձեռաց քոց». Ծնն. Դ. 11։ «Որժեցաւ ի նմանէ անիրաւն իւրով բարկութեամբ, ընդ եղբայրասպան սրտմտութիւնսն կորեաւ». Մատթ. Ժ. 3։ «Կայէնն ի չարէ անտի էր. և սպան զեղբայր իւր, և յո՞յր սակս սպան զեղբայր իւր, զի իւր գործքն չար էին և եղբօրն բարի». Ա Յով. Գ. 12։ «Ի չարէն ասել զնա, բաղում տարացոյցս օրինակաց դնի առաջին, զի կամ անէծս ծնողաց ասէ չար, եթէ անիծից ծնունդ էր նա՝ նորին աղագաւ և գործս անիծաբերս գործեաց։ Որ օրինակ ծառ դառնարմատ

ըստ պիտանոյն բերէ զպտուղն, նմանապէս և նա դառնարմատ գոլով, և դառնագոյն ընծայեաց զպտուղ։ Եւ կամ դարձեալ 'ի չարէն ասել զնա, այսինքն 'ի բանսարկուէն։ Օ՛ի զոր օրինակ որ գործս արդարութեան գործեն յաստուծոյ են, նոյնգոնակ և որ զգործս անօրէնութեան առնեն, 'ի բանսարկուէն են։։ Պարգ. շնորհ. Յով. Հառ. զ։

Երբեմ թէ Հեղինակն միշտ զբաղեալ լինելով 'ի զանազան պաշտօնս չէ կարողացեալ յուշաբերել զիծաղունչ բանս սուրբ գրոց հին և նոր կտակարանաց, զորս մեք առ այժմ փոքր 'ի շատէ պարտ յանձինս վարկանիմք յառաջ բերել, եթէ Յա՛ի Աստի աքանչելի և երկրպագելի ծնունդն է՝ 'ի տանէ Դաւթի Որդւոյն Յիսուսայ և Աբրահամեան տոհմէն։ Լսակ չար և անիծեալ սերունդն վերջացաւ ջրհեղեղաւ, տես ոչինի ջրհեղեղին զի՞նչ օրհնութիւն շնորհէ Աստուած մեծի նահապետին Աբրահամ։ «Յանձն իմ երդուայ, ասէ Տէր, փոխանակ զի արարեր զբան զայդ, և ոչ խնայեցեր յորդիդ քո սիրելի վասն իմ այո՛ օրհնելով օրհնեցից զքեզ, և բազմացուցանելով բազմացուցից զաւակ քո իբրև զաստեղս երկնից բազմութիւն, և որպէս զաւազ առ ափն ծովու, և ժառանգեսցէ զաւակ քո զքաղաքս հակառակորդաց իւրոց։ Եւ օրհնեացին 'ի զաւակի քում ամենայն ազգք երկրի, փոխանակ զի լուար ձայնի իմում»։ Ծնն. իբ։ 16—18։ «Աստ տէր մեր կայ և ճոյայ զօրութիւն նորա, զի երկրպագութեամբ հնազանդեցան ամ

աղեաք երկրի, որպէս երկրորդեաց մեզ առաքեալ
'ի վերայ Սահակայ։ Աստացաւ, (ասէ), Աբրահամու
քեզ և զաւակի քում, ոչ զաւակացն իբրև բազ-
մաց այլ իբրև 'ի վերայ միոյ, զի է զաւակ նը նա
ինքն Քրիստոս։։ սուրբ Լուսաւորիչ, 'ի մեկն։ ապա-
ցածոց։ Գլ։ Է։ «Լու բղխեսցէ գաւազան յարմա-
տոյն Յեսսեայ, և ելցէ ծաղիկ յարմատոյ, և հան-
գիցէ 'ի վերայ նորա Հոգի Աստուծոյ, հոգի իմաս-
տութեան և հանճարոյ, հոգի խորհրդոյ և զօրութեան,
հոգի գիտութեան և ՝ծպաշտութեան։։։ Լու ճա-
րակեսցի գայլ ընդ գառին, և ինձ առ ուրուս մա-
կաղեսցի, և արջ և ցուլ և առիւծ 'ի միասին ճա-
րակեսցեն։ և մանուկ մատաղ ածցէ զնոսա։։ Լասայ
ԺՁ։ 1—6։ «Յարոյց նոցա զԼաւիթ թագաւոր։ ո-
րում և ասացաւ վկայութեամբ, գտի զԼաւիթ
որդի Յեսսեայ այր ըստ սրտի իմում, որ արասցէ
զամենայն զկամս իմ։ 'ի սորա զաւակէ Աստուած
ըստ աւետեացն յարոյց Աստուած Իսրայէլի զփրկ-
կիչն Յիսուս։։։ Գործ։ ԺԳ։ 22։ 23։

Զ՞նչ խօսի աւետարանիչն՝ զմիածնէ որդւոյ
այ հանդերձեալ է ճառել, և զԼաւիթ 'ի մէջ բե-
րէ։ զայր մի՝ որ յետ բազում ժամանակաց եղև,
այլ դու հանդարտ լեր, և մի՛ զամենայն այժմ
խնդրեր։ Բանզի ոչ զառաջին ծննդենէն՝ որ ան-
պատմելին, պարտ է մեզ, զի զայսմանէ Լասայի ասէ,
«Թէ զազգատոհմն նորա ո՞ պատմեցէ, այլ զայս։
որ յերկրի աստ եղև, նա և ոչ զայս հնարէ բռվան-
դակ ճառել, զի անկարելի է բանիս։ Լաև այս-

քան և եթ ցուցանել եթէ Ճշմարտիւ որդին այ
յանձն էառ լինել որդի մարդոյ, զի զՀողեղէնդ
արասցէ որդի աստուծոյ։ Լու յորժամ լսիցես,
թէ որդին այ եղև ըստ մարմնոյ որդի Դաւթի և
Աբրահամու՝ մի՛ յերկուանայցես. եթէ դու որդի
Աստամայ ոչ լինիցիս շնորհօք որդի այ, զի ո՞չ ի զուր
ինչ եղև գալուստ նորա, եթէ ոչ հանդերձեալ
էր մեծ ինչ գործել, ծնաւ ըստ մարմնոյ՝ զի դու
ծնցիս ըստ հոգւոյ, ծնաւ ի կուսէն, զի դու ծնցիս
յաւազանէն. վանայատրիկ և ծնունդ նորա է
նման մերումն, և է ի վերս քան զմերս. ի կնոջէ ծր-
նանելն այս մեզ անկ է, և ի կուսէն և առանց ա-
ռնլն, այն բնութեանս ստեղծողին է, որպէս ինքն
հոգեւորապէս ծնաւ ըստ մարմնոյ ծնունդ, ծնա-
նեմք և մեք ըստ հոգւոյն զվերստին ծնունդն,
Ալեր. Հնորհ. ի Արեկն. Պատ. Ճլ. ա։

Գ. Լ Ի Ս Գ.

Ի չորրորդ տետրակի աստ գրէ երես 43։
Լսող կայ թէ իրենց մկ մեքն ալ այս էր, որ եթէ յանկարծ
նորէն ջրհեղեղ պատահելու լինի, այն բարձր շենքին կամ աշ-
տարակին (Խուշմին) վերայ ելլեն ու ազատին։։
Խալեալ է և յայսմ Հեղինակն, քանզի եթէ ու-
շի ուշով նկատեալ էր ի տեսութիւնս ածաշունչ
սուրբ գրոց, ոչ այս օրինակ տարտամ և երկբա-
յելի թողոյր զնորհրդածութիւն սուրբ Հարց է-
րանելեաց. որք կրկին դիտաւորութեան տեսանեն
ի չարաժողով արս ի ձեռնարկութիւն շինութեան

մեծատարած քաղաքին և երկնաբերձ աշտարակին, զմին՝ 'ի յայտնել նոցա զատելութիւնս ընդդէմ երկիւղածացն ՅԻ և զհպարտութիւն յատելն «Լ՝ կայ ք շինեցուք մեզ քաղաք ։ և զմիւսն, 'ի հնարել ապահովութիւնս ընդդէմ կասկածանացն ՅԾատասան ջրհեղեղի, յատելն «Լ՝ աշտարակ որոյ լինիցի գլուխ մինչև յերկինս»։ Ծնն. Ժ.Ա. 4։ ՎՀա այս իմաստ սուրբն Յովհան ոսկեբերան բացայայտ առնէ, եթէ՝ զինչ դիտմամբ կամեցան շինել քաղաք և աշտարակ «Յանդուգն և ՅԾընդդէմ ժպրհութեան արանց միաբանելոց 'ի չարիս, քաղաք ասեն շինեցաւ մեզ, ահա սոսկալի մնապարծութիւն, և աշտարակ առ ինչ, առ 'ի ապաւինել նմա 'ի ջրհեղեղէ»։ Ոսկ. 'ի Ճառն։ ՎՀա ազգ մի և լեզու մի. գրէ և հնորհալի վարդապետն մեր Ա՝ արդան 'ի մեկնութեան արարածոց. «Լ՝ խորհեցան շինել քաղաք և աշտարակ, քաղաք զատելութիւնս յայտ առնէ, և աշտարակ զերկիւղն 'ի ջրհեղեղէ, յայն ապաւինեցան և ոչ յաստուած»։ Յայսոսիկ ուղիղ միտս գրէ սուրբն Ելեսէս հնորհալի.

«Վանզի նման գոլով նոցին,
որք զաշտարակն շինեցին.
'ի քաղանէ մեծ 'ի դաշտին,
և յաշխարհի բաբելոնին։
Որ 'ի ջրոցն հեղեղին,
եթէ գայցէ՝ այլ պահեսցին.
կամ թէ յերկին վերանալ,
հպարտութեամբն խոնարհին։

Մինչև հնչեալ հողմոյ ուժգին,
հոգւոյ հնչումն սաստկագին.
քակեաց զլերինքս հպարտին,
և զաշտարակն այն ահագին;
Այլ զլեզուսն միակին,
զայն խառնակեաց յեսթանեսին.
զի մի՛ ի՛ չար միաբանին; ի՛ ՀՅՆ որդի,
«Այլ իբրև չոգան զշատ աւուրս, և ահա՛ ծով
լայնանիստ անջրպետեալէր զնա յերկրէ և դարձան
անտի խորհելով ի մնոտիս. եթէ վասն մեղաց ջուրն
աւերեաց զերկիր, և անց ծովն ի մէջ դրախտին,
և մեղքն այն այսօր գտանի ի մեզ. և ո՛չ պակասէ
յաշխարհէ։ Այլ ահա՛ եկայք շինեսցուք մեզ աշ-
տարակ պահել զմեզ ի գալ պատուհասի մեղաց
ջրոյ»։ Ա՛ՐԴԱՆ ԲԱՐՁՐԲԵՐԴԱՑԻ, Ի ՏԻԵԶԵՐԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ,

Ի ԹՂԹԱՀԱՄԱՐԻՆ 48 գրէ վասն Մելքիսեդեկ
քահանայի, յորմէ օրհնեցաւ Աբրահամ. Ծն.
ԺԴ. 18։ զորմէ տայ մեզ լուսին ծանօթութիւն
սրբազան առաքեալն Պօղոս յասելն. «Այս Մելքի-
սեդեկ Թագաւոր էր Սաղիմայ, քահանայ ՅՕՅ բարձ-
րելոյ, որ ելն ընդ յառաջ աբրահամու, յորժամ
դարձեալ գայր ի կոտորածէ Թագաւորացն և օրհ-
նեաց զնա, որումն և տասանորդս յամէ ետ Աբրա-
համ, նախ՝ Թարգմանի Թագաւոր արդարութեան,
ապա Թագաւոր Սաղիմայ, որ է Թագաւոր խաղա-
ղութեան, անհայր՝ անմայր՝ չհամարեալ յազգս, որ

ոչ սկիզբն աւուրց, և կատարած կենաց. նմանեալ որդւոյն աստուծոյ՝ կայ մնայ քահանայ մշանջենաւոր։» Եբր. Է. 1—3։

Այսու զգերազանց մեծութիւն Մելքիսեդեկի ցուցանէ առաքեալն. քանզի յանձն նորա տպաւորեալ կայր գերազանց օրինակն Յի. Քի. փրկչին մերոյ, այս է յաւիտենական ծնունդն ի Հօրէ ամենակալէ ըստ աստուածութեան, և ըստ մարդեղութեանն ի կուսէն Մարիամայ՝ ըստ Ալեքսանդրացոց։ Այս ամենայն վերատուութիւնք Մելքիսեդեկի օրինակ էին արդար և աստուածորդւոյն փրկչին մերոյ Յի. վասն զի Յիսուս Քրիստոս բնութեամբ է անմայր՝ իբրև զաստուած, անսկզբնաբար ծնունդ Հօր այ, և անհայր՝ իբրև մարդ ի կոյս մօրէ ծնեալ չհամարեալ յաղգս, ըստ որում աստուած և որդի այ, չունի երբէք ազգահամարութիւն, զի աստուային ծնունդ անհասանելի է մտաց, և ոչ ի մարդկանէ բնապէս ճանաչելի, ուստի անհասելի և սքանչելի ծնունդ բանին այ ոչ կարէ մտանել ի թիւ բնական ազգահամարութեան։ Յես և այլ գերազանց նմանութիւն Յի. Քի., զոր Մելքիսեդեկ յանձին իւրում կրէր ըստ անուանակոչութեան թագաւոր Սալէմայ, որ է թագաւոր խաղաղութեան։

Մելքիսեդեկ զայս ամենայն խորհրդական անուանս կրէր, իբր օրինակ ճշմարտութեան ընդհանրել յայ, բայց իսկական արդիւնքն և ներգործութիւնքն ի Յիսուս Քրիստոս ճշմարտեալ կատարեցան, վասն զի Յիսուս Քրիստոս եղև մեզ արդարացուցիչ

և սրբութիւն մեր՝ երկնաւոր պարգևօքն և սրբապարար խորհրդովն մարդեղութեան, և արար խաղաղութիւն սրբարար և հաշտեցուցիչ կամաւորն չարչարանօք, և փրկարար արեամբն և խաչելութեամբ ընդոհիւ, ըստ այնմ. «Օ՛ի՛ նմանէ դուք էք՝ ի Քրիստոս Յիսուս, որ եղև իմաստութիւն յմեզ, արդարութիւն, սրբութիւն և փրկութիւն». Ա. Կորն. Ա. 30։ «Այս է խաղաղութիւն մեր, որ արար զերկոսեան մի, և միջնորմն ցանկոյն քակեաց զթշնամութիւն՝ ի մարմնի իւրում». Եփես. Բ. 14։

Այսպէս կարի յանդգնութիւն է զազգաբանութիւն Մելքիսեդեկի յառաջ բերել, զոր՝ ի լուութեան եթող նախամարգարէն Մովսէս, չիշելով զհայր նորա և զմայր և զազգ։ Վասն զի զխորհրդաւոր տեսութիւնն չունէր ազդեցութիւն՝ ի հոգւոյն սրբոյ ճառել զազգաբանութենէ նորին։ Ուստի որք միանգամ արտաքոյ սուրբ գրոց առասպելաբանութիւնք են, մերժելիք են և ոչ յօգտելի՝ ի բացատրութիւնս ՅԾ-աշունչ սուրբ գրոց։ Այսպէս զինչ հարկ՝ ի վերայ կայր Հեղինակին տետրակացն լսարանին գրել եթէ։

«Այսպիսի պատմութեանց չինծու եղածը ապացուցի կարօտ չէ։ բայց մենք երբեմն անոր համար կպատմեմք։ որ իմացուի թէ՝ սուրբ գրոց պատմութեանը մէջ ալ դուրսէն սուտեր խառնուիլը նոր բան չէ։ բայց պէտք չէ որ հաւատացեալքս խարուինք։ ու չկարենանք սուտը ճշմարտէն զատել։ այլ զգուշանանք։

Յայս բան Հեղինակն կարծիս տայ պարզամտաց, եթէ՝ ի մէջ սուրբ գրոց ներմուծեալ են սուտք և շինուածոյք և առասպելականք։ քանզի անորոշ

և տալտամ է գրեալն թէ։

«Պուրբ գրոց պատմութեանը մէջ ալ դուրսէն սուտեր խառնուիլը նոր բան չէ»։

Ոչ էր սխալեալ եթէ ասէր գտան և գտանին սը-տայօդ բանք մտացածինք և անտեղիք, և պատմութիւնք հակառակ սուրբ գրոց Ճշմարտութեան, յորոց զգուշանալ պարտ է, և ոչ թէ 'ի լարանի անդ առ բարեմիտ ժողովուրդս քարոզել համարձակ և հրատարակել տետրակաւ թէ.

«Պուրբ գրոց պատմութեանը մէջ ալ դուրսէն սուտեր խառնուիլը նոր բան չէ»։

Ուստի բասրեալիք են այսօրինակ դրութիւնք բանից, զի են շփոթիչք մտաց, քան թէ օգտակարք։

ԳԼՈՒԽ Ե։

Ելտանօր գրէ յերես 56·57։

«Ճշմարիտ է որ աստուած փորձի կարօտ չէր, բայց արբահամ կարօտ էր այն փորձութիւնը քաշելու, որ հաւատքը հաստատուի, ու մարդկային ազգը կարօտ էր այն օրինակ մը ունենալու աչքին առջևն, որ հասկնայ թէ աստուած իրաւունք ունի թէ որ կամենայ մեզմէ ասոր նման զոհեր պահանջել, վասն զի կարողէ անոնց տեղը ալ մեր վարձքը հարիւրապատիկ հատուցանել։ Եւ ահա այսպիսի օրինակէ սիրտ առած՝ խիստ շատ մարտիրոսներ իրենց սուրբ հաւատքին ետ չկենալու համար կեանքերնին դրին, ոմանք ալ իրենց սիրելի զաւկնեներուն նահատակութիւնը յորդորող և խրատուող եղան՝ ինչպէս Մակաբայեցւոց ժամանակը երանելի Շամունէ, որ իրեն եօթն հատ կորիւ տղոցը նահատակութիւնը աչքին առջևտեսաւ, ու անդանօր յորդորանք կուտար ամէն մէկուն, որ ամուր կենան իրենց հաւատքին վերայ։ Նմանապէս երանելին Յուդիտայ՝ որ իրեն ծաղկահատակ զաւկին նահատակութիւնը աչքով տեսաւ, ու փառք տուաւ աստուծոյ։ և ուրիշ շատ նահատակք քրիստոնէական սուրբ հաւատոյ, որոց ամենուն հոյր և օրինակ կհամարուի մեծահաւատն Աբրահամ։

Այս ամենայն բանք յաւէտ տարակուսութիւն և շփոթութիւն տան մտաց ընթերցողաց և ուն-կնդրաց, քան թէ՝ ուղիղ և ճիշտ տեսութիւն ՝ի գրոց առաջի առնեն, յորմէ յայտնի երևի՝ զի հեղինակն լսարանին, չէ երբէք սրտի մտաք ուշադիր եղեալ իմաստից սուրբ գրոց, և չէ կամեցեալ զհետ երթալ ուղիղ վարդապետութեանց սրբազան Հարց եկեղեցւոյ, այլ միայն ըստ իւրոց քմաց փութացեալ է վարդապետել։ Այժմ հարցանեմ զնա, գրես նախ։

«Եթէ ճշմարիտ է, աստուած փորձի կարօտ չէր»։

Այս ես ասեմ ցքեզ. ապա ընդէ՞ր սուրբ գիրքն վկայէ «Փորձեաց Յ՚Ի զաբրահամ, և ասէ ցնա, աբրահամ աբրահամ, և նա ասէ ահաւասիկ եմ, և ասէ ցնա առ դու զորդիդ քո զսիրելի, զոր սիրեցեր՝ զ Լսահակ, և գնա՛ դու յերկիր բարձր, և հանցես զդա անդ յողջակէզ ՝Ի վերայ միոյ լերանց, յորոց ասացից։ » (Ծնն. իբ. 1։

Այս աստուածաշունչ սուրբ գրոցն անժխտելի տեսութիւն ևս պարտաւորէ զմեկնաբանս, և զվարդապետս, ուղիղ և բացայայտ պարզաբանել, և ոչ զանցառութեան տալ իբրև անպիտան ինչ խորհրդածութեան, ըստ որում Հեղինակն տեսրակին համարձակեալ է, միայն գրելովն այսպէս.

«Ճշմարիտ է որ աստուած փորձի կարօտ չէր»։

Այստանօր պարտ համարիմ հարցանել ցՀեղինակն լսարանին, ապա վասն էր գրեալ է «Փորձեաց Յ՚Ի զաբրահամ. » (Ծնն. իբ. 1։ Այս ասէ տէր ցՄովսէս

ահա ես տեղացից ձեզ հաց յերկնից, և ելցէ ժողովուրդ իմ, և ժողովեսցեն զօրըստօրէն, զի փորձեցից զնոսա, եթէ գնայցեն յօրէնս իմ, և եթէ ոչ։։ Ելից. ԺԶ, 4.

«Փորձեսցէ զձեզ տէր Աստուած ճանաչել եթէ սիրեցէք զտէր ՝ի ամենայն սրտէ ձերմէ, և յամենայն յանձնէ ձերմէ։։ Օրինաց, ԺԳ, 3.

«Փորձեցեր զմեզ Աստուած և քննեցեր, որպէս և քննի արծաթ։։ Պաղ. ԿԵ. 10։

Տեսեր՝ զի աստուած փորձեաց զնախահարս մեր, զսիրելիսն իւր։ Այլ զայս սքանչելի փորձէն այ չէ արժան իմանալ մարդկօրէն և տգիտաբար, որովք սխալիմք յոյժ, վասն գրի սրբազան Աստուածաշունչ։ Յանկոբոս «Ամի ոք որ ՝ի փորձուէ ասցէ թէ յաստուծոյ փորձիմ, զի աստուած անփորձ է չարաց, փորձէ նա և ոչ զոք։։ Կաթ. Ա. 13։ Այլ զի՞նչ տան մեզ իմանալ սբ գիրք զփորձէն այ յայտնաբանելովն։ Նախ զի փորձէն Աստուծոյ անվրէպ գիտելն և անսխալ ճանաչելն խորհրդոց մտաց և սրտից, որ և ըստ Հարտատանիցն ասի փոխանուն՝ զի անուն պատճառին դնի փոխանակ անուան գործոյն։ Ա այս գրէ սուրբն Գրիգոր Ծաբան «Այս աստուած փորձէ, ոչ առ ՝ի քննել և իմանալ, զի ինքնէ սրբտագէտ ամենայնի, այլ անվրէպ ստուգագոյնս գիտելն քարոզի։։ Զոր որս։ Զհա լուր վկայութեանցս «Դէր փորձեցեր զիս և ծանեար զիս, դու ծանեար զնստիլն և յառնելն իմ։։ Պաղ. Ճլը. 1։

«Այ՛ եթէ որպէս տեսանիցէ մարդ, տեսանէ աստ-

ուած, զի մարդ հայի յերեսս, և աստուած հայի
'ի սիրտս։։ Ա. Թագ. Ժ. 7։ «Ոչ ապաքէն ինքն
տեսցէ զճանապարհս իմ, և ամենայն գնացք իմ
թուեսցին։։ Յոբ. Լ. 4։ «Այս տէր քննեմ զսիր-
տս, և փորձեմ զերիկամունս, տալ իւրաքանչիւր
ըստ ճանապարհաց իւրոց, և ըստ պտղոյ գործոց
իւրոց։։ Յրեմ. Ժէ. 10։

Յրկրորդ փորձէ աստուած մարդասիրութեամբ
զսիրտս առ 'ի ընտիր կացուցանել, և շնորհաց իւ-
րոց ընդունակ։ «Փորձեցեր զմեզ աստուած և
քննեցեր, որպէս արծաթ։։ Սաղ. Կէ. 10։ «Որպէս
փորձի 'ի բովս արծաթ և ոսկի, նոյնպէս ընտրէ
զսիրտս ՀԱԾ։։ Յառակ. Ժէ. 3։ «ՅՀԾ փորձեաց զնոսա
և եգիտ իւր արժանիս, իբրև ոսկի 'ի բովս քննեաց
զնոսա։։ Իմաստ. Գ. 5։ «Փորձեցից զնոսա որպէս
փորձի ոսկի, նա կարդասցէ զանուն, իմ և ես լուայց
նմա, և ասացից, ժողովուրդ իմ է սա, և նա ա-
սասցէ Տէր ՅՀԾ իմ ես դու։։ Զաք. Ժգ. 9։

Յերրորդ փորձէ աստուած զհաւատարիմ ծա-
ռայս իւր. զի յայտնի արասցէ ամենեցուն զհաս-
տատ հաւատս և զՀԾսիրութիւնս նոցին։ «Զի՞նչ
է փորձելն ՀՍ, ո՛չ թէ նորանոր գիտել և ճանա-
չել. զի յՀՍմի է սրտագէտ, այլ կամի զի ծառայից
իւրոց արդիւնք և գործք ՀԾսիրութեան քարո-
զեսցի յՀՍմի։ Որպէս եղև երանելոյն Յոբայ արդ-
արոյն, և մեծի նահապետին Յբրահամու։։ Ակ.
'ի ճառ. Յոբայ։

Յամենայն ազգն իսրայէլի յայտնի հռչակեալ է

աստուածային ընդհանուր սքանչելի գործ ճշմարտութեան և ճշմարտութեան մեծի նահապետին Աբրահամու, քանզի մինչ տիրանենգ խորթացեալք ի յաճախանոյ գործոց նորին, Հրեայքն պարծէին ի ներկայութեան Յոի Աստի փրկչին մերոյ, և համարձակեալ անպատկառ ասէին «Օտակ Աբրահամու եմք... Հայր մեր Աբրահամ է». յայնժամ յանդիմանեաց զնոսա Յն Աստ փրկչն մեր յասելն «Եթէ որդիք Աբրահամու էիք՝ զգործս Աբրահամու գործէիք» (Յով. ը. 33—39)։ Ի տերունական բանից աստի առեալ գրէ սուրբն Յովհան Իսկեբերան «Ի փորձեաց զԱբրահամ. այս է ընտիր և հաճելի իւր բարեխնամ կամացն հանդիսացոյց զամ գործս ճշմարտութեան և ճշմարտութեան Աբրահամու։

Յայս պարբերութիւնս բանից գրէ Հեղինակն Սարանին թէ։

«Զշմարիտ է՝ որ ատուած փորձի կարօտ չէր, բայց Աբրահամ կարօտ էր այն փորձութիւնը քաշելու, որ հաւատքը հաստատուի».

Ըստ ամի սխալ դատողութի. երևի թէ ի զանազան գործս զբաղեալ գոլով միտք Հեղինակին՝ չէ յիշեալ զվկայութիս սբ գրոց. զի Աբրահամ նախ քան զպատրաստելն ի պատարագ զորդին իւր զնսահակ ըստ հրամանին Աստ՝ ունէր հաստատ հաւատս առ Աստ և կարի սրտի մտօք հնազանդութի անժխտելի հրամանին Աստ. և այն պատրաստութիւն յողջակէզ որդւոյն իւրոյ սիրելւոյ, ըստ սբ գրոց արդարև էր գործ հաստատուն հաւատոյն։ Ուր վկայութեան

ցրս։ «Հաւատաց Աբրահամ Աստծոյ. և համարեցաւ նմա յարդարութիւն»։ Ծն. ԺԵ. 6։

«Որ անցեալն յուսով հաւատաց լինել նմա հայր ազգաց բազմաց, որպէս և ասացաւն թէ՝ այնպէս եղիցի զաւակ քո։ և նա ոչ երկմտեաց ՚ի հաւատոցն. թէպէտ և հայեցաւ ՚ի մարմին իւր այնուհետև իբրև ՚ի մեռեալ. քանզի զհարիւր ամենիւք ուրեմն էր։ և ՚ի մեռելութիւն յարգանդին Սարրայի։ Խոցց յաւետեացն Աստուծոյ ոչ երկմտեաց անհաւատութեամբ, այլ զօրացաւ հաւատովք, ետ փառս Աստուծոյ, և հաստատեցաւ ՚ի միտս իւր, եթէ որ խոստացաւն՝ կարող է առնել։ Վասն այսր համարեցաւ նմա յարդարութիւն»։ Հռովմ. Դ. 18—21։

Ի վերայ այսր բանի սրբազան առաքելոյն Պօղոսի խորհրդածեալ՝ գրէ սքն Յովհան Որոտեբերան «Զորք մեծամեծ արգելք կային, առաջին՝ զի անցեալ էր իրն և անօրինակ. Աբրահամ ոչ ունէր զայլ ոք՝ յորում տեսեալ իցէ ՚ի ծերութեան զաւակ ըստանալ. որպէս յետոյ եղեալքն ունէին օրինակ զԱբրահամ։ Երկրորդ՝ մեռեալ մարմին Աբրահամու. երրորդ և չորրորդ ամլութիւն և պառաւութի Սարրայի։

Եւ ՚ի վերայ այսոցիկ ոչինչ նշանք տուեալք առ Հայր ՚ի հաստատութի խոստմանն. այլ բանք լոկք. որք խոստանային զայն ինչ, զոր բնութիւնն ոչ խոստանայր։ Սակայն ՚ի մէջ այնչափ ծփական ալեաց ոչինչ տատանեցաւ նաև հաւատոյ երանեալ նահապետին»։

Ալրեմն կատարեցն նահապետին Աբրահամու զանժխտելի հրաման Աստ՝ ոչ բնաւ համարի անձինն փորձութիւն, և ոչ նոր ի նորոյ զհաստատութիւն հաւատոյն ստացաւ. զոր ի վաղուց անտի ի սիրտս և ի միտս իւր գանձեալ ունէր, այլ յորժամ ետհան զորդին իւր զմիածնակն ի սեղան առ ի պատարագել ըստ հրամանին Աստ՝ էր իսկ և իսկ յայտնի գործ և պտուղ կատարեալ հաւատոյն և Ջերմեռանդն սիրոյն առ ՅԾ. ուստի գրէ սրբազան առաքեալն Յակոբոս «Աբրահամ հայր մեր ոչ ապաքէն ի գործոց արդարացաւ. հանեալ ի սեղան զորդին իւր զմիածնակն պատարագ»։ Տեսանես զի հաւատքն եղեն գործակից գործոց նոցա, և ի գործոց անտի հաւատքն կատարեցան. Եւ կատարեցաւ գիրն՝ որ ասէ, «Հաւատաց Աբրահամ յԾ, և համարեցաւ նմա յարդարութիւն, և կոչեցաւ բարեկամ Աստուծոյ»։

Տեսանէք զի ի գործոց արդարանայ մարդ և ոչ ի հաւատոց միայն. Յակ. Բ. 21—23։

«Խազում առաքինութիւնք էին արդարոյս այսմիկ. նորին աղագաւ ևս բազմապատիկ վկայութիւնս ձրգեաց յինքն յԾ։ Եւ սկիզբն այնր ՅՄ հաւատն եղև. սակայն ոչ առանց գործոց։

Օ՛ի յարարածոց ասի զարարիչն Հանաչէլ ի հաւատոցն էր, բայց թողուլ զհայրենի գաւառն և հեռևիլ զվնի ձայնին Աստ՝ գործոցն։ Խոստմանցն ՅՅ յերկար ժամանակս ակն ունիլ՝ հաւատոցն էր, իսկ նժդեհութիւն կալ և մնալ ի սարգևական երկ-

լին, և զՀիւրասիրութեան բարին առ ամենեսին ծաւալել՝ գործոցն էր։ Ուստի յանգէտս և ըզ-հրեշտակն ընկալաւ։ Օ՜ աւետիս ծննդեանն խսա-հակայ ընդունիլ յոյնպիսում ծերութեան ժամանակի՝ հաւատոցն էր։ Իսկ 'ի սեղան հանիլ զնա՝ գործոցն։ Ուստի և զբրինակս եդ առաջի։ Ո՛չ ասպ-քէն ասէ, Աբրահամ հայր մեր 'ի գործոցն արդարացաւ. հանեալ 'ի սեղան զիսահակ սպասարագ» Յարգ. ընդհ. Ճառ. Է. Յակ. ա, 21։

Այս գոլ յայտնիկ պարբերութեան յայտնի սը-խալանս՝ որ հակառակ իսկ էր աւետարանական բանից Յիսուսի Քրիստոսի, քանզի վասն պատարաստութեան Աբրահամու առ պատարագել զորդին իւր զԻսահակ, ասէ մարդկային ազգի օրինակ լինել գրելովն այսպէս։

«Մարդկային ազգը կարօտ էր այսպիսի օրինակ մը ունենալու աչքին առջևն, որ հասկնայ թէ աստուած իրաւունք ունի թէ՝ որ կամենայ մեզմէ ասոր նման զոհեր պահանջել»։ Լայն Լայն։

Յիմարական և տարօրինակ նմանութիւն և ածական մարդասիրական բարերար կամացն իսկ և իսկ հակառակ, վասն զի այն մեծի նահապետին Աբրահամու գործն պատարագելոյ զորդին իւր զԻսահակ էր իսկական օրինակ՝ որոյ փոխանակ զենուխոյն խորհրդական կախեալ զծառոյն Աբելեկայ 'ի փրկութիւն Իսահակայ, որ ըստ վերնախնամ մարդասիրական տնօրէնութեան եղև նշան և օրինակ փրկագործ խաչելութեան փրկչին մերոյ Յի՛սուսի Քրիստոսի, որով փրկեցան և փրկին հաւատացեալք 'ի յաւիտ-

տենական մահուանէ սկզբնական մեղաց։ Զ ասնորոյ տիրանենդ Հրէից կամեցաւ Յիսուս փրկիչ մեր յիշեցուցանել զայս օրինակեալ գործ Աբրահամու ասելով «Աբրահամ հայր ձեր ցանկացաւ տեսանել զօր իմ, եւ տեսն և ուրախ եղև»։ Յով. ը. 56։ Ի տերունական բանիս գրէ սուրբն Յովհան Սկեբերան «Ինձ այսպէս թուի թէ զխոյին ասաց, նախատես եղեալ Իսահակ ի պատարագել խոյին»։ «Աբրահամու մեռեալ Իսահակ յայնօրէ հետէ, զի ասաց նմա ՏԾ, մատո դու զնա ինձ պատարագ, և մեռեալ բարձեալ ասնէր զնա Թաղել, այլ կենդանանալով կենդանացաւ նա յաւուր երրորդումն ի տեղւոջ մահուան իւրոյ։ Զինչ պիտոյ էր, զի կախիցի խոյն զԾառոյն, եթէ ոչ առակ օրինակաց նկարեաց մեզ»։ սուրբն Լիմբրեմ. ի մեկն. արար. գլ. Է։

«Մտեղծիչ սրտից Տէր առանձին,
տեսօղ գործոց և խորհրդին.
ի փորձ մտեր առ սիրելին,
պատարագել քեզ զամբարդին։
Լրթեալ ի մեծ բարձր լերին,
ի գողգոթայ որպէս ասեն.
բառնալ զվայտ ողջակիզին,
իւր միածին ողջախոյին։
Զոր և հանեալ ի սեղանին,
որպէս զքեզ տերդ ի խաչին»։ Յե որդի։

Հանին արտաքս իբր զողջակէզ, կախեցին իբր զխոյն Աբեկայ ձգեալ զեղջերուոյն՝ տարածեցին

'ի սեղան խաչին իբր զպատարագ։։ Լարեկ. էջ։

Ահա վասն այսպիսեաց բարբարոս աղգաց և ապստամբողաց յաԾային բարերար կամաց իրաւամբ գրեալ են սպառնալիքս «Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէիր զմարգարէսն և քարկոծ առնէիր զառաքեալսն առքեզ, քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո, զորօրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թեւովք, և ոչ կամեցայք։ Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ։ Մատ. իգ. 37։ Ղուկ. ժգ. 34։ «Այստասպարանոցք և անթլպատք սրտիւք և ականջք դուք հանապազ հոգւոյն սրբոյ հակառակ կայք. որպէս հարքն ձեր և դուք։ Զո՞ր 'ի մարգարէիցն ոչ հալածեցին հարքն ձեր, և սպանին զյանտիկ՝ որ յառաջագոյն պատմեցին վասն գալստեան արդարոյն, որոյ դուք այժմ մատնիչք և սպանողք եղէք։։ Գործ. է. 50։ Իսկ զսոսկալի պէսպէս չարչարանս և զանտանելի վշտակրութիւնս, և ՀԱԾԱՀԱՃՈՅ նահատակութիւնս սրբոց մարտիրոսաց երջանիկ վկայիցն ՀԱԾԱՅԻՆ ՀՐՇՄարտութեան, սարդ և մեկին նկարագրէ սրբազան առաքեալն Պօղոս յասելն. «Այս կէսք զտանջանաց և զգանից զփորձ առին, զկապանաց և զբանտից։ Քարկոծեցան, սղոցեցան, փորձեցան, սպանմամբ սրոյ մեռան, շրջեցան լեզկ մաշկօք և մորճովք այծենեօք կարօտեալք, նեղեալք, չարչարեալք, զորս ոչ արժէ աշխարհս, յանապատի մոլորեալք և 'ի լերինս և յայրս և 'ի փապարս երկրի։։ Եբր. ժա. 36—38. Ահա յոյժ զնաազանեցաւ այսու ամենայն

բանիւք սուրբ գրոց պատարագն Աբրահամու 'ի սոսկալի տանջանաց և 'ի մարտիրոսական մահուանէ սրբոյ վէրայնցն այ, վասն զի առաքեալն վկայէ թէ՝ «Փորձեցան, սպանմամբ սրոյ մեռան»։ Այսպէս վասն Յասահակայ գրէ սուրբ գիրն եթէ՝ «Զոր կոչեաց զնա հրեշտակ Տեառն յերկնից և ասէ. «Աբրահամ, Աբրահամ, և նա ասէ ցնա, առասիկ եմ. և ասէ մի՛ մեր զձեռն քո 'ի պատանեակդ, և մի՛ ինչ առներ դմա. զի այժմ գիտացի թէ երկիւղած ես դու յայ»։ Ծն. ԺԲ. 11։

Տես զինչ գրէ յայսմիկ պարբերութեան՝ որ ըստ ամենայնի է հակառակ ճշմարտին մարդասիրական կամացն, յասելն թէ։

«Եւ մարդկային ազգը կարօտ էր այսպիսի օրինակ մը ունենալու աչքին առջևն, որ հասկնայ թէ ատուած իրաւունք ունի թէ՝ որ կամենայ մեղմ ասոր նմանն զոհեր պահանջել, վասն զի կարող է անոնց տեղն ալ մեր վարքը հարիւրապատիկ հատուցանել»։

Ի գրեալն Հեղինակին զայս պարբերութիւն՝ պարտ և արժան էր նախ՝ ուսնկդիր լինել սրբազան առաքելոյն Պօղոսի՝ որ յայտնի քարոզէ զամենաբարի և մարդասէր կամս այ. այսպէս։ «Որ զամենայն մարդիկ կամի՝ զի կեցցեն, և 'ի գիտութիւն Ճշմարտութեան եկեսցեն»։ ա. Տիմ. Բ. 4։

Տեսեր զբացարձակ մարդասիրին այ բարեբանել կամացն բացատրութիւն, ոչ կամի՝ զի որդիք մարդկան իւրեան զոհ լիցին, այլ կեցցեն ասա առաքինական բարի վարուք և 'ի գիտութիւն Ճշմարտութեան բարգաւաճեալ՝ ժառանգեսցեն զկեանս յաւիտենական փառաց երկնից արքայութեան։ Բ։

Ելեռնի Լամբրոնացւոյ 'ի մեկն. Պաղ. տես համեմատ ՅԾային կամաց ինդիր առնեն մարգարէն Դաւիթ և Լսայի. «Լեցիջ անձն իմ օրհնեսցէ զքեզ, և իրաւունք քո օգնեսցեն ինձ». Պաղմ. ՃԺբ. 175։ «Տէր փրկութեան իմոյ, և ոչ դադարեցայց օրհնել զքեզ սաղմոսարանաւ զամենայն աւուրս կենաց իմոց յանգիման տաճարիդ այ». Լսայ. Լբ. 20։ Այսպա հակառակ ՅԾային կամաց էր գործ անօրինաց կռապաշտից հեթանոսաց բարբարոս աղգաց՝ որք չարաչար տանջեցին սպանին պէսպէս սոսկալի խոշտանգանօք զսիրելի ծառայս այ՝ զսուրբ նահատակսն, որք 'ի հաւատ Ճշմարիտ ՅԾպաշտութեան և ՅԾսիրութեան հաստատուն և անշարժք կացին և մերժեցին, անարգեցին զանցաւոր կենաց փառաց զՀոխութիւնս, և զյաւիտենական փառացն երանութեանն ընտրեցին զվայելչութիւնս, և 'ի վերուստ հրաւիրեցան ժառանգել զնոյն զանսահման բարութիւնս, և պսակեցան յարքայութէ երկնից։ Իսկ 'ի պէսպէս տանջանարանս չարչարողք և սպանողք նոցին զվայն յաւիտենական ժառանգեցին և յանվախճան տանջանս դժոխոց մատնեցան անզեղջ գոլով 'ի չարիս։

Ի հինգերորդ տետրի աստ երես 63 գրէ վասն Աբրահամու նահապետին։

«Թոյլ Աբրահամու խոստացած ու տուած արհնութիւններն ու գովասանութիւններն ալ ուրիշի ոչ տուեր է աստուած և ոչ կուտայ»։

Որ վՀիս ստգտանելի, այո՛ և յայս պարբերութէ բանիցս սխալեալ է Հեղինակն, վասն զի հակառակ

իսկ է Ա՞ծային անսահման արդարութեանն, քանզի
'ի գրոց սրբոց ուսանիմք միշտ եթէ աստուած սրբ-
տագէտ ամենայնի գիտէ միշտ արդարութիւն իւրով
լինել. վրէժխնդիր չարագործաց։ և վարձատրիչ բա-
րեգործաց՝ եթէ աստ և եթէ 'ի հանդերձեալն ան-
վրէպ հատուցմամբ համեմատ գործոց իւրաքան-
չիւրոց ըստ այնմ. «ՅԱ՛ՀՆ է զօրութիւն և քո տէր
ողորմութիւն, և դու հատուցանես իւրաքանչիւր
ըստ գործոց նոցա». Սաղ. կ՚Ա. 13։
«Այս եմ Տէր աստուած քո, աստուած նախանձոտ,
որ հատուցանեմ զմեղս հարանց՝ որդւոց յերիս և
'ի չորս ազգս ատելեաց իմոց։ Այլ առնեմ զողոր-
մութիւն 'ի հազար ազգս սիրելեաց իմոց և ոյք
պահեն զհրամանս իմ». Այլից. Բ. 5. 6։ Այլ թէ
«Որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւ-
րեանց որ համբերութեամբ են 'ի գործս բարու-
թեան, և զփառս և զպատիւ և զանեղծութիւնն
խնդրեն, զկեանս յաւիտենից։ Իսկ որ 'ի հակառա-
կութենէ անտի են, և ապստամբք 'ի Ճշմարտու-Է,
և զՀետ երթեալ զանիրաւութեանն, բարկութեան
և սրտմտութեան». Հռովմ. Բ. 6—8։ «Այլ եթէ դաս-
տիարակս երկուս՝ զաւետիս և զպատնէշս. և
վարդապետս յօրինեաց զՀոգևորսն խրատուն կե-
նաց յիւրմէ կանուխ գիտութենէ Ծածկել յանձ-
նիշխան կամն բարեօքս։
Ի՛նչ զի որ զլաւագոյնն հնազանդեաց մտերիմ
հաւանութեամբ 'ի կամն տեառն՝ փառաց պակեսցի։
Իսկ արհամարհողն և անհնազանդն և ապստամ-

բեալն 'ի ճշմարտութեան աւանդեցին՝ պարտաւորեալ պատուհասեցի։ Եւ արարիչն բարերար կամաքն ոչ եթէ հակառակ ինչ էր, իբր կանուխ գիտութեամբն, այլ հաւան իսկ նախախնամական սիրովն առ 'ի հաստատուն կալ 'ի բարին։ Եւ զպատուս խստացեալ աւետեացն՝ արդարոցն յուշառնէ միշտ, այլև զպատիժս արհամարհողացն և անհնազանդողացն 'ի հոգևոր օրինացն։ Զի զամենայն զմիտս զգուշացուսցէ 'ի հնազանդութիւն պատուիրանին զի մի զրկեսցին 'ի վարձուցն հատուցման, այլ յորդորեսցին յօգտակարան։։ Յաճախ. ճառ. ԺԸ։ Զայն զի այ։ բանք ամենայն ուրեք աւետարանեցաւ և միշտ աւետարանի եթէ՝ արդարոցն և սրբոցն դասք որք զառաքինութիւնս նկարագրեցին յանէնս իւրեանց և կցորդ եղեն չարչարանացն Քրիստի և փառացն հաղորդ լինելոց են։ Եւ երկնից մտիցն և հարսանեաց առագաստին և անճառ խընդութեանն փեսային արժանաւոր լինելոց են։ Իսկ մեղաւորքն՝ տանջանաց և խաւարի և գեհենի են արժանաւորք։ Իւր որդն նոցա ոչ մեռանի և հուրն ոչ շիջանի։ Եւ երկոքեանքս այսոքիկ միով բանիւ աւետարանեցան ըստ սաղմոսերգուին թէ՝ Պիանգամ խօսեցաւ աստուած, և երկուս զայս լուաքս։։ Սարգ. շնորհ. ճառ. Գ. Ա. պետ. Ա. 24։ Զպաքէն եթէ Հեղինական ուշադիր լիներ անժխտելի աւանդութեանց սուրբ գրոց և հարց սրբոց ուղիղ վարդապետութեանց, ոչ սխալեալ գրէր զայս պարբերութիւն.

«Բայց Աբրահամու խոստացած ու տուած օրհնութիւններն ու գովասանքներն ալ ուրիշի ոչ տուեր է, և ոչ կուտայ։։։

Օ՞ի՞նչ օրհնութիւն է և զի՞նչ գովասանութիւնք, զոր աստուած միայն աբրահամու շնորհեալ է, և ոչ այլոց սրբոց հաճեալ է շնորհել, միթէ քան զաբրահամուն տուեալ զօրհնուի և զգովուի, պակաս ի՞նչ իցէ այն ամենացանկալի օրհնուի և գովութիւնն, զոր ետ ՅԾ երանելոյն Յոբայ, և հոգենուագ մարգարէին Դաւթի։ Ցես վ՚ Յովհայ արդարոյն ինքնին ամենակալ տէր ՅԾ զովաբանէ՝ ի յանդիմանուի բեղմարայ՝ որպէս գրեալ է՝ Դաւասէ ցնա տէր, նայեցար մոռք քովք ընդ ծառայ իմ ընդ Յովհ, զի ոչ գոյ իբրև զնա՝ ի վերայ երկրի, այր անարատ ճշմարիտ ՅԾ-ապաշտ մեկնեալ յամենայն իրաց չարաց։։ Յոբ. ա.8։ Այս՝ երանելի արդարն Յովհ, այո՝ արժանի ՅԾային գովութեան հանդիսացաւ, վասն զի համբերատար լինելով զանազան փորձութեանց և անտանելի վշտաց յանձին իւրում նկարագրեր զկամաւոր զիրկագործ չարչարանս փրկչին մերոյ Յի՞սուսի։ վասնորոյ գրէ սրբազան առաքեալն Յակոբոս։։ Օ՜ համբերութիւն Յովհայ լուսաւորք և զկատարումն տեառն տեսէք։։ Ե. 11։։։ Իսկ այն զի արդար էր և անարատ, և ոչ վասն մեղայ իրիք եկաց՝ ի հարուածս և՝ ի տանջանս այլ սակս փորձութեան և յամօթ առնելոյ զբանսարկուն՝ որ զամենայն տեսակս տանջանաց շարժեաց՝ ի վերայ նորա և յամենայնի տկարացաւ, էր մեծի խորհրդոյն օրինակ։ որ՝ ի տէր մեր Յիսուս

Արդիստոս կատարելոց էր Ճշմարտութեամբ։։ Սարգ. Հնորհ. Ն՚առ. ժա. Յակ. Ե. 11։

Բ՚զդ՝ ոչ ապաքէն սքանչելի և գերազանց ածայ՝ ին հնորհ գովութեան և օրհնութեան պարգևեցաւ մարգարէին Դաւթի՝ զորմէ մի ըստ միոջէ գրեալ է։։Դտի զԴաւիթ ծառայ իմ և իւղով սրբով իմով օծի զնա։ Ձեռն իմ ընկալցի զնա, և բազուկ իմ զօրացուսցէ զնա։ Մի մեղիցէ նմա թշնամի, և որդի անօրէնութեան զնա մի չարչարեսցէ։ Հարիցս առաջի նորա զթշնամիս նորա և զատելիս նորա ՝ի պարտութիւն մատնեցից։ Ն՚շմարտութիւն իմ, և ողորմութիւնն իմ ընդ նմա, և յանուն իմ բարձր եղիցի եղջիւր նորա։։Սաղ. ՃԸ.21.26

Տեսեր զի արդարութիւնն այ ոչ երբէք զլանայ զօրհնութիւնս և զգովութիւնս իւր ՝ի ծառայից իւրոց։ որք հաճոյացեալ են բարերար կամաց իւրոց։ Լուրեամն պսակեալ է Հեղինակն լարանին գրելովն։

։։Աբրահամու խոստացած ու տուած օրհնութիւններն և գովասանքներն ալ ուրիշի ոչ տուեր է և ոչ կուտայ։։։

Ար՝ գուցէ զայն հնորհ, զոր ետ աստուած աբրահամու միայն մտաբերելով գրեալ լցէ, և ոչ վերահասու լինելով խորհրդոյն։ Դանզի խոստացաւ աստուած աբրահամու տալ զորդի ՝ի Սարրայ կնոջէն, որ եղև խահակ՝ արդարև հակառակ բնութեան էր այս խոստումն այ, զի Աբրահամ և Սարրայ ծերացեալք էին և անցեալ զաւուրբք. վասնորոյ մինչ լուաւ Սարրայ ունկնդրութեամբ բանիցն

ՅԾՅԻՆ խոստմանց՝ ԺԻԾաղեցաւ ընդ միտս, և ասէ տէր ցաբրահամ՝ զի է զի ԺԻԾաղեցաւ Սարրայ ընդ միտս իւր, և ասէ թէ արդարև ծնանիցիմ՝ զի ահա ես պառաւեալ եմ։ «Մի՞թէ տկարանայցէ առ յՅՅ բան»։ Ծն. Ժբ. 9. 10. 11. 13. 14։

Խորհուրդն ունէր այն ՅԾՅԻՆ խոստումն՝ վասն զի որդեծնութիւն ամէնայն Սարրայի՝ օրինակ էր հնորհական օրինաց նորոյս կտակի և քրիստոնէական եկեղեցւոյս՝ որ է մայր ամենայն հաւատացելոց ՚ի հրէից և ՚ի հեթանոսաց ուղղափառ հաւատով միաբանելոյ՝ որք են վերածնեալք որդիք ՅՅ յաւանդանէն մկրտութեանն՝ որ և յառաջագոյն ՚ի հեթանոսութենն և ՚ի հին օրինաց ԺառայութԵան՝ ջունէաք ժառանգութենն երկնից արքայութեանն՝ վասն զի անդանօր ոչ գոյր վերածնելութիւն յաւազանէն մկրտութեան յորդեգրութենն և ՚ի ժառանգութի հօր ՅՅ։ Բանզի խորհուրդ աւազանին չէր արդէն հաստատեալ ՚ի հնորհաց ՅՅի Քրիստի։ Վասն ըստ օրինակի Սարրայի ամուլ մնայր՝ իսկ յորժամ հնորհն ՅՅի Քրիստի փրկարար տնօրէնութեան ծագեցաւ՝ եկեղեցին Քրիստոսի եղև մայր հոգևոր երկնապարգև որդւովք բերկրեալ։

Զայս ամենայն ցուցանէ հետագայ վկայութիւնս՝ «Ուրախ լեր ամուլ՝ որ ոչ ծնանէիր՝ գոչեա և աղաղակեա՝ որ ոչդ երկնէիր։ զի բազում են որդիք սկնդկիդ առաւել քան զարամբեոյն»։ Ես. �դ. 1։ «Մեք եղբարք ըստ սահակայ աւետեացն որդիք եմք։ . . Վասնորոյ եղբարք՝ չեմք որդիք աղախ-

նոյն՝ այլ ազատին, ազատուբ՝ որով Քրիստոս զմեզ ազատեցոյց։ Գաղատ. Զ. 28–31։ «Այս եղև անդ ծնունդ մի նոր վայելուչ գեղեցիկ քան զառաջինն. զի գոհացեն վասն խնդրոյն այնմիկ՝ որ տրար ծնունդ նոր ի մկրտութեան աւազանին. զի վայելուչ գեղեցիկ քան զծնունդս որովայնի»։ սուրբն Եփրեմ. ի մեկն. Ծննդ։

Տեսեր սիրելի ընթերցող՝ զի ահա խորհրդով ի կնոջէն աբրահամու յամուլ Սարրայէ զորդի յայրոյց զնահակ անուն՝ որով կամեցեալ էր օրինակ տալ շնորհիւն Յսի Քրիստի վերածնելոց յաւազանէն սրբարար մկրտութեան յորդեգրութիւն հօր ոյ և ի ժառանգութիւն Յսի Քրիստի. ևս և ի տաճար բնակութեան սբ հոգւոյն ոյ ճշմարտի։

Ուրեմն ահա մարդասէր ոչ երբէք զլեկ ի շնորհաց և յօրհնութեանց և ի փառաց իւրոց զհաստատիմ ծառայս իւր. այլ ամենեցուն կամի վարձահատոյց լինել երկնաձիր պարգևօք իւրովք. ապա յոյժ սքխալեալէ յասելն թէ

«Աբրահամու խոստացան ու տուած օրհնութիւնն ու գովասանքներն ալ ուրիշի ո՛չ տուեր է և ո՛չ ալ կուտայ»։

եթէ զայս սխալ պարբերութիւն նախ քան զգծագրելն Հեղինակին ուշադիր եղեալ էր սրբազան առաքելոյն Պօղոսի՝ ոչ բնաւ համարձակէր գծել զայն, ըստ որում գրէ ի կողմանէ ամենայն հոգևոր պաշտօնէից եկեղեցւոյն Քրիստի և ամենայն ուղափառ Քրիստոնէից գոհաբանութիւն ահա ծածային լիուլի և բազմատեսակ շնորհայ և երկնաձիր օրհնու-

թեանց յասելն։ Օրհնեալ է ՅԱ և հայր տեառն մերոյ Յսի Քրիստոսի. որ օրհնեաց զմեզ ամենայն հոգևոր օրհնութիւնս յերկնաւորս ի Քրիստոս. որպէս ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զվիմանն աշխարհի. լինել մեզ սուրբս և անարատս առաջի նորա սիրով։ Յառաջագոյն սահմանեաց զմեզ յորդեգրութիւն ի ձեռն Յսի Քրիստոսի ի նոյն ըստ հաճութեան կամաց իւրոց։ ի գովեստ փառաց շնորհաց իւրոց. որով զուարճացոյց զմեզ սիրելութեամն։ Որով ունիմք զփրկութիւն ի ձեռն արեան նորա զթողութիւն մեղաց՝ ըստ մեծութեան շնորհաց իւրոց։ Եփես. ա. 3—7։

Զինչ քան զայս առաւել շնորհ և օրհնութիւն պարգևեալ յԱծային խնամոց եղև նահապետին Աբրահամու. նախ՝ եթէ ասիցես յամուլ արգանդէ Սարրայի կնոջ նորա զորդի պարգևեաց ՅԱ զիսահակ. տամ պատասխանի եթէ. ոչ ապաքէն նոյն տէր ՅԱ այնպիսի շնորհ ևս արար Աննայի մօրն Սամուէլի. զի արտաքոյ բնութեան պտղաբերեաց ամուլ արգանդ տուին. վասն գրեալ է Եղ։ ի ժամանակի աւուրցն և ծնաւ որդի. և կոչեաց զանուն նորա Սամուէլ։ Աստ զի ի տեառնէ այս զօրութեանց խնդրեցի զսա։։ ա. Թագ. ա. 20։ Այնպէս էր և Եղիսաբէթ կին զաքարեայ քահանայի վասն որոյ գրեալ է Եւ էին արդարք երկոքին առաջի այ. գնային յամենայն պատուիրանս՝ և յիրաւունս տեառն անարատ։

Եւ ոչ գոյր նոցա որդեակ. քանզի Եղիսաբէթ ամուլ էր։ և երկոքեան՝ անցեալ էին զաւուրսն

իւրեանց. . . Այսպէս ցնա հրեշտակ տեառն, մի՛ երկնչիր Հաբարեա՛ զի լսելի եղեն աղօթք քո, և կին քո Սարրայաբէթ ծնցի քեզ որդի, և կոչեսցես զանուն նորա Յովհաննէս. . . Եւ ահա Սարրայաբէթ ազգական քո և նա յղի է ՚ի ծերութեան իւրում, և այս վեցերորդ ամիս է նորա, որ ամուլն կոչեցեալ է։ Զի ոչ տկարասցի առ յայ ամենայն բան։ . Ղուկ. ա. 7. 13. 36. 37։

Երկրորդ կարէ Հեղինակն առարկել մեզ թէ գնածային գերազանց շնորհս ստացաւ երանելի նահապետն աբրահամ բարեկամ այ անուանելով որպէս. գրեալ է «Հաւատաց Աբրահամ յայծ և համարեցաւ նմա յարդարութիւն, և կոչեցաւ բարեկամ այ։ . Յակ. բ. 23։ Արդարև գովութիւն մեծ էր այս նահապետին աբրահամու որպէս և գրէ Պարգիս շնորհալի ՚ի մեկնութեան սոյն բնաբանի «Զի՝ քանի ահագին են գթութիւնքն այ, և սակայն մարդասիրութիւն նորա. եթէ ոչ բարիսի քաղցր յոյս բարեաց մեզ առաջի դնէ։ Պարդ հաղեղէն մահկանացու յաղագս փոքու առաքինութեանն այ ՚ի վեր ելանէ, և բարեկամ նորա անուանի և լինի։ . Ն՚առ. է։

Այսպէսն առ այս առաջարկութիւն ունիմք պատասխանել, զի զայս մեծապարգև շնորհ բարեկամութեան ընդ այ. ոչ միայն ստացաւ երանելի նահապետն աբրահամ. այլև Յիսուս Քրիստոս այծ փրկիչ մեր զչերմեռանդ սիրելիս իւր և զաշակերտս և զառաքեալս իւր ամենացանկալի բարե-

կամ անուամբ պատուասիրեաց և ոչ միայն այ-
սու շատացաւ, այլև իւրեան իսկ եղբայր կոչելով
փառաբարդեաց։ «Ոչ աշարոս բարեկամ մեր ննջեց,
այլ երթամ զի զարթուցից զնա»։ Յով. ԺԱ. 11։
«Որ Եծ և ամ զայս սէր ոչ ոք ունի, եթէ
զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց։
Դուք բարեկամք էք իմ, եթէ առնիցէք զոր ես
պատուիրեմ ձեզ։ Ոչ և ս կոչեմ զձեզ ծա-
ռայս, զի ծառայն ոչ գիտէ զի՞նչ գործէ տէրն
նորա, այլ զձեզ կոչեցի բարեկամս, զի զամենայն
զոր լուայ ի Հօրէ իմմէ, ծանուցի ձեզ»։ Յով.
ԺԵ. 13—15։ «Յայնժամ ասէ ցնոսա, մի՛ երկնչիք,
երթայք ասացէք եղբարցն իմոց. զի երթիցեն ի
Գալիլեայ, և անդ տեսցեն զիս»։ Մատ. իը. 10։
«Զի որ սրբէն, և որ սրբին, ի միոջէ էին ամե-
նեքին. վասնորոյ ոչ ամեթ համարի եղբարս անուա-
նել զնոսա, և ասել։ Պատմեցից զանուն քո եղ-
բարց իմոց. ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ»։
Լ,ԵՐ. Բ. 11. 12։ Լ,Ս արդ չի՛ք ոք երանելի քան
զառաքեալն. որ այնպիսում պատուոյ և այնքան
բարձրութեան արժանաւորք եղեն։ Ունի՛ք ոք չի՛ք
ուրեք ի մարդկանէ՝ որ գերազանցեաց քան զնոսա
ի փառս, ոչ յարդարոցն ոք, և ոչ ի մարգարէիցն
և ոչ յայլոց սրբոցն. որք ընդ օրինաքն կամ ընդ
շնորհաքն։ Լ,ան եթէ զՀրեշտակացն ասիցես և զա-
մենայն գերաշխարհիկ զինուորութեանցն. քան զա-
ռաքեալն. եթէ յանդգնութիւն ոչ է ասել. ե-
րանելիք ոչ են։ Ա՛ սն զի նոքա հոգիք են հարկա-

ւորք. որք առաքին 'ի սպասաւորութիւն, վասն այ-
նոցիկ՝ որ ժառանգելոց են զփրկութիւն։ Իսկ ա-
ռաքեալքն ոչ միայն առաքեալք և սպասաւորք,
այլև ականատեսք բանին։ Այս ոչ միայն ականա-
տեսք, այլև սիրելիք և բարեկամք և որդիք և ժա-
ռանգք և ժառանգակից։ »։ Պարգ. հնարհ. ա. Յով-
յոդոր։ «Բարեկամք քրիստոսի և հազարապետք
ճշմարտին խորհրդոց, ընդունողք զբանն կենաց և
լուսաւորիչք տիեզերաց»։ Շարակ։ «Ով ի սուրբ
է տէր և 'ի սուրբս բնակեալ, և եղբարս իւր ա-
նուանեաց զսուրբսն։ Պատմեցից ասէ զանուն քո
եղբարց իմոց, և 'ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զք-
զեզ Հայր»։ Յաճախ. Ճառ. ժ։ «Այս արար զմեզ
իւր եղբարս ըստ մարգարէին. աւետարանեցից զա-
նուն քո եղբարց իմոց»։ Յակ. Ի ծբին. Հայր.
Ճառ. ժզ։ Ո՛չ վայրապար եղբարս իւր զաշակերտսն
անուանէ. այլ զի համաքնութիւն եղև նոցա ըստ
մարդկութեան. ըստ առաքելոյ թէ. «Ո՛չ ամօթ
համարի եղբարս կոչել»։ Յով. Ծործոր. 'ի մեկն.
Պատ. իբ. 10։

ԳԻՇՈՒԽ Զ.

'Ի համարն 70 սոյն գլխոյ՝ 'ի նկարագրելն զպատ-
մութիւն ժառանգելոցն զօրհնութիւն Յահակայ
հօր իւրոյ հնարագիւտ խրատիւք մեր իւր Ռեբե-
կայ գաղտ առանձինն յեղբօրէն իւրմէ Եսաւայ.
Ծննն. իէ. 5։ Գրէ Հեղինակն լսարանին տարօրի-

նակ իմն խորհրդածութեամբ։

«Օրհնենք տալու սովորութիւնը ամէն ազգաց մէջ ամէն ժամանակ եղածէ ու կայ։ միայն թէ այժմ աւելի մեացեր է արևելեան ազգաց։քան թէ Եւրոպացւոց մէջ։ Մեզ՝ որ արևելացւոց մէջ պակասելու վրայ է։արդեօք օրհնենք տալու արժանաւորութիւն ունեցող արդարներուն քիչնայն է։այս բանիս պատճառը։թէ օրհնենք ընդունելու ալժանի անձինքը քանի կելթան կ՚քչնան։

Յայտնիկ բանիս դարձեալ քանի ինչ յայտնի սխալանք երևի։առաջին տեսս ընդհանուր դատաստան առնելով։նախ՝ դատապարտէ զԱրոպացիս։և ապա՝ համադասէ դատապարտութեան զազգն արևելեան։որպէս զի սոքա երկրքին ազգք արևելեան և Աւրոպէոյ ՅԾահաճոյ օրհնութեան մերժողք և ատեցողք գտանին։Ա՛յդ այսու դատաստանաւ և ընդհանուր վճռահատութեամբ զի՞նչ կամի ցուցանել մեզ Հեղինակն։յայտնի երևի թէ հանդիսանալ կամի ատէն քնիչ սրտից և երիկամանց երկուց մեծամեծ ազգաց։որ միայն վերին ՅԾային ամենակալ ծածկագիտին տեսչութեան է կարելի։«Տէր քննէ զսիրտս և զերիկամունս։ՅԾ արդարս»։Սաղ։Է։11։«Ես տէր քննեմ զսիրտս։և փորձեմ զերիկամունս։տալ իւրաքանչիւր ըստ ճանապարհաց իւրոց։և ըստ պտղոյ գործոց իւրոց»։Երեմ։ԺԷ։10։«Որպէս ընտրեցաք յՅայ հաւատարիմ լինել աւետարանին։նոյնպէս և խօսիմք։ոչ իբրև մարդկան հաճոյ լինել։այլ Ա՛յ՝ որ քննէ զսիրտս մեր»։Ա։Թես։Բ։4։Դարձեալ սխալեալ է դատելովն զազգս Աւրոպէոյ և արևե-

լեան իբրև ժխտող ՝ Ա՛ծահաճոյ օրհնութեանցն ծնողացն իւրեանց, որ Ա՛ծ այլն արդարաքինին դատողութեան և եթ անկ է այսմ հասու լինել, ըստ այնմ՝ «Դատե զաշխարհս արդարութեամբ, և զժողովուրդս իւր ուղղութեամբ»։ Սաղ. ղէ. 10։ «Ոչ կարեմ ես յանձնէ առնել և ոչ ինչ, այլ որպէս լսեմ, դատեմ, և դատաստանն իմ արդար է»։ Յով. Ե. 30։

Ուրեմն առանց քաջ վերահասու անձանց և վկայութեամբ բազմաց հաստատելոյ եթէ համարձակիմք դատել զոք, և զազգ մի ողջոյն, եթէ բանիւ և եթէ գրով՝ սխալիմք յոյժ յոյժ։ Որպէս համարձակեալ իսկ էր Հեղինակն լսարանին դատել զերկուս ազգս Եւրոպացւոց և արևելեաց այսպէս.

«Օրհնենք տալու սովորութիւնը ամէն ազգաց մէջ ամէն ժամանակ եղած ու կայ. միայն թէ այժմ՝ աւելի մեացեր է արևելեան ազգաց մէջ քան թէ Եւրոպացւոց։ Մեղք՝ որ արևելցւոց մէջ ալ պակասելու վրայ է։ արդեւ՞ք օրհնենք տալու արժանաւորութիւն ունեցող արդարներուն քշնալն է այս բանիս պատճառը, թէ օրհնենք ընդունելու արժանի անձինքը քանի կերթան կ՚քշնան։

Ստանաւր ինձ այսպէս թուի թէ Հեղինակն ՝ի խոսելն և ՝ի գրելն չէ ՝ի յուշ բերեալ զսուտարանական և զառաքելական զանժխտելի աւանդութիւն. որպէս գրեալէ «Մի՛ դատէք, զի մի՛ դատիցիք. զի որով դատաստանաւ դատէք՝ դատեսցիք»։ Մատ. Է. 7։ «Ամենորոյ առանց պատասխանի տալոյ ես ո՛վ մարդ. որ դատեսդ, զի որով դատես զընկերն զանձն քո դատապարտես»։ Հռովմ. Բ. 1։

«Մի է օրէնսդիր և դատաւոր, որ կարողն է փրկել և կորուսանել։ Դու ո՞ ես. որ դատես զընկերն»։ Յակ. Դ. 12։ «Ի սոր հինգ յեղանակս իմանամք զասացեալս, նախ՝ զի ոչ՝ ի դատելոյ հրաժարեցուցանէ՝ որ դատաւորս կարգեաց՝ ի հինն և՝ ի նորս. այլ ուղիղ դատաստան պահանջէ, ըստ այնմ։ «Մի՛ ըստ աչս դատիք. և թէ դատաստան արդար դատեցարուք. քանզի առ իշխանս է բանս, թէ «Մի՛ զանձանց վրէժ խնդրէք և զօտարին արհամարհէք, զի մի՛ և դուք՝ ի նոյն մատնիցիք, այլ որպէս անձանց, այսպէս աղքատաց և օրինաց Աստուծոյ ուղիղ և իրաւամբք քննելով վրէժխնդիր լինիջիք»։ Եւ երկրորդ՝ առ հաւատարս ասէ թէ՝ «Մի՛ զմիմեանս դատէք»։ ըստ առաքելոյ թէ՝ «Դու զի՞ դատես զեղբայր քո, զի զայդ առնելով զիրաւունս Աստուծոյ և իշխանաց՝ ի քեզ յափշտակել ջանաս. վասնորոյ դատիս և դու ըստ քում անիրաւութեանդ և անարժան չափոյդ կշռուես, զի թողեալ զչափ հնազանդութեանդ, և գեր՝ ի վերոյն յանդգնեցար հպարտ կամՁք, զոր զգուշացուցանէ Պօղոս. «Մի՛ հպարտացիր, զի մի՛ ի դատաստան սատանայի անկանիցիս»։ Եւ երրորդ՝ վասն անյայտութեան իրացն հրամայէ՝ ոչ դատել, քանզի իրք մեր ընդ կարծիսք են անկեալ, ոչ է պարտ երկբայութեամբ այլոց չարիս հասուցանել, զորս խրատէ «Մի՛ յարաջ քան զժամանակն դատել, մինչև եկեսցէ Տէրն, որ լուսաւոր առնէ զգաղտնիս խաւարի. և յայտնեսցէ զխորհուրդս սրտից. քանզի Աստուծոյ

միայն է ոչ 'ի կարծ դատել ըստ մարգարէին, իսկ
եղկան բնութիւնդ հաստատուն այցելութեամբ
պարտ է քննել և ճշգրիտ հաստատ լինիլ զի մի՛ 'ի
տարապարտուց զքեզ դատեալ անկցիս և դու 'ի
նմանապէս չարիս։ Այս ջորրորդ՝ դատողաց հրամայէ
մաքուր լինել 'ի մեղաց և լի խմաստութեամբ,
զի երկուքս այսոքիկ յոյժ պիտանացու են դատաւորին, մի գուցէ զոր մեղադրեացն՝ զնոյն կրեսցէ.
ըստ այնմ «Որանի որ ոչ դատէ զանձն, որով զնեկերքն փորձիցէ, զի համարձակութեամբ կարիցէ
դատել՝ ապատ գոլով 'ի յանցանաց, որպէս առաջիկայս ցուցանէ, ապա թէ ոչ զոր ասիցէ, զնոյն և
լսիցէ, և զոր առնիցէ և զնոյն կրեսցէ, կամ 'ի
մարդկանէ կամ յայ նախախնամութենէ։ Այս հինգ
երորդ՝ ոչ ճշդիւ հրամայէ քննել զյանցանս ընկերաց, քանզի ո՛ զք լինիցի նբ 'ի յաղտոյ մեղաց։ 'ի
մեկն. Մատ. է. 2։ «Զոր որ մարդ ես ընդ բիւր դատաստանաք անկեալ, ով ես, յօրէնս դրչացն ես, թէ
'ի դատաւորաց, 'ի կեցուցանողացն թէ 'ի կորուսանողացն։ Այդ՝ ասա՛ ինձ, դու զքո ունիս իշխանութի
կամ զնով զք զքեզ ասես, որ ընկերին դառն դատիճ եղեալ՝ անողորմ դատես, և յառաջ քան զաստեանն Աստի դատապարտես զնա։ Զոյն զայս
և Պօղոս յաւելուածով ասէ «Զոր ով ես, որ
դատես զայլոյ ծառայ, իւրում Տեառն կայ կամ
անկանի. բայց կեցցէ զի կարող է Տէրն հաստատել
զնա։ Տեսանեմ զի բնաւ ամենևին չտայ թոյլ դատել զքեզ 'ի մարդկանէ։ Այլ կարի սաստելով ինն

զյանդիմանութիւն 'ի կիր արկանէ։ Յորժամ Տ՚ և արարիչ ոչ ես նորա, և յանկանելն նորա, չունիս իշխանութիւն կեցուցանել զնա, ապա զիարդ իշխես ասէ դատել զայլոյ ծառայ, որ այնպիսի զօրաւորն է և խնամակալ իւրում ծառային։ Որ յանկանելն նորա մեղաք, ոչ առնէ անտես. այլ ձեռն կարկառէ և յարուցանէ, և միանգամայն կեցուցանէ։։. Արգ. Հնորհ. 'ի մեկն. Յակ, Ճառ. Թ։

ԳԼՈՒԽ Լ.

'Ի համարն 83 սոյն գլխոյ գրէ վասն գողանալոյն Ռեբեկայի 'ի տանէն Հօր իւրոյ Լաբանայ զկուռս ոսկեղէնս ասելովն.

«Աստուածաշունչը չէր մեղմեթ Դաբելի գողցած կուռքերն ինչ էին, բայց մեկնիչները կարծիք կենն թէ անոնք ոսկիէ կամ արծաթէ կամ ուրիշ նիւթերէ շինուած զանազան մանր կուռքեր. ձևեր կերպարանքներ էին։։։

Ասալ է այս դատումն Հեղինակին. վասն զի ուղղափառ մեկնիչք սուրբ գրոց կարծիքական երկբայութիւն չէն իսկ գրեալ, այլ յաստուածաշունչ գրոց հաստատեալ. և ստուգել, համարձակեալ են գրել եթէ այն կուռքն Լաբանայ և ամ կուռք հեթանոսաց ոսկեղէն էին կամ արծաթեղէն. վասն ընդհանրապէս խոսի երջանիկ մարգարէն 'Դաւիթ «Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ են. ձեռագործք են որդւոց մարդկան. Ճ՚ Ղ. 4։

'Դարձեալ հարցումն առնէ Հեղինակն եթէ

«Ինչու համար զողցաւ արդեօք Ռաքէլ այն կուռքերը։ Ոմանք կսեն անոնց գնողք բաներ եղածին համար վերցուց։ որպէս զի անով Լաբանին Յակովբայ ըրած չրկանքներուն տեղը փոքրիկ փոխարէն մը։ ձեռք ձգած լինի։ բայց այս հաւանական կարծիք մը չէ։ վասն զի Ռաքէլին ըրած գողութիւնը աւելի ծանրանայ։ թէ այս մտքով էր ըսեմք ուրիշները կարծիք կենեն թէ անոր համար վերցուց Ռաքէլ իւր հօր անէն թերափները։ այսինքն կուռքերը։ որ կռապաշտութիւնն և աւելորդապաշտութիւնն ալ վերնայ անկից։ բայց սա ալ հաւանական չէ վասն զի Լաբան կարող էր անոնց տեղը ուրիշ թերափներ գտնալ կամ հնարել։ Այս յայտնի է նաև սուրբ գրոց պատմութենէն որ Յակովբ այն Ռաքելին գողցած թերափները և թլսիները առաւ վերջը ատուծոյ հրամանաւը իւր ընտանեացը ձեռքէն և ծառի մը տակ թաղեց կրանցուց։»

Լատէն նախ՝ անորոշաբար գրելովն շփոթութիւն տայ ընթերցողաց թէ՝ ի ներքոյ որպիսի ծառոյ։ և ուր արդիօք ծածկեաց և թաղեաց զնա նահապետն Յակովբ։ եթէ Հեղինակն նկատեալ էր զճիշտ պատմութիւն ուշաշունչ սբ գրոց չէր բնաւ կարելի անորոշ գրել։ յորում որոշ և պարզ գրեալ է զտեղոյն և զծառոյն։ Լուսն ետուն զ՝Յակովբ զծածն օտարոտիս։ որ էին՝ ի ձեռս։ նոցա։ և զգինդս։ որ յականջս իւրեանց։ և ծածկեաց զնա Յակովբ՝ ի ներքոյ բևեկնոյն՝ ի Սիկիմ։ և կորոյս զնոսա մինչև ցայսօր ժամանակի։։ ծնն։ լե։ 4։

Լուս դարձեալ՝ եթէ Հեղինակն Լսարանին ընթերցել և ուշադիր եղել էր բանից սրբոց Հարց ուշաբան մեկնչաց։ և ծանօթացել խորհրդական մտաց սբ գրոյն իսկ լիներ՝ ցայնժամ գրել կարեր անստերիւր ըստ Սարգանայ ողջամիտ մեկնաբանութեան արարածոց։ որ՝ ի բանիցն սրբոյն Լուղեշի և սրբոյն Լփրեմի առեալ ասէ։ Զողացաւ Սա-

քել զնուռ։ Հօր իւրոյ զոսկեղէնս և զարծաթե-
ղէնս ։ ոչ զի պատուեսցէ ։ այլ զի 'ի դէպ ժամու
ապականեսցէ ։

Յորհուրդ Լ.կեղեցւոյ է Ասքել · որ կոչի գա-
ռն Հովուին մեծի ։ որ բառնայ զնուռս 'ի տանէն
Հօր իւրոյ՝ յաշխարհէ։։ ։

'Ի յօդուածք բանիցս Եբրև յորդորակ գրէ՝

։։Ես պարտք է ամենայն բարեպաշտ տանուտէրներու ու տանտիկ-
ներու որ իրենց մէջ մնած ազգորդաշտութիւնները վերցուն,
և իրենց յոյսը միայն Աստուծոյ ողորմութեանը և նախախնամու-
թեանը վերայ դնեն և ոչ թէ բժժանքներու ։ թրլամի մասնիներու ։
միջոցներու ։ ծրագիներու ։ աննշան խաբեբոյ կախարդական գրուած-
ներու ձևերու նշաններու և ուրիշ հեթանոսական արարմունքնե-
րու վերայ։։

Ը. արմացման արդանկ բան · նախ զի՝ 'ի լսարա-
նի առտ հանդիսացել ունկնդիրք 'ի հարկէ ուղղա-
փառ և բարեպաշտ քրիստոնեայք են · որք ոչ ան-
դունին երբէք զստեղծաբանեալն 'ի Հեղինակէն
զաւելորդապաշտութիւնս · և ոչ բնաւ յօժարա-
կամ լինին հեռացուցանել զյոյս իւրեանց յամե-
նակարողէն Աստուծոյ · այլ յաւէտ լնդ մարգա-
րէական և առաքելական դոհաբանութեան ձայնակ-
ցեալ · իւրաքանչիւր ոք խոստովանի արտի մտօք և
ուղղափառ հաւատով ըստ այնմ։։ 'Ի քեզ տէր յու-
սացայ · մի ամաչեցից յաւիտեան · յորդարութեան
քում փրկեա և ապրեցո զիս ։

Զոր ես համբերութիւն իմ տէր · տէր յոյս իմ
'ի մանկութենէ իմմէ։։ սաղ · 4 · 1—5 ։

։։Զրհնեալ է ՁԾ և Հայր տեառն մերոյ Յի-

ՅԻՇԻ. որ ըստ ողորմութեան իւրում ծնաւ զմեզ վերստին ի յոյսն կենդանի, ի ձեռն յարութեան Յիսի ՅԻՇի ի մեռելոց.. ա. Պետր. ա. 3։

Եւ երկրորդ՝ ի հիացումն ածէ զմեզ եթէ առ ինչ թողու ի բաց զկարևոր խրատս յորդորմանց առ զգուշութիւն ի պէսպէս չարաչար մոլորական սովորութեանց. որ իսկ և իսկ կռապաշտուի անուանին ըստ նոր գրոց. զորս քաջ գիտէր Հեղինակն. ապա ընդէր եղև նմա լուծեան և զանցառութեան տալ. զորոց յայտն սբարբառ քարոզէ սրբազան առաքեալն Պօղոս։ Այս տեղեկացեալ գիտասջիք. թէ ամ պոռնիկ. կամ պիղծ. կամ ագահ՝ որ է կռապարիշտ՝ ոչ ունի ժառանգութիւն յարքայութենէ ԻՇԻ և այ. Եփես. Ե. 5։

«Ի բաց ընկեցէք զպոռնկութիւն զպղծութիւն. զբիծ, զցանկութիւն չարեաց և զագահութիւն, որ է կռապաշտութիւն. վասնորոյ գայ բարկութիւնն այ ի վերայ որդւոցն անհաւանութեան» կողոս. գ. 5։

Տեսեր զի ամենայն ոք՝ որ ոչ կացցէ և մնասցէ անսայթաք յառ աստուած նուիրելի պարտուպատշաճ պաշտօնն իւր. զինքն տայ մարմնաւոր ցանկութեան. այս է մոլութեան վարուց և բարուց. որովայնամոլութեան, և արծաթասիրութեան նա իսկապէս կռապաշտ անուանի. թէ և յարտաքուստ ածապաշտ ոք երևեսցի զքոյն ածապաշտութեան ծածկոյթ ունելով, և ի ներքուստ միշտ հակամիտ ի չարաչար մոլորութիւս, որ զարժանին ունի զյաւիտենականն լուծանել զդատապարտուի ի սրտագիտէն այ։

«Անզգի ըստ սէրն գրիգորի նարեկացւոյն» կրա-
պարիշտ է քողով ծածկեալն. որ զկերպարանս միայն
ունի, և զոչ խորհրդելիսն ստեղծչին կատարէ, զ Լիր։
Այս պարտէր Հեղինակին զանցառութիւն չծած-
կել զանազան կռապաշտական մոլութիւնս. յի-
շելով միայն զաւելորդապաշտութիւնս. այլ զինչ
պարտ և արժան իսկ էր. զյորդորական բանս աս-
տուածաբան սրբազան աւետարանչին Յովհաննու՝ որ
«Ի թղթին կաթուղիկեայց. «Ի մտի ունիս՝ որդեակք
պահեցէք զանձինս ձեր ի կռապաշտութենէ» Ե. 21։
Տեսցուք ոմն բարեմիտ ընթերցող զինչ հոգե-
կեցոյց յորդորական բանս գրէ սարգիս շնորհալի՝ աբ
վարդապետն մեր։ Լաւ արդ աղէ՞ տեսցուք եթէ
զինչ ենն կուռքն։ եթէ ոչ յոսկւոյ և յարծաթոյ
ուրուական պատկերս կանգնել։ Լաւ զինչ այլ ինչ
է պաշտօն նոցա. եթէ ոչ սիրել զնոսա և երկիր-
պագանել իբրև ՚ի։ Լաւ ո՞չ միայն յոսկւոյ և
յարծաթոյ գործէին զկուռսն ՚ի պայծառագոյն
նիւթոց և ՚ի զարմանալեաց տգէտ մարդկանց՝ այլ և
յայլ ինչ վաւ՚ծարագոյն նիւթոց. պղնձոյ ասեմ և
երկաթոյ։ քարանց և փայտից. յորոց դիր զմեռելը-
տի պատկերսն բանդակեալ՝ պաշտօն նոցա մատու-
ցանէին։ Լ՚որ դ՚ ոչ ապաքէն նկարագիրք ոսկիք էին.
որոց նոքա զերկրպագո՚ի մատուցանէին։ Զ՚ինչ
այլ ինչ է և ոսկին որ ՚ի մէնջ պատուի և պահի.
քան զպատկեր թագաւորական. որում մէքն կամք
՚ի ծառայութեան։ Լաւ զոհիմք ո՞չ զուստերս և
զդստերս այլ զՀոգի և զմարմին։ Զ՚մինն ՚ի հոգ-

և 'ի ծուփս մաշելով, և զմիւսն 'ի չարաչար ծա-
ռայութեան մեռուցանելով։ Հոգովք վարակեալք
անհանգիստ 'ի տուէ և 'ի գիշերի, ամենեցուն ա-
տելի գոլով և թշնամի. և քան զգազան մի չար ան-
ընդել ագահութեն երևեալ։

Տեսեր զագահութեան զկռապաշտութիւնն,
քանզի որ ունին զնա՝ զՏԾ ընդ մամոնային փոխա-
նակեն, որպէս յայնժամ ապերախտն իսրայէլ ընդ
որթուն անասպատին։ Ընդ տեսցուք և զայլ ևս ա-
գահութիւն որ իբրև զպատկերս մեռելոտիս 'ի հո-
գիս և 'ի միտս մեր կանգնեմք և գարշելեացն եր-
կրպագանեմք։ Օ՜հ՜նչ այլ ինչ է արբեցութիւն և
անյագութիւն որոյ այնչ. եթէ ոչ անյայտ կռապաշ-
տութիւն։ Լ՚ուր առաքելոյն. լալով ասեմ ասէ ըզ-
թշնամեացն Քրիստի. որոց ՏԾ որովայն իւրեանց է.
և փառք ամօթն իւրեանց։ Ընդ զինչ այլ ինչ էր
կռապաշտութիւնն. եթէ ոչ թշնամութիւն խաչին
Քրիստի։ Լու որք զդիտնէ զիտան ՏԾ պաշտէին. զնոցն
ծանականս ծանակէին. խոստովանելով զնա արա-
ինչ գինւոյ և արբեցութեան։ Իսկ են որ քան զնա
ևս վատթարագոյնք են ոյք զգարշելի ախտն իբրև
զկուռս, կանգնեն 'ի միտն և հանապազ գարշելեացն
կան 'ի ծառայութիւն իբրև տերանց։ Որպէս իսրայէլ
յայնժամ քամոսայ գարշելոյն և աստղկանն պատ-
կերին. այսինքն Մոլոքոյ՝ զոր պոռնկութեամբ
'ի տանս նորա պատուէին։ Այլ կուռք սրամտու-
թիւն և բարկութիւն, որում իբրև պաշտօնեայք
Աստի չարաչար կամք 'ի ծառայութիւն։ Զ

կուռք կանգնեալք 'ի հոգի տրտմութիւն, ոխակալութիւն և ճանձրութիւն, որում հնազանդիմք և զրաս 'ի մեզ իսկ դարմանեմք։ Ա՛յլ կուռք փառասիրութիւն և մարդահաճութիւն։ Այլ և զհաւատն իսկ հաստատեն ըստ տերունական դատաստանին։ Զոր զինարդ ասէ կարէք հաւատալ՝ զի զիտառ 'ի միմեանց խնդրէք առնուլ։ Ա՛յլ կուռք չարագոյն քան զամենայն՝ ամբարտաւանութիւնն. որով առաջին ամբարտաւանին նմանեալ մարդիկ, ոչ յերկնից յերկիր կործանեցաւ. բարձր որոտալով 'ի վերայ համառոհմիցն, և զինքն իբրև զաստուած կործելով ապատան եղեալ 'ի հնարս իւր և 'ի զօրութիւն բազկի իւրոյ։ զաստուած ամենեին օգնական ոչ կարէաց 'ի վերայ գործոց իւրոց հոգւոցս կամ մարմնաւորաց։

Տեսեր զանիրաւէս կռապաշտութեան օրինակսդ, որովք միշտ անկողնատանքն և ոչ իմանամք, և ոչ ածեմք զնոսա զնորուստն մեր և զգատապարտութիւն։ Ա՛յդ եթէ հանդերձեալ եմք իբրև զբրիստոնեայս ելանել 'ի կենդաղոյս և մնանել առ ած, հակառակչքն վարեսցուք առ կռապաշտութիւնս այսոքիկ։ Օ մանանային կուռն խորտակեսցուք՝ ողորմածութեամբ և սփռելով և տալով աղքատաց։ ոչոյ արդարութիւնն մնայ մշանջենաւոր։ Ամենեին մի՛ ինայեսցուք և մի՛ ինչ թողցուք 'ի կրոդս յայսոյանէ։ Ա՛յլ զամենայն փշրեսցուք։ զամենայն խորտակեսցուք։ Այնթէ հնար էր և 'ի կարևորացն անգամ պարտեալք 'ի քաց լինել, և մինչև

ասեղն մի՝ մի՛ ստանալ յերկրաւորացս։ Օ՛ի ոչ է թէ կռապարիշտ այն միայն է, որոյ գոյ կարասի բազում, այլ որ ցանկայ և փափագի ստանալ զնա, և որ ինչ անկանի իւր առանձին պահէ։ Իսկ որուն և առատն է՝ի մատակարարել իբրև յայլ հաւատացեալ նմա ինչս՝ քսակ հոգևոր կարդան զնա։ Որպէս զՅովքն, որպէս զԼբրահամն, ոչպս զկուռնելիսն։ Իսկ զորովայնամոլութեան և զարբեցութեան կուռան փչրեսցուք ժուժկալութեամբ, սովով և ծարաւով, զի մի՛ ընդ մեծատանն այրիցիմք՝ի տապ տապակին, և կաթի մոյ ջրոյ արժանաւոր ոչ լինիցիմք։

Իսկ զկուռան գարշելի պոռնկութեան և վավաշոտցանկութեան խորտակեսցուք ողջախոհութեամբ և պարկեշտութեամբ։ Իսկ զբարկութեն և զսրտմտութեանն, քաղցրութեամբ և հեզութեամբ։ Իսկ ըզտրտմութեանն և զոխակալութեանն և զձանձրութեանն, սիրով խորտակեսցուք և հաշտութեամբ և քաջութեամբ։ Իսկ զփասիրութեանն անփառութիւն, զմարդահաճութեանն անաչառութեամբ։ Իսկ զանապարծութեանն ճշմարտութեամբ։ Իսկ զկուռան ամբարտաւանութիւն խորտակեսցուք խոնարհութիւն։

Արգ. Հնորհ. յորդ. ա. Խուղթ. Յով. է. 21։

ԳԼԱՒԻՒ Բ.

Ի գծագրելն աստ զցաւալի և զսրտաշարժ անցիցն յովսեփայ նահապետին՝ զորս կրեաց յատելութենէ

ոխակալ և նախանձալիր եղբարցն, ՅԾատուր շնորհիւ և համբերութեամբ հոգւոյ եղև քան զամենայն հաՀելի բարերար կամացն Յայ, վասնորոյ և Հոխացաւ երկնապարգև իմաստութեամբ և փառաւորեցաւ յամենայնի, ըստ այնմ «Այս նահապետքն նախանձեալ ընդ յովսեփայ վաՀառեցին յեգիպտոս, և էր ՅԾ ընդ նմա, և փրկեաց զնա յամենայն նեղութեանց նորա, և ետ նմա շնորհս և իմաստութիւն առաջի փարաւոնի արքային եգիպտացւոց, և կացոյց զնա իշխան եգիպտացւոցն և ամենայն տանն նորա»։ Գործ. Է. 9. 10։

Յաղագս այսր չարաչար նախանձուն եղբարց նահապետին յովսեփայ՝ առաջին պատՀառ, ցուցանէ Հեղինակն լսարանին զծաղկեայ պատմուՀանն, զոր արար Հայրն յովսեփայ մեծ նահապետն յակովբ «Այս իսրայէլ սիրէր զյովսէփ առաւել քան զամենայն որդիս իւր. քանզի որդի ծերութեան էր նորա, և արար նմա պատմուՀան ծաղկեայ։ Իբրև տեսին եղբարքն նորա թէ սիրէ զնա Հայրն քան զամենայն որդիս իւր, ատեցին զնա, և ոչ կարէին խօսել ինչ ընդ նմա խաղաղութեամբ»։ Ծնն. Լէ. 3. 4։ Վերայ բանիցս այսոցիկ սուրբն Լուքրեմ գրէ այսպէս «Ցաշունչ սուրբ գիրն առաջին բանիւն յայտ առնէ արդարացի իրաւունս յակովբայ նահապետին որ արար որդւոյ իւրոյ զայն գեղեցիկ պատմուՀան ծաղկեայ, որում արժանաւոր իսկ էր բարեբարւոյ վարուք 'ի տիս մանկութեան։ Իսկ երկրորդիւն յայտ առնէ զանիրաւութիւն չարաչար

նախանձութեան և առելութեան՝ զոր վաղագոյն քարոզեալ ունէին 'ի սրտի իւրեանց եղբարքն նոցին, և չունէին 'ի սիրտս իւրեանց գանձեալ զաստուածահաճոյ եղբայրսիրութեան ազնուաշուք բարութիւնս. որ ըստ սրբազան առաքելոյն Պօղոսի. «Սէր երկայնամիտ է քաղցրանայ, սէր ոչ նախանձի, ոչ ամբարհաւաճէ, ոչ հպարտանայ, ոչ յանդգնի, ոչ խնդրէ զիւրն». ա. Կորն. ԺԳ. 4. 5։

Ուրեմն սիրալ է դատումն Հեղինակին, զոր գրեալն է

«Յակովբ առնլի սէր մի ունէր Յովսեփայ վերայ, անտարակոյս առնոր գովելի յատկութիւնելի համար, ուստի և իրաւունք ունէր սիրելուն, բայց իրաւունքն չունէր այն աւելի սէլը դրսէն սլ աչք զարնող կերպով ցուցանելու, ապա թէ ոչ հարկաւ իւր սիրելի որդւոյն վնաս պիտի լինէր թէ իրէն և թէ անոր միւս եղբարցը Նախանձը անոր վերայ շարժելէն»։

Այո՛ սիրելի, այդ ամենայն խորհրդածութեանն ձեր վախճան՝ հայի խապառ 'ի մնոտի մարդահաճութեան խորհուրդս, և ոչ յաստահաճոյ գործոց կատարելութիւնս։ Պիտէր աստահաճոյ մեծ նահապետն յակովբ, զի աստուած ցրտէ զոսկերս մարդահաճոյից»։ Սաղ. ԾԲ. 6։

Բայց ծանիր, զի սուրբ նահապետն յակովբ ոչ զհետ լինէր մարդկեղէն մտածութեանց և խորհրդոց, այլ աստային անժխտելի ազդեցութեանց, յոյր սակս կոչեցաւ իսրայէլ, որ թարգմանի աստատես, և տեսանէր, զի աստուած էր ընդ որդւոյ իւրում յովսեփայ, և զոր ինչ առնէրն նա հաճելի էր այ, ուստի կարէր ասել ըստ առաքելոյն պօղոսի. «Մի՛դ մարդկան հաճոյ լինիցիմ՝ թէ այ, կամ խնդրիցեմ

մարդկան հաճոյ լինել, եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէր, ապա քրիստոսի ծառայ չէ էի։ Գաղ. Ա. 10։

Ի վերայ այսր իրաւանց մեծ նահապետին յակովբայ, գրէ սուրբն օհան ոսկեբերան «Դարի մարդն այ մեծ նահապետն յակովբ՝ ի բարի գանձուց սրտի իւրոյ ելեան զբարիս աստուծոյ գործով յայտնելով և առնելովն որդւոյ իւրում յովսեփայ զծաղկեայ պատմուճան՝ ի նշանակ ներքին ծաղկեալ և զարդարեալ աստուծոյ իմաստութեան և բարոյականութեան նորին ըստ անժխտելի վճռոյն փրկչին մերոյ յիսուսի եթէ «Արդ բալի՝ ի բարի գանձուց սրտի իւրոյ հանէ զբարիս», իսկ եղբարքն նորին յովսեփայ արդարոյն եղեն ըստ օրինակի չար մարդկանց, որ՝ ի չար գանձուց սրտից իւրեանց հանեն արտաքս ժողովեալս՝ ի սրտի իւրեանց զչարաչար նախանձուխս, այնչափ ատեցին զնա՝ մինչև վաճառեցին զնա յեգիպտոս, բայց էր աստ ընդ նմա, և՝ ի վերայ նոցա կատարեցաւ վճռական բանն տէրունական եթէ՝ «Արդ չար՝ ի չար գանձուց սրտի իւրոյ հանէ զչարիս». Մատ. Ժէ. 35։

Այս ուրեմն իրաւամբ էր ծերունի նահապետին յակովբայ արարք ըստ կամաց այ. իսկ եղբարցն յովսեփայ նախանձալիր խորհուրդքն չարաչարութիւն և անիրաւութեան իսկ էր, և սատանայական թելադրութեան, օրինակ եղև չարութիւն սոցին չարաչար գործոց և աստուածընդդէմ խորհրդոց տիրանենգ խաչահանուացն քրիստոսի փրկչին աշխարհի, որպէս և գրեալ է. թէ առ նախանձու մատնեցին զնա քա-

Հանայս վեռին։ Մատ. ԻԷ. 18։ Մարկ. ԺԵ. 10։

ԳԼՈՒԽ ԼԹ.

Լ.Ա՛ յերեսն 104 գրէ յաղագս կրկնակի առաքմանն նահապետին յակովբայ զորդիս իւր յեգիպտոս առ յովսէփ։ որ փոխանակ փարաւոնի արքային տէր և իշխան նստէր ի քաղաքի անդ։ Լ.Ա՛ քանզի օր.քան զօր նեղէր ի սաստկութէ սովոյն, և միանգամայն ի հարկադրեալ խնդրանացն յովսեփայ պարտաւորեցաւ անշուշտ արձակել և ընդ եղբարցն զբենիամին, որ էր միակ մխիթարութիւն ծերութեան իւրոյ։ Լ.Ս և յովսէփ կալեալ ունէր զմիւս սիրելի զորդին իւր զշմաւոն ի պատանդի, և որովհետև երաշխաւոր եղև Ռուբէն որդի իւր խոստանալով ինքնին ինամել և ածել ընդ իւր յեգիպտոս, և անդրէն անվնաս դարձուցանել զնա առ ինքն։

Այսպէս ծերունի նահապետն յակովբ ի սաստկութենէ հայրական սիրոյն ստիպեալ ասաց զորդիսն իւր։ Օ՜խ անորդի արարիք, յովսէփն չէ ի միջի, շմաւոն չէ ի միջի, և զբենիամինն ևս առնուցուք, յի՞մ վերայ եկն այս ամենայն։

«Այդ ե՞րբ յովհան ոսկեբերան ի մեկնութեանի քանիցս սպասիկ գրէ այս պես։ Տե՛ս թէ նահապետն յակովբ ոչ ըստ օտարաց խօսի և յայտնէ զիւր սրտին ցաւս, զոր կրէր ամ համբերութեամբ և լի յուսով, այլ միայն որդւոց իւրոց, զի ծանիցեն սրտի մտօք զիւր հայրական սիրոյն զօրութիւնն առ որ-

գիս իւր։։ Ի մեկն, Ն։ՆՆ, խբ, 26։ Վերելի ընթեր-
ցողք, ոչ չի սխալ է սատ հեղինակին այսօրինակ
խորհրդածութիւնն, որ ըստ քմաց զարտուղի ըն-
թանայ, զանց արարեալ զճշմարտութեամբն,
։։Զիս անպատակ ըրեք թողուցիք, Յովսեփ չկայ, շմաւն չկայ, Սի-
մայ ընդհամիրք սիսի առնուք։ Այս ամն փորձանքն ելլը իմ գլուխ
պատուած են եղեր, Յակովբայ այս ետքին խոսքը որչափ ալ շփոթ-
ելու պէս երևնոց այնպիսի ալդալոց մը բերանը ինչ այս մտածե-
լու է, որ արդար մարդն ալ ամենայն իրաւունք և սղատութիւն ու-
նի իւր սրտին կսկիծը ուցաւը ուզած ատենը յայտնելու։ բաւական
է, որ ատուածոյ ամենատուրը կամացն ու նախախնամութեանն դեմ
չգանգդի յուսահատութեամբ։։։

Այս սպասատ և արժանի է բաղդատել զբացատրութի
հեղինակին ընդ իսկական բանիցն սրբոյն Յակովբայ,
և ուրանօր յայտնի երևին սխալմունքն, վասն զի
եթ նահապետն Յակովբ յուսալիր խորհրդով ասաց
Ի սրտի իւրում։։Յովսեփ չէ Ի միջի, շմաւն չէ
Ի միջի, և զբենիամինն ևս առնուցուք։։։ Ահա
յայտմ բանի սատ՝ եթն եփրեմ, ՝ՃԾ խմատ եթ նա-
հապետն Յակովբ զհաստատ յոյս իւր յայտնէ յա-
սելն։։Յովսեփ չէ Ի միջի, շմաւն չէ Ի միջի։։։ Յու-
սամ եթէ կենդանի են սիրելի որդիք իմ Յովսեփ
և շմաւն, բայց այժմ չեն Ի միջի մեր ասա։

Տես զինչ բացատրութիւն տայ Հեղինակն լա-
բանին կարի յուսահատութիւն ցուցանէ հակառակ
յուսալիր խորհրդոյ մեծի նահապետին գրելով։
։։Յովսեփ չկայ, շմաւնը չկայ։։։

Ապա այլ է ասել չկայ, այսինքն ոչ գոյ, և այլ է ա-
սել չէ Ի միջի, այսինքն կան՝ բայց չեն Ի միջի մե-
րում, ոչ գոն յուսահատ առնէ զմիտս, իսկ չեն Ի

միջի յոյն հաստատեն, և ակնկալութիւն վերատին տեսանելոյն յայտնեն, որպէս եղև իսկ երանելի Նա-հապետին յակովբայ վերատին ՅԾ-ային խնամոքն կենդանի պաշտպանեալ զսիրելի որդին իւր զյոսէփ արքայական փառօք բարձրացեալ 'ի յեգիպտոս, և զշմաւօն ընդ նմին պատուասիրեալ։

Ահա կարեմք յիշել աստ զհոգեշունչ բանս սրբոյն առաքելոյն պօղոսի, որ յայտնի իսկ նկարագրեցաւ յԾՅ-ահաճոյ անձին մեծի նահապետին յակովբայ։ Այլ ոչ այսչափ միայն, այլ և պարծիմք և 'ի նեղութիւնս մեր, քանզի գիտեմք եթէ նեղութիւն զհամբերութիւն գործեն, համբերութիւն զհանդէս, հանդէս զյոյս, յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ, Յռոմ. Ե. 3։

Արեւ թէ Հեղինակն լսարանին չէ հանդիպեալ սրբոյն եփրեմի մատենագրութեան, որ զամենայն դիպուածս յովսեփայ նահապետին խորհրդաւորացուցանէ։ Այլ յովսէփ 'ի գբոյ անտի 'ի թագաւորութենէ արքայութեան, և յանարգանաց 'ի փառս պատուոյ, և տէր մեր 'ի խաչէ անտի ընդ երկինս, և 'ի դժոխոց անտի յաթոռ փառաց։ զյովսէփ իբրև տեսին եղբարք նորա՝ ասեն «ահա ոհաւանիկ երազատեսն՝ որ դիմեալ գայ առ մեզ, եկայք ըսպանցուք զնա, և տեսցուք թէ երազք նորա ընդ ինչ ելանիցեն»։ Այս զտէրն մեր իբրև տեսին մշակքն ասեն «սա է ժառանգ այգւոյս, եկայք ըսպանցուք զսա, և եղիցի այնուհետև մեր ժառանգութիւնս»։ Յովսէփ անկաւ յերկուս գուբս, 'ի

մի՝ վա՛ երաշոց իւրոց, և 'ի միւսն ևս՝ վա՛ յաղթուե՛
իւրոյ 'ի վերայ ցանկութեանն։ Այս տեր մեր ար-
գելաւ յերկուս գոլս, 'ի մարմին անդ՝ վասն ո-
ղորմութեան իւրոյ, և 'ի դժոխս՝ վասն յաղթուե՛
իւրոյ 'ի վերայ մահու։ Յովսէփ փոխանակ պոռնիկ
տիկնոջ իւրոյ առ նա իւր կին զասանէթ, և տեր
մեր փոխանակ սպանօղ առաջին ժողովրդեանն ընտ-
րեաց իւր զեկեղեցի սուրբ։ Մինչև եկեալ էր
Յովսեփու յերկիրն եգիպտացւոց, շքով և պատ-
ուով էր առ հօր իւրում, և տեր մեր մինչև ե-
կեալ էր յաշխարհ այսր՝ փառօք և գոհութեամբ
էր առ առաքիչն իւր։ Արքան առաջին եղբարցն
իւրոց, և ապա հարց իւրոց։ Արանզի և եղբարքն
նորա սպագին նմա երկիր յառաջագոյն, և ապա յեր-
կրորդ գալստեանն հայր իւր։ Յովսէփ արգելեալ
կայր 'ի բանդի անդ իբրև չարագործ։ Իբրու զգե-
ցեալ էր զամ հեղուի զգաստուե՛, և տեր մեր եղ
'ի խաչ իբրև զմեղաւոր, իբրու նա յաղթեց աշխարհի,
Յովսէփ եմուտ յերկիրն եգիպտացւոց և ցանկա-
ցաւնմա տիկնն իւր, և տեր մեր եմուտ 'ի գերեզ-
մանն և ցանկացաւնմա դժոխք։ Տիկին ընթացաւ ա-
պականել զյովսէփ, և դժոխք ընթացան ապականել
զտէր մեր։ Այլ կինն կարաց յաղթել զօրութեն յով-
սեփու, և ոչ դժոխք կարացին յաղթել զօրութեան
տեառն մերոյ։ Տիկինն յովսեփու զնորն նորա բու-
ռն եհար, և յովսէփ սպրեցաւ, սոյնպէս և դժոխք
զհանդերձն տեառն մերոյ բուռն հարին, և մար-
մին նորա յարեաւ և կանգնեցաւ, յովսէփ զկալա-

նաւորսն կերակրէր, և տէր մեր 'ի դժոխս մեռեալսն լուսաւորու լինէր։ Պ՚ուտ յովսէփ 'ի բանդ անդրը և մխիթարեաց զկալանաւորսն, մուտ տէր մեր 'ի դժոխս և մխիթարեաց զմեռեալս։ Լ՚ս զորօրինակ մեկնեաց յովսէփ ծառայիցն փարաւօնի, զմինն դարձոյց կացոյց 'ի տակառապետութեանն իւրոյ, և զմիւսն հան 'ի խաչ, սոյնպէս և տէր մեր զմինն մոյծ 'ի դրախտն փափկութեան վասն հաւատոց իւրոց և 'ի վը միւսոյն եդ վՀիւ պատժոց վասն երկմտութեանն իւրոյ։ Լ՚ս զորօրինակ դատեցաւ յովսէփ զդատիչսն իւր և արկ 'ի բանտ զայնոսիկ, որք զնայն արգելին 'ի գուբ անդր, սոյնպէս և տէր մեր լինի դատաւոր խաչահանուաց իւրոց։ Լ՚ս որպէս զենաւ ուրն և ապրեցաւ յովսէփ, սոյնպէս ետ տէր մեր զմարմին իւր 'ի խաչ վասն փրկութեան եկեղեցւոյ իւրոյ։ Լ՚ս զորօրինակ պարեգօտն յովսեփու թափաւեցաւ արեամբ, բայց մարմին նորա ինչ ոչ վնասեցաւ, սոյնպէս և զմարմին տեառն մերոյ կալան, և ոչ զՀՀծութիւն նորա։ 'ի Պ՚ենկ. արա. Գլ. Թ։

ԳԼՈՒԽ Ժ

Ի 121 երեսն սոյն գլխոյ զայն ՀՀծային ՀՀմարիտ բանն յիշելով, որ առ Մաթգարէն մովսէս, եթէ «Լ՚ս եմ աստուած որ էն», Համարձակի գրել Հեղինակն լսարանին այսպէս։

«Որն բառը աստուծոյ անուն չէ, Հապա աստուածային բնու-

թեան յաւիտենականութիւնը, անեղութիւնը ու անփոփոխութիւնը ցուցանող գեղեցիկ խօսք մը։

Ով սոսկալի սխալմունք՝ որ համարձակեալ է զայլ այլութիւն և զփոփոխութիւն տալ ՅԾՍՂՈՒՆՉ ՅԲ գրոյն անայլայլելի և անփոփոխելի մտաց և իսկութեան բանիցն այսպէս գրելովն։

«Որէն բառը աստուծոյ անունը չէ»

Մի թէ աստուած խաբեաց զմովսէս ծառայն իւր յասելն «Ես եմ աստուած որէն» և թէ այսպէս ասացես ցորդիան իսրայէլի՝ որէն առաքեաց զիս առ ձեզ» Լ.ելից՝ Գ՝ 12։

Հաւատամք զի աստուած է Ճշմարտութիւն՝ ուստի ոչ խաբէ և ոչ խաբի։ Ուրեմն կարի յոյժ սխալեալ է յասելն՝

«Որէն բառը աստուծոյ անունը չէ»։

այսու սխալ բանիւն հակառակի ուղղափառ վարդապետութեանց սրբոց հարց եկեղեցւոյն քան։

Տես բարեմիտ ընթերցող՝ սուրբն յովհան Խակեբերան 'ի վերայ սոյն ՅԾՍՂԻՆ բանիցն զնրպիսի ուղղամիտ վարդապետութիւնս առնէ գրելովն այսպէս «Լ.ս 'ի հարցանել զանուն ՅՍ առաքչի նորա, ասիցէ Եհովան՝ այսինքն՝ է՝ կամ որէն առաքեաց զիս՝ այս է՝ նա՝ որ է տէր աստուած յաւիտենական՝ ինքնագոյ՝ էապէս անփոփոխ՝ առաքեաց զիս 'ի փրկել զձեզ՝ և կամի զի անփոփոխ կացցեն և մնասցեն խոստմունք իւր»։

Այս բան անփոփոխ առեալ գրէ Հեղինակն տեսութեան սուրբ գրոց ՅՍ՝ հատ՝ 122 թիղթահամարի։ Այս բան համեմատ է սրբոյն յովհանու աւ-

տարանչի յայտնութեան բանիցն յորում լսելի եղև ձայնել յերկնից եթէ, Սա՛ Սա՛ Սա՛ տէր աստուած ամենակալ, որ էն և ես, և որ գալոց ես։ Գ. 8։

Տես 'ի վերայ այսր մեծի և սքանչելի անուանն այդ զինչ հրաշալի վարդապետութիւնս առնէ աստաքելապատիս Սբ գրիգոր Լուսաւորիչն և հայրապետն մեր գրելով և քարոզելով այսպէս։ Լուսաբարերարն և հաստատիչն, աստուած էր և է։ Լոր անսկիզբն յիւրում փառսն, և մշանջենաւոր անվախճան առ ինքեան արարածոց։ Լու ճշմարտութիւն էր և է, յեռութեան իւրում անփոփոխ և հաստատութիւն արարածոց։ Ինքնէպ ամենաշնորհ գիտութիւն էր և է յիւրում անբաւութեն առ լուսաւորութիւն արարածոց։ Ինքնաս իմաստութի իրաւունք էր և է յիւրում անճառելի նոխանմութեանն առ արարածս ամ կենարար, ամենագիտ ամենաշնորհ խրատիւք։ Ինքոփոխ հաւատարմութեամբ էր և է յաւերժ փրկական խորհրդով յազգս մարդկան, առ մերձաւորութի հաղորդութեան կենդանական սիրով։ Ամենակալ զօրութի էր և է, յիւրում գոյութեն առ 'ի զօրացուցանել զզօրս իւր 'ի մարտս հոգևոր պատերազմի, լինել յաղթող յերևելիս և յանտեսանելիս։

Կենդանի երանութեամբ սիրոյն ածէ էր և է, բորբոքմամբ առ ինամեալսն, պահել զարդարս, և 'ի զղջում ածել զմեղաւորս։ Լուսաւորեալ և փառաւորեալ սրբութեամբն էր և է, 'ինորոգել 'ի պայծառացուցանել և 'ի փառաւորել զարարածս

բազմաշող շնորհքն և լուսաւոր աւազանաւն։

Պնթութեան խնամքն էր և է, անպատում բարութեամբն առ ի խնամածուն արարածոց երևելեց և անելուութիւ, զի հացեն ի նաւահանգիստն բարեաց աւետեացն խոստացելոց երկնաւոր կոչմանն, որ լին է կենդանութեամբ ի կեանս։

Ողորմութիւ և շնորհք իւրովք էր և է, իւր անպատում բարութիւն և ամենառատ պարգևօքն ի տալ և ի ցուցանել զարդիւնս մարդասիրութեանն և զկոչումն ընծայութեն յորդեգրութեանն։

Երկայնամիտ և ներող էր և է, քաղցրութեամբ և բարերար և անդիշաչար կամաք ներել և ոչ զամենեսեանն պատժել, զի դարձեալ ի մեղաց կեցցեն արդարութեամբն։։ Յաճախ. Ն՚առ. զ։

«Ոչ էապէս մեզ քարոզէ
զորէնն ուսեալ ի մովսիսէ
թէ ՀԾ էր ի սկզբանէ
և ոչ եղեալ է յումեքէ։։ յիսուս որդի։

«Ոչ կ՚ուզեցին մատանեաւ քահանայապետին, որուներ զանփակ գիրն զէ՚անուն ՀՅ քանդակուած յակրն մատանոյն։ Յովհն. Ն՚ործոր. ի Մեկն, Մատ. իէ. 66։

Գ ԼՈՒՅԺ ԺԱ.։

Ըստ դասախօսութիւնս առնելով Հեղինակն լարանին ճառէ զհրամանէն ՀՅ առ մարգարէն մովսէս առ ի գնալ յեգիպտոս ի փրկիչ իսրայէլեան ազգին և ընկերակցութեամբ ահարոնի ի ձեռաց

խստասիրտ բռնաւորութեան և չարաչար խոշտանգանաց փարաւոնի փրկել և ազատել զամ ժողովուրդն համայն ստացուածովքն և բնակեցուցանել յանապատին առ 'ի համարձակ պաշտել զաստուած զարարիչն երկնի և երկրի։

Իբրև յաճախային յամենազօր հրամանէն արիացեալ մովսէս և ահարօն սքանչելի համարձակութիւն մտին առ փարաւոն և ասացին ցնա. Այսպէս ասէ տէր աստուած իսրայէլի, արձակեա զժողովուրդ իմ, զի ա՞ր ասացեն ինձ տօն յանապատի։ Իսկ ասէ փարաւոն, ո՞վ է նա, որում լուայց ձայնի նորա արձակել զորդիսն իսրայէլի, ո՛չ գիտեմ զտէրն, և զիսրայէլ ո՛չ արձակեմ,, ։ Ելից. է. 1. 2։ Իսկ քանիցս կրկնէին մովսէս և ահարօն զանիծխտելի հրամանն աճախային նա առաւել ևս չարացեալ նեղէր և տանջէր ըզժողովուրդն այ ազգի ազգի տառապակրութեամբ վայ ամենակարող տէրն 'ի ձեռն մովսիսի և ահարօնի տասնեակ հրաշս եցոյց 'ի սաստիկ հարուածս եգիպտացւոց վասն խստասրտութեան և ամբարտաւանութեան փարաւոնի արքայի նոցին։ Թէպէտ փարաւոն զյոյս իւր եդեալ 'ի վերայ կախարդացն եգիպտացւոց՝ կոչեաց զնոսա, որոց գլխաւորքն էին յանէս և յամբրէս և հրամայեաց դիւթութեամբ և կախարդական արուեստիւ իւրեանց խափանել զսքանչելի հրաշագործութիւնս մովսիսի և ահարօնի ,, Ելից. է. 11։ Բ. Տիմ. գ. 8։

Բայց սոքա ևս քան զևս ամօթալից մեկնեցան անտի, և ամենայն կախարդասարաս արուեստք իւ-

ըեանց և հմայութիւնք, և կոչմունք սատանայականք ընդունայնք եղեն։ Մինչև ահիւ և տագնապաւ մեծաւ բռնադատեցան խոստովանել և աղաղակել 'ի լուր ամենեցուն «Այթէ մատն Աստուծոյ է այդ»։ Այլ։ գ։ ը։ 19։ Որ ըստ սրբոյն Եփրեմի մոգքն քարոզեցին, եթէ հրաշագործութիւնք, որ եղև 'ի ձեռն մովսէսի և ահարոնի, էին վերին ամենակարող զօրութեամբն աջոյն բարձրելոյ։

Այդ զայս ամենայն 'ի միտ առեր սիրելի ընթերցո՛ղ, ե՛կ լո՛ւր ուրեմն և զինքնահնար թիւր վարդապետութիւնն Հեղինակին լսարանի, որ 'ի սոյն գլխի 'ի 127 և 'ի 131 համարս, յորում գրէ ընդդէմ ճշմարտութեան։

«Մանաւանդ որ այս ալ ստոյգ է, որ հրաշքներու հրաշալի գործողութիւններ ընելը միայն մարգարէից ու արդարոց պահած չէ աստուած, հապա չարերուն, սուտ մարգարէներուն ու կախարդներուն ալ թող կուտայ երբեմն աստուած որ ընեն։ . . Բայց թէ որ ըսենք թէ աստուած թոյլ տուաւ որ այն անգամ ալ կախարդներուն խաբէական հնարքը սատանայի ուժովը յաջողի, ինչպէս ուրիշ ատեններ ալ թոյլ տուած կայ, դարձեալ աստուածաշնչին ու ընդհանրապէս եկեղեցւոյ վարդապետութեան հակառակ բան մը ըսած չեմք լիներ։ Քրիստոս տէրն մեր ինքն ըսած է աւետարանին մէջ թէ»։

Զի յարիցեն սուտ քրիստոսք և սուտ մարգարէք, և տայցեն նշանս մեծամեծս և արուեստս, մինչև մոլորեցուցանել թէ հնար ինչ իցէ և զընտրեալսն։

Սուտ քրիստոսներ և սուտ մարգարէներ պիտի ելնեն աշխարհիս երեսքերն, և մեծամեծ հրաշքներ, ու այնպէս զարմանալի բաներ պիտի ընեն, որ իրենց մնայ նէ ընտրեալներն ալ պիտի մոլորցնեն»։

Յայտնի շփոթիչ բարեխոհ մտաց, թիւր դասա-

տուութիւն հակառակ ՅԾաշուն չ սուրբ գրոց, անխիղճ պաշտպանութիւն կախարդական թիւրութեց, վանորոյ գրէ համարձակ։

«Մանաւանդ որ այս ալ ստոյգ է, որ հրաշքներու հրաշալի գործողութիւններ ընելը միայն մարգարէից ու արդարոց պահած չէ աստուած, հապայ չարերուն ստուտ մարգարէներուն, ու կախարդներուն ալ թող կուտայ երբեմն աստուած, որ ընեն»։

Նրևի թէ դասատու վարդապետն կամ չէ 'ի միտ բերեալ զՀոգելից բանն խրատուց սրբազան առաքելոյն Պօղոսի, և կամ գիտելով զանցառութեան է տուեալ, որ բացայայտ գրէ առ Կորնթացիս այսպէս «Եւ մի՛ լինիք ըմբակից անհաւատից, քանզի զի՞նչ հաղորդութիւն է արդարութեան ընդ անօրէնութեան, կամ զի՞նչ հաւասարութիւն է լուսոյ ընդ խաւարի. և կամ զի՞նչ միաբանութիւն է քրիստոսի ընդ բեղիարայ. կամ զի՞նչ բաժին կայ հաւատացելոյն ընդ անհաւատին, կամ զի՞նչ նմանութիւն է տաճարին Աստուծոյ» . Բ . Կորն . զ . 14 ։ 'Ի բնաբանի աստ գրէ սուրբն Յովհան ոսկեբերան «Օ՜իմարդ մարթ ի՞նչ է քրիստի, որ գլուխ է հաւատացելոցն, վարդապետ ճշմարտութեան, և ամենայն սրբութեան պատճառ, միաբանիլ իւիք ընդ սատանայի, որ անհաւատիցն է գլուխ, հայր ամենայն ստութեան և չարութեան, ապաքէն ամենայն իրօք է անհնարին»։

Հեղինակն լարանին զայս ամենայն ճշմարտութիւն 'ի բաց թողեալ հեռաւոր և անյարմար վկայութիւնք կամի հաստատել զխալ վարդապետութիւն իւր՝ գրելովն այսպէս։

«Բայց թէ որ լսեմք թէ աստուած թոյլ տուաւ, որ այն անգամ՝ ալ կախարդներուն խաբէական հնարքը սատանային ուժովը յաջողի, ինչպէս որ ուրիշ ատեններ ալ թոյլ տուած կայ. գարձեալ աստուածաշնչին ու ընդհանրապէս եկեղեցւոյ վարդապետութեան հակառակ բան մը ըսած չեմք լիներ, Քրիստոսէրն մեր ինքն ըսած է աւետարանին մէջ թէ։։

Զի յարիցեն սուտ քրիստոսք և սուտ մարգարէք, և տայցեն նշանս մեծամեծս և արուեստս, մինչև մոլորեցուցանել թէ հնար ինչ իցէ և զընտրեալսն։

Այստու անժխտելի բանիւ յայտ փրկչին մերոյ ոչ հաստատի եթէ՝ աստուած թոյլատրէ կախարդաց, որպէս զի հնարք նոցին խաբէութեան զօրութեն սատանայի յաջողեսցի, այլ զինչ՝ անսահման երկայնմտութեամբ խաբէութեան և չարահնար որոգայթից սատանայի համբերէ և երկայնամտէ, զի ընտրեալ ծառայք իւր հաստատուն յուսով և սիրով յաղթեսցեն ամենայն հնարից չարութեան, և ընկալցին զյաւիտենական փառացն զպսակ. լուր սրբազան աւետարանչին Յովհաննու «Սիրելիք մի՛ ամենայն հոգւոյ հաւատայք, այլ ընտրեցէ՛ք զհոգիսն, եթէ յայ իցեն. զի բազում սուտ մարգարէք եղեալ են յաշխարհ։ Նա մեք այսուիկ ճանաչեմք զհոգին այ։ Ամենայն հոգի որ խոստովանի զյիսուս քրիստոս մարմնով եկեալ՝ յայ է նա և ամենայն հոգի, որ ոչ խոստովանի զյիսուս քրիստոսն մարմնով եկեալ՝ չէ նա յայ, և այս նեռինն է, զորմէ լուարուք եթէ գալոց է, և արդէն իսկ յաշխարհի է։ Դուք յայ էք որդեակք և յաղթեցէք նոցա, զի մեծ է, որ 'ի ձեզ է, քան զայն, որ

յաշխարհին է,, · ՝ · կամ · ՝ · 1—4 ։

Այնթէ կամիս հասու լինել սքանչելի համբերութեան ամենակարողին ՝այ՝ի սուտ մարգարէից և կախարդասարաս մոլորեցուցչաց, լո՛ւր յովհաննու ծործորեցողն երանելի՝ սբ վարդապետին,,Տե՛ս զերբեքկին պատերազմն՝ որ՝ի մոլորեցուցչաց մարգարէից լինի, և որ՝ի պատերազմողաց, և որ՝ի սուտ եղբարց, որպէս պօղոս գրէր թէ, վիշտս՝ի սուտ եղբարց, որք են հերձուածողքն, քանզի զանուն քրիստոնէի ունէին, և զուսումն սատանայի, որպէս արիանոսքն և նեստորեանքն և ապողինարեաքն և նաւատիանոսքն, և այլք բազումք։ Քանզի որպէս՝ի հնումն ճշմարիտ մարգարէից սուտ մարգարէքն յառնէին, սեդեկիոս և այլք բազումք, նոյնպէս և՝ի նորս յաւուրս առաքելոցն և հայրապետաց սուտքն արձանացան, որպէս յիշեն պօղոս և յովհաննէս և պետրոս՝ի թուղթս իւրեանց։ Եւ՝ր վասն, մի՝ զի ճշմարտութիւնն՝ի մէջ ստոյն առա՛ւել պայծառագոյն երևեսցի ըստ ասկոյ օրինի, մերձ գոլով խրթնեռանգ կապուտակի, երկրորդ՝ վասն ընտրելոցն, որպէս ասացաք· զի երևեսցին,, ՝ի Ա՛ենկ· Ա՛ատ· Իդ· 11։

Տես՝այ ճշմարտութիւնն միշտ առեալ է և ատէ զխաբէութիւնս և զստութիւնս մոլորեցուցիչ կախարդաց, և ո՛չ երբէք զօրութիւն տայ նոցա՝ի գործադրութիւն չարութեանցն ,,Ո՞հետ վհկաց մի՛ երթայցէք, և՝ի տգէտս մի՛ յարիցէք պղծել նոքօք· ես եմ տէր՝ աստ ՝ձեր,, ։ Ղևտ· ԺԸ· 31։

Յոյժ ատելի են առ Ա՛յ սատանայական կախար-
դութիւնք. ո՞վ ո՞ր բարի և համեղ է տէր հո-
գի. քոյ յամենեսեան. վա՜յ զյանցաւորս առ սակաւ
սակաւ յանդիմանես, և որովք մեղանչեն, յուշ
արարեալ խրատես 'ի քեզ տէր։ Այսպէս զհին բնա-
կի՛չն սրբոյ երկրի քոյ առեցեր վասն զգարշելի
գործ գործելոյ, զկախարդութեց, և զանսուրբ նը-
ուիրաց։ Լամաստ. ԺԲ. 1. 2. 3. 4։

Տես և 'ի գործս առաքելոց, զի ուր և փայլեցաւ
սքանչելի լոյս Ճշմարտութեան հաւատոյ, խսպառ
մերժեցաւ անտի կորստական խաւարն մոլար գի-
տութեան չարահնար սրուեստից մոգութե և կա-
խարդութեան։ Լինկնդնէին ժողովուրդքն բանիցն
փիլիպպոսի միաբան 'ի լսել նոցա և 'ի տեսանել
զնշանսն, զոր առնէր։ Անզի բազումք՝ որ ունէին
զայսս պիղծս, աղաղակէին 'ի ձայն մեծ, և ելանէ-
ին։ Այլ բազում անդամալոյծք և կաղք բժշկէին։
Այլ եղև ուրախութիւն մեծ 'ի քաղաքին այնմիկ։
Այր ոմն սիմոն անուն յառաջագոյն էր 'ի քա-
ղաքին, մոգ էր, և ապշեցուցանէր զազգն սամարա-
ցւոց, ասել զանձնէ թէ ինչ մեծ ոմն, յոր հայէին
ամենեքին 'ի փոքրուէ մինչև 'ի մեծամեծս, և ա-
սէին սա է զօրութիւն Ա՛յ, որ կոչի մեծ։ Հայէին
'ի նա վասն բազում ժամանակաց մոգութիւքն ապ-
շեցուցանելոյ զնոսա։ Բայց յորժամ հաւատացին
փիլիպպոսի, որ աւետարանէր վասն արքայութեանն
աստուծոյ, և անուանն յիսուսի քրիստոսի, մկրտէին
ամենեքեան արք և կանայք։ Այլ և ինքն սիմոն

հաւատաց և մկրտեալ կանխէր առ փիլիպպոս տեսեալ զնշանսն և զմեծամեծ զօրութիւնսն՝ որք լինէին, զարմանայր։ Գործ. Ը. 6. 13։

Ի վերջ բանիցս ասեմք զի Հելլենակն կարի զբաղեալ գոլով ի բազմատեսակ գործս, աստէն սխալեալ է ի գրելն։

«Ա՛ալ ստոյգ է, որ հրաշքներըն ու հրաշալի գործողութիւններ ընելը միայն մարգարէից ու արդարոց պահած չէ աստուած, հապայչարերուն, սուտ մարգարէներուն ու կախարդներուն ալ թող կուտայ երբեմն աստուած, որ ընեն»։

ԳԼՈՒԽ ԺԲ։

Ի դատաստանութեան աստ սկսանի ի զատական գառնազեղնուէն և գայ ի վէպս գիշերային կոտորման և սատակման անդրանկացն եգիպտացւոց ի յանդրանկանէ փարաւոնի մինչև ցանդրանիկս յետին գերւոյ և անասնոցն։ Իսկ առ ի ազատ մնալ անտի անդրանկացն եբրայեցւոց պատուիրեաց մովսէս իսրայելացւոց զենուլ վաղ ընդ փոյթ զոչխար ըստ իւրաքանչիւր տանց, և յարեանէ նոցա սրսկել զբարաւորաւ դրանց տանց իւրեանց, և զերկոքուքէք սեմովք, որպէս զի հրեշտակն սատակիչ անդրանկացն եգիպտացւոցն տեսեալ զարիւնն ի վերայ դրանց եբրայեցւոց մի՛ մոցէ ի տունս նոցա։ Զսոյն զայս խորհրդաւոր պատուէրս ըստ հրամանին այ եւ մարգարէն մովսէս իսրայելացւոց, և նոքա կատարեցին ամենայն փութով և զգուշութ, որպէս գրեալ է «Եւ խօսեցաւ տէր ընդ մովսիսի

և ընդ ահարձակ յերկրին Եգիպտացւոց, և ասէ ա-
միսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց առաջին եղի-
ցի ձեզ յամիսս տարւոյ։ Խօսեաց ընդ ամենայն
ժողովրդեան որդւոցն Իսրայէլի և ասասցես, 'Ի
տասներորդում ամենեսն այսորիկ առցեն իւրեանց
իւրաքանչիւր ոչխար ըստ տունս աղգայն ոչխար
ըստ երդ . . . Ոչխար կատարեալ՝ արու, տարեւոր
անարատ լիցի ձեզ։։ Ելից. ԺԲ. 1. 2. 3—5։

Տեսեր վասն նշանաւոր ոչխարին այսպէս գրեալ է
«Ոչխար կատարեալ արու տարեւոր անարատ լիցի
ձեզ։։ Իսկ 'Ի լարանի աստ զբառն (կատարեալ)
իսպառ 'Ի բաց թողեալ և բնաւին յապաւեալ է
իբրև զաւելորդ այսչափ և Ե.Ի գրելովն 'Ի 137 հա-
մարի։

«Ապստրեց մովսէս հրէից աստուծոյ կոչմանէ որ ամեն անարատ
մէկ ոչխար մը առնու մէկ տարեկան ու անարատ։ իրիկուան դէմ
մորթէ այն ոչխարը։ անոր արիւնը տանը դրսի դրան շեմքերուն
վրայ քսէ։։։

Համարձակութիւն մեծ, զի Հեղինակն լարանին
զշարունակութիւն ՅԾաշունչ սուրբ գրոցն պա-
կասեցուցեալ բարձեալ է մասն ինչ 'Ի բանէն,
զբառն՝ կատարեալ, յորում խորհուրդ մեծ պա-
րունակէր. քանզի բանիւս այսու սուրբ գիրքն նը-
շանակ և օրինակ լինել ցուցանէ զատկական գառն
այն՝ իսկական գառին Այ Յի փրկչին մերոյ, որ 'Ի խա-
չին պատարագեցաւ 'Ի փրկութի համայն աղգի մարդ-
կան. ուստի սրբոյն առաքելն պողոս զայս կատարել
խորհրդաւոր բառն բոլորովին տայ Յի քի փրկ-
չին մերոյ գրելովն «Զ'Յլ քրիստոս եկեալ քահա-

նայասլետ հանդերձելոցն բարեաց, մեծաւ և կա-
տարելոչն, և անձեռագործ խորանաւն այսինքն է,
որ ոչ յայսց արարածոց, և ոչ արեամբ նոխազաց
և զուարակաց. այլ իւրով արեամբն եմուտ միան-
գամ 'ի սրբութիւնսն՝ յաւիտենական գտեալ ըզ-
փրկութիւն,,. Լ՚բր. Թ. 11. 12. Ի վերայ առաքելա-
կան բանիցս գրէ սքն յովհան ոսկեբերան. Լատա-
ռեալ ասէ, զի ոչ գոյր 'ի նմա արատ կամ թերու-
թիւն, և մեծ՝ վասն մեծամեծս գործելոյն,. Ճ՚ Ա. 11.
Լ՚նա՛ ծանեաք զի այն գառն զատկական էր իսկ
օրինակ գառին ճշմարտութեան, զորմէ մարգարէա-
ցաւ Լ՚սայեաս կայծակնամաքուր մարգարէն եթէ
,,Լ՚բրև զոչխար 'ի սպանդ վարեցաւ, իբրև զորոջ
առաջի կտրչի անմռունչ կայ,. Ծ՚Ճ. 7. Լ՚ս սուրբ
մկրտիչն Յովհաննէս իբրև ետես, զի գայր առ նա՝
ասէ ,,Լ՚հաւասիկ գառն աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշ-
խարհի,. Յով. Ա. 29.

'Ի սոյն միտս երգէ հայաստանեայց սուրբ եկե-
ղեցին զայս երգ ներսիսի շնորհալւոյն մերոյ. Ո՚ ըն-
ջել փութայր հայրն փառաց զգիր պարտեաց մեր
յանցանաց, որով զգեցաւ որդին գթաց 'ի վեց
դարուն զմարմին մեզաց՝ հօր հաճութեամբ 'ի մահ
խաչին եկն կամաւ 'ի յուրբաթին, գառն զենաւ 'ի
հին զատկին փոխան գառանցն օրինակին,. Շ՚ար՚՚.
Ն՚անիր սիրելի ընթերցող գրեալ է վասն գառ-
նաղենութեան եթէ ,,Լ՚ւ ոչ թողուցուք 'ի նմա-
նէ յայգ, և ոսկր մի՛ բեկանիցէք 'ի նմանէ, և որ
ինչ մնայցէ 'ի նմանէ յայգ՝ հրով այրեսջիք,. Լ՚-

լեց. ԺԲ. 10։ Ահա այսու սրբազան պատմիչք բա-
ցատրեն այսպէս. եթէ միայն զմիս ուտել պա-
տուիրեցաւ և զմնացեալն այրել. իսկ յաղագս
ոսկերաց հրամայեցաւ մի՛ բեկանել, զի ունէր
խորհուրդ, որ բացատրի յաւետարանի անդ «Լուկին
զինուորքն և զառաջնոյն խորտակեցին զբարձս, նոյն-
պէս և զմիւսոյն. որ ընդ նմա 'ի խաչ ելեալ էր։
Այլ երբու եկին առ Յիսուս և տեսին այն ինչ
մեռեալ. ոչ խորտակեցին զբարձս նորա. . . . Այս
եղև, զի լցցի գիրն «եթէ ոսկր նորա մի՛ փշրեսցի։
Լու դարձեալ միւս գիր ասէ եթէ «Հայեսցին 'ի
նա՝ յոր խոցեցին»։ Յով. աւետ. ԺԹ. 32—36. 37։
'Ի վերայ այն բանիս գրէ սուրբ Լիրեմ. «Ոսկրը նորա մի՛ բեկանիցէք», այն իսկ է զի բեկին
զբարձս աւազակացն, և զնորայն ոչ բեկին»։
գլ. Ը։ «Լատարի և մարգարէութիւն այն ապա
թէ. «ոսկր նորա մի՛ փշրեսցի» Այս և յաղագս
գառինն որ առ հրէայս Ճառի. բայց օրինակն վասն
Ճշմարտութեան ընթացաւ և ասա եղև մանաւանդ
կատարեալ. վասն զի զմարգարէն էած 'ի մէջ, և
քանզի 'ի վեր և 'ի վայր զինքն բերելով 'ի մէջ,
թուէր ոչ գոլ հաւատարիմ. մատուցանէ և ըշ-
մովէս ասելով թէ՝ և ոչ այս պարզաբար լինի,
այլ 'ի վերուստ իսկ գրեցաւ։ Յով. Ոսկ. 'ի մեկն.
աւետ. Յով. Ճառ. ԼԹ։ Այսպա ուրեմն Հեղինակն
լսարանին յոյժ սխալեալ է գրելովն։

«Ան ոչ վնասէն ոչ միս աւելնայ և ոչ ոսկորը կոտրուի. հապա միսը ուտուի իսկ ոսկորները այրուին։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Այստ 'ի 155 համարի 'ի նկարագրութիւն տասնաբանեայ օրինացն աստուծոյ. զորս ետ իսրայելացւոց ազգին 'ի սինայ լեառն 'ի ձեռն մարգարէին մովսէսի. Եւ ի. զարմանամ յոյժ զի դասատուն լուսաւորչին զուղղափառ քրիստոնեայն զընդունական ճշմարտութեան և շնորհաց քրիստոսական նոր օրինաց՝ չէ ցարդ որոշեալ յազգէն հրէից. որք յամառեալ 'ի կամս իւրեանց չընկալան զճշմարտութիւնն աւետարանական քան նոր օրինաց շնորհաց և փառաց հակառակ գրելովն այսպէս

«Երբոր ամենեքեան բան սկսին դուրս գալու լեռան քովը մինչև մովսէսին որոշած տեղը շարունեցան կեցան։ Մովսէս վեր կալաւ և աստուածն այն տասը պատուիրանները տուաւ Հրէից. որ հին և նոր օրինաց ալ բարոյականին հիմունքն են մինչև հիմայ։ ուստի ինչպէս ամենայն հրէայք, նոյնպէս և ամէն քրիստոնեայք պարտական են այս տասնաբանեայ պատուիրանքը գիտնալու ու պահելու»։

Ինձ այսպէս թուի. եթէ չէ երբէք ներգործել 'ի միտս տորին անժխտելի հոգեբուղխ քարոզութիւն սրբազան առաքելոյն Պօղոսի եթէ. «Օ՛ինչ բաժին կայ հաւատացելոյն ընդ անհաւատին» Բ. կորն. Գ. 15։ Ո՛չ ապաքէն անհաւատուք հեռացան մերժեցան յաւետարանական նոր օրինացն յոի 'ի ճշմարտութէ անտի և 'ի շնորհաց նորին փրկութէ։ և միայն թերակատար տասնաբանեայ օրինացն ունկնդիրք և հպատակք անուանեցան. իսկ ուղղափառ քրիստոնեայք սեպհական ժողովուրդք քրիստոսի ընդունին զայն հին օրինաց և պատուիրանաց պահպանութիւն

ոչ թերակատարս, այլ յոի քոի աւետարանական
ճշմարտութեամբ և շնորհիւ կատարեալ. զորմէ
սրբազան աւետարանիչն յովհաննէս բացայայտ գրէ
«Օրէնքն ի լրութէ անտի նորա մեք ամենեքին առաք
զշնորհս փոխանակ շնորհաց։ Օրէնքն ի Մովսիսէ տուան, շնորհն և ճշմարտութիւն ի Յիսուսէ քրիստոսէ եղեն»։ յով. աւետ. ա. 17։

Յաղագս այսորիկ և սրբազան առաքեալն Պօղոս «Արդարութիւն լիներ առաջին պատուիրանին վասն տկարութեան։ Զանգի ոչինչ կատարումն գործեցին օրէնքն, և մուտ ազնուական յուսոյն. որով մերձենամք առ աստուած»։ Եբր. է. 18. 19։

Ուրեմն այժմ քրիստոնեայքս որոշեալ իսկ եմք յաղգէն հրէից, վասն զի նոքա ունէին և ունին ընթերին և զստուերն նոր օրինաց. իսկ մեք քրիստոնեայքս շնորհիւ աստուածորդւոյն յիսուսի փրկչին մերոյ ունիմք զանթերի և զկատարեալ աւետարանական օրինաց սքանչելի լուսթիւնս շնորհաց. վասնորոյ ճշմարիտ վարդապետն մեր և մեծ քահանայապետն երկնաւոր յիսուս քրիստոս վճռաբար աւետարանեաց մեզ «մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս, և ոչ եկի լուծանել, այլ լնուլ։ . . . . Զուարա՛ք զի ասացաւ առաջնոցն թէ մի սպանաներ, զի որ սպանանիցէ. պարտական լիցի դատաստանի։ Այլ ես ասեմ ձեզ՝ եթէ ամենայն. որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց. պարտաւոր լիցի դատաստա-

նի. և որ ասէ ցեղայր իւր յիմար, պարտաւոր լիցի
ատելի, և որ ասիցէ ցեղայր իւր մորոս՝ պարտա-
ւոր լիցի ի գեհեն հրոյն. . . Լսեալքէն ասացաւ.
եթէ որ արձակիցէ զկին իւր. տացէ նմա զարձակ-
մանն. բայց ես ասեմ ձեզ, եթէ ամ՝ որ արձա-
կիցէ զկին առանց բանի պոռնկութեան, նա տայ նմա
շնալ և որ զարձակեալն առնու շինոյ, դարձեալ լը-
սարուք զի ասացաւ առաջնոցն, մի՛ երդնուցուս
սուտ՝ բայց հատուսցես տեառն զերդմունս քոյ.
Լսյլ ես ասեմ ձեզ ամենևին մի՛ երդնուլ, մի՛
յերկինս, զի աթոռ է աստուծոյ. և մի՛ յերկիր,
զի պատուանդան է ոտից նորա. և մի՛ յերուսա-
ղէմ, զի քաղաք է մեծի արքայի. և մի՛ գլուխ քո,
զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել կամ թուխ:...
Լուարուք զի ասացաւ «Լսին ընդ ական և ատա-
մին ընդ ատամն, այլ ես ասեմ ձեզ, մի՛ կալ հա-
կառակ չարին. . . . Լուարուք ասացաւ զի ասա-
ցաւ սիրեսցես զընկեր քո, և ատեսցես զթշնամիս
քո, Լսյլ ես ասեմ ձեզ, սիրեցէք զթշնամիս ձեր
օրհնեցէք զանիծիչս ձեր, բարի արարէք ատելեաց
ձերոց. և աղօթս արարէք ի վրայ այնոցիկ՝ որ լլկեն
զձեզ, և հալածեն, զի եղիջիք որդիք հօր ձերոյ, որ
յերկինս է, զի արեգակն ծագէ ի վրայ չարաց և բա-
րեաց, և ածէ անձրև ի վերայ արդարոց և մեղա-
ւորաց. . . . Լսդ եղերուք դուք կատարեալք,
որ պէս և հայրն ձեր երկնաւոր կատարեալ է»,
Մատ. Է. 17. 21. 31. 32. 33. 34. 35. 36. 38. 39. 43.
44. 45. 48.

Սուրբն Դիոնէսիոս արիսպագացին Ի վերայ աւետարանական և առաքելական բանից գրէ այսպէս «Որպէս նկարիչ տուներին պատկերաց ելանգս յաւելելով, սահ զայն ընուլ, այլ ոչ լուծանել, այսպէս և քրիստոս, ոչ եկն լուծանել զօրէնս և զմարգարէս, այլ ընուլ։ Ի որպէս պատկերահանն ըստ նախատիպի մտացն նախ գծագրէ Ի տախտակի, կամ Ի կտաւի, և յետոյ զանազան ներկօք շքաւորէ, այսպէս և քրիստոս Ի հին օրէնս, ըստ նախատիպի կամաց և մտաց իւրոց, գծագրեաց զօրէնս Ի տախտակի յուսումն մանկանցն հրէից ըստ այբբենական տառից «ընդ աշխարհիս Ի ծառայութիւն կայաք, և Ի լրման ժամանակին եկն ընուլ զնախաձևացուցեալն զանազան երանգօք պարգևաց հոգւոյն սէյ Ի միտս մեր. ըստ այնմ. «Տաց զօրէնս իմ Ի միտս նոցա, և Ի սիրտս նոցա գրեցից զնոսա». յ,ԿԷԶ. ՃԼ. Ճ։ Լ,Ս սուրբն ներսէս շնորհալի գրէ այսպէս «Լ,Ս մովսէսիս երկոտասան ցեղիցն իսրայէլի տասնաբանեան գրաւորական տախտակօքն մինչև յառաջին գալուստն քրիստի։ Լ,Ս քրիստիս նոր պատուիրանս, ոչ գրով, այլ հոգւով, մինչև յերկրորդ գալուստն ամենայն աղգաց՝ որ հնազանդեցան աւետարանին, և վասն այնորիկ եղան օրէնք. զի դաստիարակ լիցին բնութեանս, որպէս ասէ առաքեալն «Ի զորօրինակ դայեակ զաղայս մեղմով խրատեն, և որքան աճէ հասակն առաւելուն զուսումն մինչև Ի կատարելութիւն։ Այսպէս և օրինադիրն ասէ, մինչ տղայ էր բնութիւնս, թեթևագոյն օրինաք

խրատեաց, և որքան աՀեաց յիմաստս յաւել և զօրինացն Ծանրութիւնս,, Ի մեկն. Պատ. Ե. 17։

Լուրեմն սխալեալ է հեղինակն լսարանին դասակցելովն զուղղափառ քրիստոնեայս ընդ իսրայէլեան ազգին։

Ինչպէս Հրէայք, նոյնպէս և ամէն քրիստոնեայք պարտական են այս տաճարանեայ պատուիրանքը գիտնալու ու պահելու։

Լրևի թէ չէ Ի միտ բերեալ զանժխտելի Հրամանն տէրունական ,,Զի եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր քան զդպրացն և զփարիսեցւոցն, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից,, Պատ. Ե. 20։

ԳԼՈՒԽ ԺԴ։

Ի դասատուութեան ուստ Համառօտ նկարագրի զանօրէն և զդիւական կռապաշտութիւնն ապերախտ և դիւրախաբ իսրայէլեան ազգին յանապատի անդ որպէս և գրեալ է ,,Եւ տեսեալ ժողովրդեանն եթէ յամեաց Մովսէս իջանել Ի լեռնէ ամսոյ, կուտեցաւ ժողովուրդն Ի վերայ ահարօնի, և ասեն ցնա, արի և արա մեզ աստուած. որք առաջնորդեսցեն մեզ։ Զի այրն այն Մովսէս, որ եհան զմեզ յեգիպտոսէ, ոչ գիտեմք զի՞ եղև նմա։ Եւ ասէ ցնոսա ահարօն կողոպտեցէք զգինոս ոսկիս յականջաց կանանց ձերոց և ուստերաց և դստերաց ձերոց, և բերէք առիս։ Եւ կողոպտեաց ամ ժողովուրդն զգինոս ոսկիս յականջաց կանանց իւրեանց, և բերին առ ահարօն։ Եւ ընկալաւ Ի

ձեռաց նոցա և ձուլեաց զայն քանդակագործով, և արար որթ ձուլածոյ, և ասեն, այս են ՝ծԺք քո իսրայէլ, որք հանին զքեզ յերկրէն եգիպտացւոց։։ Լ,ելից · ԼԷ · 1 · 2 · 3 · 4։

Սրբազան մեկնիչք գեղեցիկ բացատրուիս տան ամին «Հարան լուեալ զայն անկարծելի զանօրէն պահանջումն նոցա, զարհուրեցաւ յանձն իւր · ընդ այնչափ ապերախտութիւն, ընդ լքբութիւն · և ընդ կուրութիւն նոցա · բայց յահէ մոլեգին ամբոխին, որք փոքր միւս ևս և քարկոծ առնէին զնա, ըմբռնեալ և շփոթեալ՝ տկարացաւ և զարժանն անձինն խորհիլ իշխանական արիութեամբ դիմագրաւլինել նոցա · այլ ՝ի ժամուն եցոյց զինքնել ՝ի կամս նոցա · սակայն արդեամբք խորհէր հնարիւք ինն խափանել զենդիր նոցա։ Լ,ս առ այս համարեցաւ երթալ իրաց պէտս ունիլ · այսինքն ստանալ ժամանակ, որպէս զի թերևս ժամանեսցէ մոլեռն, ստանալ իւր կուսակիցս ընդդէմ ապստամբացն, և որսալ զմիտս նոցին իսկ մոլեղոց · զի ՝ի միտ առեալ զյիմարութիւն իւրեանց՝ ինքնին ՝ի բաց կացցեն ՝ի խելագար առաջարկուէ անտի։ Լ,ս զայս ամենայն խորհեցաւ միով առաջարկութեամբ վՀարել, զի հրամայեաց նոցա կողոպտել զգինդս ոսկիս յականջաց կանանց իւրեանց, և ուստերաց և դստերաց իւրեանց և բերել, զի ձուլեսցէ անտի նոցա ՝ԾԺ, եւ այսպէս մինչև ՝ի կողոպտել նոցա զկանայս ՝ի զարդուց անտի, և տանել առ նա, և մինչև շինել զդաղափար, և ձուլել, և զձուլեալն քանդակագոր-

ծել, անցանէին սուրբը և շաբաթք, որով ստա-
նայր ժամանակ,, 'ի Յեսու թիւն սբ գրոց. է։
Զարմանալ արժան է. քանզի Հեղինակն լա-
լանին չէ երբէք ուշադիր եղեալ ընտիր մատենա-
գրաց սրբոցն կիւրղի, ոսկեբերանի և Եփրեմի խո-
րին ասորոյ, այլ միայն ինքնահնար վարդապետու-թիւն
առնելով պարտաւորեալ դատէ զընտրեալն յայ ա-
հարօն. այսպէս գրելով 'ի դասատետրակի սատ 'ի
161 երես։

,,Բայց ահարոն ալ կերևնայ թէ այն տկար մարդիկն էրն էր որ ժո-
ղովրդոց վերայ իշխանութիւն մը որ կառնուն, կմոռնան թէ իրենց
պարտքը աղէկ կատարելու համար պէտք է որ քաջութիւն ունենան
մինչև իրենց կեանքը դնելու։ Պետրոս ժողովրդեան սպառնալից ա-
ղաղակէն. չուզեց նոցա խօսքին դէմ առնուլ. միայն բսաւ որ գնա-
ցէք ձեր կանանց ու աղջկանց ականջներու ոսկի զարդը քաշեցէք
հանեցէք ու ինձ բերէք։

Պատ այսպիսի յանդուգն դատողութեան գրէ
սրբազան առաքեալն պօղոս ,,Պատուոյ առանց պա-
տասխանի տալոյ ես ո՞վ մարդ, որ դատես։ Զի
որով դատես զընկերն, զանձն քո դատապարտես, զի
դու նոյն գործես. որով դատեն։ Գիտեմք
եթէ այ դատաստանն ճշմարտութեամբ է 'ի վերայ
այնոցիկ, որ զայնպիսիսն գործեն։ Իսկ արդ՝ խոր-
հեցիս զայս ո՞վ մարդ, որ դատես զայնոցիկ՝ որ
զայնպիսիսն գործեն, և դու զնոյն գործես. եթէ
դու ապրելոց իցես 'ի դատաստանաց անտի սա-
տուծոյ,, Հռովմ. բ. 1. 2. 3։

Հարկ էր Հեղինակին ունկնդնել սուրբ գրոց և
ճանաչել զպատիւ քահանայական մեծութեան. և
ՇԾՇՆՈՐՀ փառաւորութեան ահարօնի, զորմէ գբ-

բեալ է «Լ՝ուաքեաց զմովսէս ծառայ իւր. և զա-
հարօն ընտրեալ իւր։ Խարկացուցին զմովսէս ՝ի բա-
նակի և զահարօն սուրբ տեառն». Սաղ. ՃԴ. 24.
165 26. «Լ՝ու ոչ անձամբ ոք առնու պատիւ, այլ
կոչեցեալն յայ, որպէս և ահարօն» Լ՝բր. Ե. 4։ Լ՝ըդ.
եթէ ահարօնի զկամն նոցա չէր արարեալ. անդրէն
յեգիպտոս դառնային նոքա, վասն հարբեր ահա-
րօն յանձն իւր. և հաւանեցաւ նոցա. զի մի՛ ժո-
ղովուրդն սատակեսցի յայ խստուէ, և մի՛ ինքն
.քարկոծ լիցի. և մի՛ մովսիսի տրտմութիւն եղիցի։
Լ՝ըդ՝ արար նա խորհրդով զի մի՛ ժողովուրդն ա-
ռանց առաջնորդի եղիցին, և ապստամբեսցին. և
հնազանդ եղև կամաց նոցա։ Խանշի գիտաց նա
թէ այն ինչ որ նկարեցաւ ՝ի խորհուրդս նոցա ՝ի
ծածուկ՝ արժանի է պատժոց պատուհասից, և զի
խրատեսցին նոքա մինչդեռ ՝ի ծածուկ է, գայթակ-
ղութիւն էր այն բազմաց։ Լ՝ըդ՝ արար նա զկամս
նոցա, գիտէ իսկ եթէ վասն այնորիկ մերժեցաւ
հեռացաւ ՝ի նոցանէ մովսէս առ ժամանակ մի։ Լ՝ու
զի ստուգեալ էր թէ ինչանէ մովսէս և խնդրէ
զվրէժ ՝ի նոցանէ, անփոյթ արար, որպէս զի յայտ-
նի եղիցին ամենայն սիրելիք որթուն» սուրբն Եփ-
րեմ ՝ի մեկն. Լ՝ուից ՃԼ. Զ։
Լ՝ուս ՝ի համարն 165 սոյն գլխոյ համարձակի ատել
և դատապարտել զլրութիւն բարեացապաշտ ազ-
գիս ՝ի գրելն զբարեխօսութենէն սուրբ մարգարէ-
ին մովսիսի ՝ի լեառն սինայ առ բազմագութ մար-
դասիրութիւն այ, յաղագս ներելոյն զչարաչար մո-

լորութիւնս ապերախտ և խստապարանոց ժողովրդեան իսրայելացւոց։ Լուկ. Գ. 31. 32։ Ուր այս դատակցեալ զայս բան դատապարտութեան ազգիս գրէ անխիղճն.

«Որպէս մովսէսի պէս աստուածասէր և ճշմարտապէս ազգասէր մարդը կարող է այսպիսի ահաւոր միջնորդութիւն ընել առ աստուած. իսկ այլ մարդիք որ աւելի անձնասէր են, քան թէ աստուածասէր, ինչպէս որ կսէ պօղոս առաքեալը թէ աշխարհիս ետքերը այնպիսիները պիտի շատանան, այն մարդիկ որ ազգասէր եմք ըսելով կպարծին ու աւելի իրենց նիւթական շահը ու պատիւը կփնտռեն. քան թէ ազգին օգուտը, որչափ հեռու են մովսէսի բռնած ճամբէն։ Եւ մեր ազգն՝ որ իրեն մեղացը համար ալ այսքան փորձանքներու և թշուառութեանց մէջ ընկեր է հաղարաւոր տարիներէ ի վեր, արդիւք այն պատճառաւ ալ չէ. որ մովսէսի նման առաջնորդներ խիստ քիչ ունեցեր է։»

Որպէս երևի, չէ բնաւ ազդեալ ի միտս Հեղինակին այն ամենազգու խրատ բարոյական՝ սրբոյն իգնատիոսի «Մի ինչ արասցես կամ խօսեացիս. եթէ ոչ նախ խորհեսցիս արդեօք հաճոյ լցէ այն ՅԻ, և քեզ յօգուտ և ընկերին ի շինուի», առ լիւր։ Այս բան համեմատ է առաքելական անժխտելի խրատուն. «Լիթէ ոք բանիւ ոչ յանցանիցէ. նա է մարդ կատարեալ» Յակ. Գ. 2։

Ուրեմն կարող են համարձակ ասել բարեմիտ ազգն մեր առ այվազեան վարդապետն՝ զբան երջանիկ մարգարէին կրկնելով «Օ՛ի տացի քեզ, կամ զինչ յաւելցի լեզուս նենգաւոր»։ Որին բացատրութի հաւանական իմն գրէ երանելի սուրբ վարդապետն մեր սարգիս Շնորհալի «Օ՛ի որ զինքն սիրող ցուցանէ, և ատելութեամբ վարի, որպիսի է շուգմոգն,

նենգէ լեզուաւ իւրով, որով և կոչի լեզու նենգաւոր, 'ի մեկն. յուդայի. Ա'առ. Բ։

Լրևի թէ այսպիսի լեզու նենգաւոր չունի մի տրս լուտաւոր. որով կարասցէ նկատել զբարեմանութիւն ազգասիրութեան և եղբայրսիրութեան և յաղագս այսորիկ գրէ սրբազան աւետարանիչն յովհաննէս սիրալրական յորդորանօք յասելն «Սիրելիք, ոչ եթէ նոր պատուիրան գրեմ ձեզ. այլ զհին պատուիրանն. զոր 'ի սկզբանէ ունէիք, և հին պատուիրան՝ բանն է, զոր լուարուք»։ Յով. 13·34։ Դարձեալ նոր պատուիրան գրեմ ձեզ. որ է ճշմարտիւ 'ի նմա և 'ի ձեզ. զի խաւարն անցանէ, և լոյսն ճշմարիտ արդէն իսկ երևի։ Որ ասէ եթէ 'ի լոյսն իցէ. և զեղբայր իւր ատիցէ, սուտ է, և 'ի խաւարին է տակաւին։ Որ սիրէ զեղբայր իւր, 'ի լոյս բնակէ, և գայթակղութիւն 'ի նմա չիք։ Իսկ որ ատեայ զեղբայր իւր. 'ի խաւարի է. և ընդ խաւար շրջի, և ոչ գիտէ յո՞ երթայ, զի խաւար կուրացոյց զաչս նո՛ր։ Յով. կաթ. ա. Բ. 7։

Օ՜այս բան գեղեցիկ բացատրէ սարգիս ընուհալին «Որ այս տահման չարի քան զամենայն չարիս չարագոյն է, ասելն մոլորեալն 'ի ճանապարհէն ոչ գիտէ յո՞ երթայ։ վասն զի զառաջնորդն՝ զսէր ոչ ունի, որպէս զի դարձեալ յարքունական ճանապարհն զնա վերադիցէ։ Ա՜յլ մոլորական շրջի և թափառական 'ի պէտսպէս մեղս զառաջեալ և կոստեսոմբ դատապարտել» 'ի մեկն. Յով. ճառ. Գ։

Կարի սխալեալ է Հեղինակն գրելովն։

։Պսկ այն մարդիկքն · որ աւելի անձնասէր են քան թէ աստուածասէր · ինչպէս որ կրսէ Պօղոս առաքեալը թէ աշխարհիս եսքերը այնպիսիները պիտի շատանան ։ այնմարդիկքն՝ որ աղդասէր եմք ըսելով կրպարծին ։ ու աւելի իրենց նիւթական շահը ու պատիւը կփնդռեն · քան թէ ազգին օգուտը ։ որչափ հեռու են մովսէսի բռնած ճամբէն ։ Եւ մեր ազգն · որ իրեն մեղացը համար ալ այսքան փորձանքներու և թշուառութեանց մէջ ընկեր է հալարաւոր տարիներ է՝ի վեր ։ արդիւք այն պատճառաւ ալ չէ · որ մովսէսի Նման առաջնորդներ խստ քիչ ունեցեր են ։

Տեսանէս որպիսի մոլորեալ անձանց նմանեցուցանէ զազգ մեր ։ այնպիսեաց ։ որոց վասն սրբազան առաքեալն Պօղոս գրէ՝ի զգուշութիւն սիրելի աշակերտին իւրոյ Տիմոթէոսի ։։Օ՛այս գիտացիր · եթէ յաւուրս յետին եկեսցեն ժամանակք չարք՝ զի եղիցին մարդիկ անձնասէրք ։ արծաթասէրք ։ հպարտք ։ ամբարտաւանք ։ հայհոյիչք ։ անհաւանք ծնողաց ։ անշնորհք ։ անտրբք ։ աննուէրք ։ անգութք ։ բանսարկուք ։ անժոյժք ։ անբարեսէրք ։ մատնիչք ։ յանդգնք ։ ամբարհաւաճք ։ ցանկասէրք ։ մանաւանդ ճծասէրք ։ որ ունիցին զկերպարանս ճծպաշտութեան ։ և՝ի զօրութենէ անտի նորա ուրացեալ իցեն ։ և խորշեսջիր՝ի նոցանէ ։։Քանզի՝ի նոցանէ են ։ որ մտանեն տանէ՝ի տուն ։ և գերեն զկանայս շեղջակուտեալս մեղօք վարեալք՝ի պէս պէս ցանկութիւնս ։ որ յամենայն ժամ ուսանին ։ և երբէք՝ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանեն ։։Այլ որպէս յանէան և յամբրէս հակառակ կացին մովսէսի ։ նոյնպէս և սոքա հակառակ կան ճշմարտութեան · մարդք ապականեալք մտօք անպիտանք՝ի հաւատս ։։Այլ ոչ երբէք գայցեն յա-

ռաջ 'ի լաւ անդր ։քանզի անմտութիւն սոցա յայտնի լինիցի ամենեցուն։ որպէս և նոցայն իսկ եղև,,։ ա։ Տիմ։ գ։ 1—9։

Երդ վերոյ նշանակեալ չարաչար մոլորութիւնք ճշգրտիւ նկարագրեն հոգեկորոյս ախտաւորութիւն սիմոնեանց։ գնոստիկեանց։ վաղենտինեանց։ մարկիոնեանց։ ոչք մեռք յայն ժամանակս երևեցան շառաւիղք չարեաց։ և կոյր զկուրայն հետևողաց սոցին մոլորութեանց։ բայց գոհութիւն տեառն՝ բարեաց ապարտ ազգիս լրութիւն արժանընդունակ աղօթիւք նախկին լուսաւորչացն մերոց սրբազան առաքելոցն Թադէոսի և բարդուղիմէոսի և առաքելատուրաս նախահայրապետին մերոյ սբ՚ն գրիգորի լուսաւորչի ազատ յայնպիսեաց սատանայական մոլութեանց և մոլորութեանց պահեալ կայ և ուղղափառ տուրբ եկեղեցին հայոց։ աստանօր յիշատակեսցի հոգեբուղխ բան։ քարոզութեան յովհաննուերանելի վարդապետին մերոյ երդնկացւոյ։ որ ճշմարտաբանէ առ աղգս այսպէս։ Լ։ Թէպէտ ըստ այսմ ասի ոչքոց ես արժանի։ և զի զմարմնական ճոխութիւնս։ քո օտարք օտարեցին։ և մանկունք ուխտի։ քո 'ի գերութիւն վերացան։ և զուարճալի զարդք։ քո կողոպտեցաւ։ և անճառելի խորհուրդն՝ գնոջ այսօր վաճառի և երկնաւորն յաստիճան յերկրաւորաց յափշտակի։ Լ։ Յլ 'ի մեծն և 'ի գլխաւորական բարին երանելի ես և յոյժ խնդալի։ Լ։ ան զի ուղղափառ հաւատոյ։ քո լոյս ոչ նուազեցաւ։ 'ի բարի սերմանս ցորենոյդ՝ որոնն ոչ

խառնեցաւ Պատ. 13—20։

Օ՜ աղբիւր յստակ աւանդութեանց քոց՝ աղտաղ-
տուկ ջուր օտարոտի ուսմանց ոչ պղտորեաց.
Պաղմ. 106—34։ Ի՜ ստուգութեան և՝ ի՜ ճշմարտու-
թեան հացն քո կենդանական՝ մեռելական խմոր և
հերձուած քացախութեան չարաւե՜ ոչ զանգեցաւ.
Ա. Կորն. 5. 8։ Յոսկի ամբիծ հաւատոյն և յար-
ծաթ լուսաւեսիլ բանին՝ պղինձ ժանտահոտ և
կապար սևաթոյր ոչ գտաւ. 3. 12։

Լ՚ այսոքիկ խնդրուածովք մեծ նոհատակին
Տ՚Ն՚ի սրբոյն գրիգորի քեզ ընտրեցան. որ է գլուխ
մեզ ամենայն բարեաց և հիմն կենաց յաւիտենա-
կանաց։ Յաճախ. Ն՚առ. երգնկացւոյ։ Այն այս
երանելի վարդապետս շարակարգեաց և ուսոյց ե-
կեղեցւոյն մեր երգել զայս տուն շարական այլովք
հանդերձ «Ա՚սյսօր զուարճացեալ ցնծայ եկեղեցի
դրախտն ՅԾատունկ ծաղկեալ. յորմէ տուաւ մեզ
տունկն անմահութեան տէր գրիգորիոս և պտղովն
իւրով ելից զտիեզերս ամենայն»։

Պանծայ և փառաւորի ուղղափառ եկեղեցիս բա-
րեպաշտն ազգիս Հայոց երանելի սրբազան Թարգ-
մանչացն Սահակայ և Մեսրոպեայ և գերընտիր ա-
շակերտաց նոցին հրաշազարդ արդեամբք ՅԾիմաստ
Թարգմանութեան տուրբ գրոց, և սքանչելի հոգե-
բուղխ վարդապետութեամբ։ ուստի երախտագէտ
մտօք շարահիւսեաց զայս բան ոսկեղէն՝ վարդան
վարդապետ բարձրաբերդացի. «Որ երկրքումբք Ոբ
լուսաւորչաբ տանս Թորգոմայ հաստատեցեր զեկե-

ղեցիս Հայաստանեայց՝ զլոյս իմաստից 'ի մեզ ծագե-
լով. մաղթանօք սոցա քրիստոս ինայեա 'ի մեզ »։
Ամենեալ մովսիսի տեսլիք վարդապետք բերելով
զգիր օրինաց 'ի Հայաստան աշխարհս. որով լուսա-
ւորեցան ազգ որդւոց Թորգոմայ» 'ի շարակոն։ Այս-
պես Հայոց ուղղափառ սուրբ եկեղեցին անդիսանելի Հա-
ւատով միշտ խոստովանի ինքեան պարգևեալ յաստ-
ուածուստ զմնազան առանձնաշնորհութիւն, ուս-
տի լուսաբաշան առաքելոյն պօղոսի յաճախագոյն
գոհութիւնս առ աստուած մատուցանելով պար-
տաւորի ասել «Օ՜ի 'ի բազմադէմ շնորհացն՝ որ
մեզ բազմոք յաճախեսցին գոհութիւնք վասն մեր»։
Բ. Կորն. ա. 11։ զԱ՛յսմանէ գրեալ եմք ընդար-
ձակագոյն 'ի վերջ տետրակացն մեր անուանեալ
Հայելի ազգային շնորհաց տպագրեալ 'ի տփխիս։ Ա-
ռեմն միշտ վայելեալ է ազգս Հայոց զազգային ա-
ռանձնաշնորհութիւն սքանչելի բարութիւնս. խնամ-
ատար օգնականութիւնս. վասնզոյց Հաստատուն
ունի զյոյս իւր և զսէր առ աստուած. ուստի
վայելչանայ այն ամենացանկալի երանութիւն 'ի
վերայ ազգիս Հայոց. զոր հոգենուագ մարգարէն
դաւիթ գրէ «Երանի ազգի՝ որոյ տէր աստուած
յակոբայ օգնական է նմա, և յոյսն որա 'ի տէր աստ-
ուած է»։ Ճխէ։

Օ՜տրին բայատրութիւն գեղեցիկ իմն գրէ մեկ-
նիչն «Վասն ասել՝ ոչ նա է երանելի՝ որոյ օգնա-
կան թագաւոր ոմն է և կամ իշխան մի երևելի, ոչ
ազգն մովսիսացւոց և ոչ պաշտեալն ամենացւոց,

այլ աստուածն յակովբայ. որ ոչ եթէ սակ արտաքուստ, այլև՝ 'ի ներքուստ 'ի ներքս 'ի հոգի մարդոյ բնակելով ձեռնտու լինի նմա ամի, առաջնորդելով 'ի բարին և պաշտպանելով 'ի չարէն, մխիթարելով 'ի վիշտս և պահպանելով 'ի վտանգից և այլն։

Լ,ւ և ս շնորհիւ սուրբ հոգւոյն աստուծոյ ազգս հայոց ներտպեալ ունի 'ի սիրտս և 'ի միտս զայս բան սուրբ գրոյն եթէ «Լեր հաւատարիմ մինչև 'ի մահ, և տաց քեզ զպսակն կենաց» Յայտ. Բ. 10։ Աստի նախ՝ հոգևոր պարտաւորութեամբ սրտի մտօք փութայ Ճշնի՝ ծառայ բարի և հաւատարիմ գտանիլ ամենայն կամաց» Մատ. Ի. Ե. 20։

Լ,ւ երկրորդ՝ ըստ քաղաքական կենցաղավարութեան ունի ազգն մեր հաւատարիմ հարազատութիւն առ կայսրն՝ ընդ որով հպատակեալ գտանի, ուստի սիրելի և հաւատարիմ Ճանաչի». Հռոմ. Ժգ. 1—2։ Սիրելի ընթերցող, և զայս ծանիր, զի ազգասիրութեան ծառն բարի՝ քաղցր սիրոյն բարեհամ պտուղս արտադրէ, իսկ ծառ չար՝ յատելութեան արմատացեալ է իբրև տատասկ՝ բերէ զվուշ խոցոտիչ սրտից Մատ. Է. 17։ Լուրեմն աստանօր երկայնմտութիւն և սիրով յորդորեացուք զպատուելի Հեղինակն լարանին թող խոնարհեալ խելամուտ լեալ և աշակերտեալ սրբազան առաքելոյն պօղոսի փութացի, ուսանիլ 'ի նմանէ զկարևորութիւն և զշօրութիւն ազգասիրութեան և եղբայրսիրութեան յամենայն գործս բարեաց՝ որ ունի իսկական նմանութիւն մե-

ծի ՝ՃՃսիրութ. ըստ այնմ. «Լ,թէ զլեզուս մարդ-
կան խօսիցիմ և զհրեշտակաց՝ և զսէր ոչ ունիցիմ
եղէ ես իբրև զպղինձ՝ որ հնչէ, կամ իբրև զծնծ-
ղայս՝ որ զողանջեն։ Լ,ւ եթէ ունիցիմ մարգարէ-
ութիւն և գիտիցեմ զխորհուրդս ՝ամ և զ՝ամ գի-
տութիւն, և եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝
մինչև զլերինս փոփոխելոյ՝ և սէր ոչ ունիցիմ, ոչ
ինչ եմ։ Լ,ւ եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ
աղքատաց, և մատնիցեմ զմարմինս իմ յայրումն՝
և սէր ոչ ունիցիմ, ոչինչ օգտիմ։ Սէր երկայնա-
միտ է՝ քաղցրանայ, սէր ոչ նախանձի, ոչ ամբար-
հաւաճէ, ոչ հպարտանայ, ոչ յանդգնի, ոչ խրնդ-
ութ զիւրն, ոչ գրգռի ոչ խորհի զչար, ոչ խնդայ ընդ
անիրաւութի, այլ խնդայ ընդ ստուգութի։» . Եայլն։
՝ Ա կորն. ԺԳ. 1—6։

ԳԼՈՒԽ ԺԱ։

Լ,ւ ՝Ի դասախօսութեան աստ նկարագրէ զա-
պերախտ ժողովրդեանն իսրայէլի զապստամբութիւն
ընդդէմ ՝ՃՃադիր օրինաց և պատուիրանաց և բա-
ղեյորդոր խրատուց մեծ մարգարէին Մովսիսի։ Վա՛յ
երանելի մարգարէն Մովսէս անկեալ առաջի տեա-
ռըն՝ խնդրէր, աղաչէր թեթևացուցանել զծանրա-
տաղտուկ բեռն կառավարութեան խստապարանոց
ժողովրդեան ըստ ամենայնի անբաւական ցուցանել-
լով զանձն իւր տանել երկայնմտութ՝ անխորտա-
կելի ապստամբութեան նոցին։ առ որ գթացեալ ա-

մենաորդումն տեսան՝ հրամայեաց ընտրել ժողովել զեօթանասուն այրս ընտիրս և հանել զնոսա 'ի խորան վկայութեան, զի ինքնին իջեալ անդ շնորհազարդեալ կացուսցէ զնոսա իշխանս ժողովրդեանն և օգնական մովսիսի, յորում գրեալ էր այսպէս «Լ,ս ասէ տէր ցմովսէս ժողովեա ինձ զեօթանասուն այր 'ի ծերոցն իսրայէլի, զոր դու գիտես՝ եթէ իցեն նոքա ծերագոյնք ժողովրդենն, և ընտիրքն՝՝, և հանցես զնոսա 'ի խորան վկայութեան, և կացցեն անդ ընդ քեզ։ Լ,ս իջից անդր, և խօսեցայց ընդ քեզ և առից 'ի հոգւոյդ՝ որ 'ի քեզ է, և արկից զնոքօք և բարձցեն ընդ քեզ զյանդգնութիւն ժողովրդեանդ այդորիկ, և ոչ կրեսցես զդոսա դու միայն»։ Թուոց. Ժ. 6—17։ Այն այս վերոյգրեալ ՀԾՅԻՆ հրամանին բացատրութիւն տայ Հելինակն լսարանին այս օրինակ։

«Ստուած պատասխան տուաւ մովսէսին թէ խրախճացուց ծերոցն ու պատուաւորներուն մէջէն եօթանասուն հոգի ընտրէ՝ ու վկայութեան խորանը բերէ՝ ու քու հոգիէդ մաս մը կառնում կուտամ նոցա»։

Սկսալ բացատրութիւն ՀԾՅԻՆ խորհրդական հրամանին, զի սրբազան մեկնիչք ոչ բնաւ ցուցանեն մասն ինչ 'ի շնորհաց հոգւոյն մովսիսի առեալ և ներգործեալ յեօթանասուն ընտրեալ անձինս, այլ այսպէս. յորոց առեալ տեսութիւն՝՝ գրոց գրէ. «Լ,ս ահա էջ աստուած ծածկեալ ամպով 'ի խորան անդր, և զինի խօսելոյ ընդ մովսիսի բաժանորդս արար զնոսա ոգւոյն իմաստութեան և

հանձարոյ · որով լցեալ էր զմովսէս , լինել և նոցա հանգոյն մովսիսի իմաստուն և հանճարեղ , ՝ի խոր՝ հուրդս երկայնամիտ , և արի ՝ի նեղութիւնս , մարդասէր , քաղցր և կարեկից ՝ի գործս , որպէս վայելէ իշխանաւորաց ,, · Ղլ · Դ ։

՝Ի վերայ այսր բանի ընդարձակս գրէ կուռնելիոս մեկնիչ ,, Զ՝ի ՝ի հոգւոյ քումմէ , ոչ իբրու թէ զման ինչ ՝ի հոգւոյ քումմէ նուազեցուցանեմ և բառնամ և ՝ի յայրսն եօթանասունս անդրաբերեմ , զի այս անկարելի է մանաւանդ ՝ի պատասխան և ՝ի կենդանական գործս ։ Զ՝ի այսքան ՝ի միոյ ենթակայէ ՝ի յայլ , որչափ ՝ի միոյ հոգւոյ ՝ի յայլ անդրաբերիլ ոչ կարեն , զի այս քեզ ասի Մովսէս լինէր փնաս և անանդորր , նմանապէս և եթէ միայն մեծագոյն , և յաճախ հոգւով լցեալ լի կառավարեսցեն զժողովուրդն , զի դիւրապէս հազար մեծաւ , քան հարիւր փոքր և տկար հոգւով կառավարեն , այլ առիւ այսինքն բարձից , և նորապէս ածից , զինչ , ՝ի հոգւոյ քումմէ , այսինքն ՝ի հոգւոյ՝ որ է ՝ի քեզ , որպէս ունին եբրայեցիքն և եօթանասունքն , և զինչ ասեմ , ոչ նոյն թուով , այլ տեսական , այսինքն զինչ , հոգւոյ քո նման ածից և տաց այն եօթանասուն ծերոցն , այսպէս՝ տակայն հոգին քո ՝ի քեզ ամբողջ մնայցէ , զի այնպէս՝ որպէս նախ բոլորի ժողովրդեան հոգն այնուհետև քեզ անկանի , և ս եթէ զայսոսիկ քեզ տամ օգնական ,, · �оug · ժ · 17 ։

Լրևի թէ Հեղինակն լատանին չէ յօժարեալ

միտ դնել մեկնչաց սրբազան գրոց և իմաստնալից խորհրդածութեանց նոցին, ևս և սրբազան առաքելոյն Պօղոսի հոգեբուղխ քարոզութեան, որ ցուցանէ զսուրբ հոգին ՅԾ բազմատեսակ շնորհաց անսպառելի աղբիւր, թէպէտ և բաժինք շնորհաց են, այլ հոգին նոյն է։ Եւ թէ բաժինք պաշտամանց են, այլ տէր նոյն է։ Եւ թէ բաժինք յաջողութեանց են, այլ ՅԾ նոյն է, որ յաջողէ զամենայն յամի։ Բայց իւրաքանչիւր ումեք տուեալ է յայտնութիւն հոգւոյն առ իւրաքանչիւր օգուտ։ Զի մի՝ հոգւոյն տուեալ է բան իմաստութեան, այլում բան գիտութեան ըստ նմին հոգւոյ, միւսումն հաւատք նովին հոգւով, այլումն շնորհ բժշկութեան նովին հոգւով, այլում յաջողութիւնք զօրութեաց, այլում մարգարէութիւն, այլում ընտրութիւն հոգւոյ, այլում ազգք լեզուաց, այլում թարգմանութիւնս լեզուաց։ Եւ զայս ամենայն բաժանէ մի և նոյն հոգի, և յաջողէ իւրաքանչիւր որպէս կամի»։ ՅՈՐՆ. ԺԲ. 4. 11։

Զայս ամենայն նկատեալ համարձակիմք ասել եթէ սխալեալ է Հեղինակն վարդապետութեան լսարանին գրելովն թէ։

«Եթէ քու հոգիդ մասամբ կառնում կուտամ նոցա, և եթէ աստուած իջաւ ամպով, ինչպէս կըսէ սուրբ գիրքը Մովսէսի հետը խօսեցաւ ու անոր հոգիէն առաւ նոցա ալ տուաւ այսինքն այսպէս ըրաւ, որ հասկնան թէ՝ Մովսէս միշտ վեր է ամենեին մարգ սրբական հոգւոյը, իբրև գլխաւոր աղբիւր և շտեմարան շնորհաց»։ Երես 145։

Յիշեցուք աստանօր զԱծիմաստ բանս մեծի Աճապանին Դիոնեսիոսի որ գրէ այսպէս «Զանձաբան լիուն Ամ իմաստից և աղբիւր առատաբուղխ պէսպէս շնորհաց խոստովանիմք զՀոգին սուրբ Աճ Ճշմարիտ»։ Այլ օրինակ և սէն յովհան ոսկեբերան գրէ. «բարեբանեմք զքեզ Հոգիդ սուրբ որ ես աղբիւր առատաբուղխ շնորհաց»։ Ի Հառ շնորհաց։

Լ՝ ուղղափառ սուրբ եկեղեցին մեր յաւուրս Հոգեգալստեան շնորհաշնչ տօնս երգէ զայսոսիկ շարական. «Այսօր աղբիւր գիտութեանն բղխեալ Ի սուրբ վերնատունն, յորմէ լցան տիեզերք գնացիւք գետոցն ոռոգմամբ»։ «Աղբիւր կենաց բաշխօղ շնորհաց Հոգիդ իջեալ Ի բարձանց զանապական պարգևս քո բաժանեցեր յառաքեալսն»։ «Օաղբիւրն իմաստութեանն զկատարեալն անձնաւորութիւն, որ խօսեցաւ յօրէնս և Ի մարգարէս և յաւետարանս»։

ԳԼՈՒԽ ԴՕ։

Իսկ աստ նկարագրէ զաղբիւրացուցումն Ջուրցն յապառաժ վիմէն. յոր Աճային հրամանաւ Եհար մովսէս գաւազանաւ իւրով երկիցս որպէս և գրեալ է Թուոց. Ի. 11. Աղմ. ԿԷ. 16. 17։ Ի բանի աստ յիշելով զտարակուսութիւն մարգարէին մովսիսի. որում անարժան համարեալ զնոսա այնպիսում Աճային հրաշալի շնորհաց. ասաց ցնոսա «Այլ ասէ ցնոսա լուարուք ինձ անհաւանք մի՞ թէ

'Ի վիմէս յայսմանէ հանիցեք ջուր։
Լու ամբարձեալ մովսիսի զձեռն իւր եհար զվէմն երկիցս անգամ. և եել ջուր բազում. և արբ ժողովուրդն և անասունն նոցա ։։ Թ. 10. 11։

Օ առաջին հարկանելն զվէմն ոչ եել ջուր, քանզի ասէն սրբազան մեկնիչք կուռանելոս և եփրեմ խորին ։։Մովսէս զապերախտ ժողովրդեանն զբազմատեսակ զանհաւատութիւնս յիշելով եհար զվէմն. իսկ ապա զՁծային անյիշաչար և զմարդասիրական զողորմութեան շնորհաց արդիւնս յայտնեաց. վասն և ջուրն յապառաժ վիմէն բղխեցաւ. ուրեմն յանցանք մովսիսայս եղև. զի պարտ էր նմա միայն Աստուծային սուրբ հրամանն կատարել, և ոչ բնաւ յիշել զանհաւատն ապերախտութեան յանցանս ժողովրդեանն վասն յանդիմանեաց աստուած զմովսէս ընդ ահարոնի։ Լու ասէ տէր ցմովսէս և ցահարոն փոխանակ զի ոչ հաւատացիք դուք ինձ սուրբ առնել չիս առաջի որդւոցն իսրայէլի. վասն այդորիկ ոչ տանիցիք դուք զժողովուրդն յերկիրն՝ զոր ետու դոցա ։։Թուոց. Ի. 12։

'Ի բանիցն մովսիսի ոչ անհաւատութիւն ինչ երևի և ոչ գայթակղութի ժողովրդեան. ուրեմն սխալեալ է Հեղինակն լսարանին յերես 186։

։։Արդուս հաւատքին առջևը անկարելի բան չկայ երբոր աստուած ալ կամենայ նորա կամքը կատարել. բայց երբոր հաւատքը պակսի՝ կարելին՝ անկարելի կդառնայ. դիպին ալ՝ գժուարին։ Մովսիսին հաւատքն մեծ էր և զբաւոր բայց ժողովրդեան անհաւատութեանն նայելով տարակուսեցաւ թէ արդեօք աստուած պիտի կատարէ նոցա խնդիրքը այս անգամ. ու պիտի լեցնէ նոցա կարաւէթիւնը. զա-

ւալանը վեր վերցուց զարկաւ քարին. Ջուր վազեց բոլոր ժողովուրդը և նոցա անասուններըը խմելին կշտացան։։ Մովսիսի և Ահարոնի ցուցուցած սարակրյալը թէ պէտ և մեղանչական թերահաւատութիւնը չերևէր, բայց ժողովրդեան գայթակղութեան պատճառ եղաւ և աստուծոյ ամենակարող զօրութեան ու հրամանին վերայ երկրայութիւնս եղան. ասոր համար ըսաւ Նոցա աստուած թէ։։ Որովհետև հաստատուն հաւատքովը չհաստատեցիք իմ խօսքս և ժողովրդեան առջևը չպահեցիք իմ պատիւս անոր համար պիտի չտանիք այդ ժողովուրդը իրենց խոստացած երկիրս։

Մովսիսի ներքին մտաց խորհուրդն հայէր յանարժանութիւն անհաւան և ապերախտ ժողովրդոց. ասէ Սակեբերան 'ի բանն պօղոսի եթէ։։ Մովսէս հաւատարիմ է յամենայն տան Նորա իբրև ծառայ։։ Հեբ. Գ. 5։

Այն այս երանելին ոսկեբերան 'ի բանի աստառաքելոյն պօղոսի գրէ։։ Մովսէս արտաքոյ իւրում բնաբոյս հեղուէ ծանրացաստումն լեալ ընդ ժպիրհ յանդգնութիւն ժողովրդեանն՝ խռովեցաւ յոգի իւր յորմէ և յերկբայս անկաւ, ոչ ընդ կարողութիւնն այ՝ որպէս չինչ կարող 'ի ժայռէ անտի ջուր բղխեցուցանել. այլ ըստ կամս Նորա խիթացեալ թէ գուցէ 'ի սրտիւ չարաչար ապերախտութեան յետսամիտ ժողովրդեանն ոչ կամիցի ցուցանել յայնժամ զողորմութիւն իւր 'ի վերայ Նոցա։

Օ՞այս յայտ առնէ սաղմոսերգուն յասելն 'ի ՀԷ. 30. ։։ Խարկացուցին զնա 'ի վերայ ջուրցն հակառակութեան, չարչարեցաւ մովսէս վասն Նոցա, զի դառնացուցին զոգի Նորա։։։

Այս մովսէս դառնացեալ սրտիւն ոչ կարաց յայնժամ նկատել եթէ վէմն այն, յորմէ ելանէր

ջուր, խորհուրդ մեծ ունէր, զոր բացատրէ սրբա-
զան առաքեալն պօղոս. «Լմենեքին զնոյն զհոգևոր
ըմպելին արբին, զի ըմպէին 'ի հոգևոր վիմէն՝ որ եր-
թայր զհետ նոցա. և վէմն էր ինքն քրիստոս» ։ Ա. Կորն. Ժ. 4։

Յաղագս այսր հոգևոր մեծի խորհրդոյ գրէ սբն
Լիփրեմ «Ալ էմն այն ցամաք՝ որ նկարեալն էր 'ի
հին հաւատարիմ, այն որ ծնուցիչն էր օրինացն՝
զպտուղս, զոր յղացեալ ունէր վէմն ոչ եթէ սրտ-
մտութեամբ ինչ արժան էր ծնուցանել զնա, վա-
սն զի աղօթիւք և խնդրուածովք պարտ և պատ-
շաճ էր խորհուրդն փառաւորեալ կատարեալ հօ-
րըն փառաւորի զխոստումն իւր 'ի ձեռն կսկծոյն
իւրոյ կատարէր նա, և զխորհուրդն որդւոյ գրգ-
ուել մովսիսի արժան էր։ քանզի խորհուրդն երրոր-
դութեան անդ նկարեալ լինէր, զի ահաւանիկ
հայրն անդ էր, և ծնունդն՝ որ ոչ 'ի բնութեանն
'ի խորհուրդ վիմին առաջի նորին։ «Ալ էմն ասէ զի
նա ինքն է քրիստոս»։ Լաւ հոգին որ 'ի մովսիսի անդ,
է այն՝ որ առանց հոգւոյ մի ինչ 'ի գործոց իւրոց
նա ոչ կատարէր։ 'Լաև մարգարէն իսկ նովին տրտ-
մութեամբն գործոյն այսպէս ասաց, եթէ դառնա-
ցուցին զհոգի նորա, և խօսեցաւ շրթամբք իւրով»։
'Ի Ա՝եկն Թուոց. Գլ. Գ։

Լհա՛ աստէն յայտնի եղև սխալանք Հեղինակին՝
որ գրէ։

«Մովսէսի և ահարոնի ցուցուցած տարակոյսը թէպէտ և մեղան-
չական թերահաւատութիւն չերևիր, բայց ժողովրդեան գայ-
թակղութեան պատճառ եղաւ և աստուծոյ ամենակարող զօրու-
թեանն ու հրամանին վերայ երկբայածի պէս եղան»։

ՎԵՐՋԱԲԱՆ·

Յաւարտ սրբագրութեան սխալմանց բանիցս զբրս ուղղել փութացաք ըստ մերոմանն. և այս ոչ այնքան նուրբ և մանրամասն զննութեամբ՝ այլ գլխաւոր բանիցն սխալմանց և եթ ուղղութեամբ. ոչ յանձին մեր տկարութիւն հայեցեալ և յանձն ապաստան եղեալ, այլ բոլորով սրտիւ յաԾային ամենակարող զօրութիւն շնորհաց յուսացեալ, և նպաստ առեալ յաԾային սուրբ գրոց և հոգեբուղխ բանից սրբոց հարց եկեղեցւոյ նա մանաւանդ յիշեցաք զայն առաՀ բարոյական եթէ. «Լիք մեՀ և սխալմունք որպէս անսխալ զանձն կարծել. անձամբ զանձն խաբէ՝ որ դնէ 'ի մոի՝ թէ անհնար է ինքեան խաբիլ։ Պինդ ջատագով կարծեաց իւրեանց համարին լինել աթենաս. և այն զի բազում անգամ է լոկ ցնորք խօլական,. տար. առաՀ. նոյ. ի. գ։

Լրանի թէ զայս առաՀ բարոյական 'ի սիրտս և 'ի միտս մեր ունէաք գանձեալ շնորհիւ տեառն, որով ոչ երբէք համարձակէաք այնուհետև յանձն ապաստան լինել և սխալել 'ի դատողութիւնս մտաց մերոց և յարարողութիւնս գործոց։ Ա՛յլ 'ի կողմանէ ԱՀային բարերարութեան խրատէ մարգարէն երեմիա «Ա՛յսպէս ասէ տէր, մի՛ պարծեսցի իմաստունն յիմաստութիւն իւր, և մի՛ պարծեսցի հզօրն 'ի զօրութիւն, և մի՛ մեՀն 'ի մեՀութիւն

իւր։ Այլ յայն պարծեսցի՝ որ պարծիցին իմանալ և ճանաչել զիս, թէ ես եմ տէր, որ առնեմ զիւրաւունս և զողորմութիւնս և զարդարութի՛ի վրէ երկրի, և՛ ի նոսա՛ն են կամք իմ ասէ տէր։։ Թ. 23. 24։

Վասանօր յոյժ բարւոք լինի մեզ հոգևոր պաշտօնէիցս ուղղափառ եկեղեցւոյ քրիստոսի, եթէ օրինակ և վարդապետ ճշմարտութեան ունիցիմք զարբազան առաքեալն պօղոս. որ ասէ. «Այթէ պարծիլ ինչ պարտ իցէ՝ զտկարութիւն պարծեցայց. ՚ՁԾ հայր տեառն մերոյ յի՛սուսի՛ քրիստոսի՝ որ է օրհնեալ յաւիտեանս, զի ոչ ստեմ։։» Բ. Կորն. 30. 31։

Որ-բեմն արժանընդունակ մանթանօք առաքելապատիւ մեծի հայրապետին մերոյ սրբոյն գրիգորի լուսաւորչի՝ հայոցն ընդ անսահման մարդասիրական խնամաւ պաշտպանեսցէ զլրութիւն ազգիս. և որդին միածին յիսուս քրիստոս փրկիչ մեր զամենակալող զօրութիւն փրկութեան իւրոյ անպակաս արասցէ՝ ի հոգւոյ՝ ի մարմնոյ որդւոյ ուղղափառ սուրբ եկեղեցւոյս. և ճշմարիտ սուրբ հոգին աստուած ապաւորեսցէ զ՚մանարի՛ն շնորհս իմաստութեն և ճշմարտութեն՝ ի սիրտս և՛ ի միտս մեր, ապա միանակամ անբաժանելի՛ սուրբ երրորդութիւն արժանս արասցէ զմեզ՝ գնոյն ինքն օրհնել և փառաւորել, և յաւիտենական երկնից աքբայութեան ժառանգորդս առնել ամէն։

ՀԱՅԿ ԳՐԱԳԻՐ ՍՏԵՓԱՆ ԵՊԻՍԿՈՊԻ ՕՐԻՆԱՐԱՆԱՅՍ ԳՐԱՏՈՒՆ ԱԿԱԴԵՄԻԱ